

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ



**ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ
2021**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՀՏԴ 351.74
ԳՄԴ 67.401.213
Գ 602

***Տպագրության է երաշխավորել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի որոշմամբ***

Նախաձեռնող խումբ՝

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության
գեներալ-մայոր Մուշեղ Բաբայան,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ,
ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ Միսակ Մարկոսյան,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի
պետ, ոստիկանության մայոր, ի.գ.թ. Արտակ Մնացականյան,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի
և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ,
ի.գ.թ. Հռիփսիմե Խաչատրյան,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նախագահ
Սամվել Հակոբյան

Գ 602 Գիտական աշխատանքների ժողովածու 2021 / ՀՀ ոստիկանության
կրթահամալիր.- Եր.: Քոփի Փրինտ, 2021.- 142 էջ:

Գիտական աշխատանքների ժողովածուի մեջ ընդգրկվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ինչպես սովորողների, այնպես էլ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների հեղինակած գիտական հոդվածները:

Գիտական աշխատանքների ժողովածուն կարող է հետաքրքրել ՀՀ և արտասահմանյան երկրների բուհերի դասախոսներին և գիտությամբ զբաղվող ուսանողներին: Կարող է օգտակար լինել նաև ոստիկանական եւ այլ իրավապահ մարմինների ուսումնական հաստատություններին, պետական մարմիններին և այն անձանց, որոնք զբաղվում են աշխատության մեջ ներգրավված թեմաների ուսումնասիրությամբ:

ՀՏԴ 351.74
ԳՄԴ 67.401.213

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Այվազյան Արտակ

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՅՎԱԾ ԿԱՐԳԻ ԵՎ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 5

Բունիաթյան Գևորգ, Մկրտչյան Նազիկ

ՍԵՌԱՓՈԽ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ 12

Григорян Ануш Огсеновна

ДУХОВНО-НРАВСТВЕННЫЕ АСПЕКТЫ ВОСПИТАНИЯ
ПРОТИВОДЕЙСТВУЮЩИЕ ВЕРБОВКЕ МОЛОДЕЖИ И
РАСПРОСТРАНЕНИЮ ЭКСТРЕМИСТСКИХ ВЗГЛЯДОВ..... 25

Դավթյան Մելանյա

ԷՄԻԼՆ ՈՒ ՀԱՅՐՈՐԴԻՆ ՈՐՊԵՍ 18-ՐԴ ԴԱՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ
ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐՆԵՐ 37

Խաչատրյան Իգնատ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ
ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ 52

Карапетян Мариам Егишеевна

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ
ПРИСТУПНОСТИ ПОДРОСТКОВ В ИНТЕРНЕТ СЕТИ 66

Հակոբյան Հրաչյա

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ 76

Հակոբյան Միլենա

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԵՎ ԱՊԱՅՈՒՅՄԱՆ ԲԵՌԻ
(ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.. 82

Հակոբյան Սամվել

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ..... 88

Մանասերյան Քրիստինե

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ 102

Սահակյան Ալեքսանդր

ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 112

Սարգսյան Արթուր

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ 122

Տոնոյան Անժելա

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 130

ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱՑՎԱԾ ԿԱՐԳԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Այվազյան Արտակ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի սովորող

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2007 թվականի փետրվարի 2-ին ՀՕ-93-Ն ՀՀ օրենքով քրեադատավարական ոլորտում ներդրվեց արագացված կարգով դատական քննության (այսուհետ՝ Արագացված կարգ) ինստիտուտը՝ որպես ընդհանուր կարգով դատական քննությանն այլընտրանք: Դատական քննության արագացված կարգը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ քր.դատ.օր) նախատեսված է 9¹ բաժնում: Քր.դատ.օր.-ի 375¹ հոդվածի համաձայն՝ «Եթե մեղադրողը մեղադրական եզրակացությունում չի առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու մասին այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»: Դատական քննության արագացված կարգի ներմուծմամբ օրենսդիրը հետապնդել է մի շարք նպատակներ.

1. Բեռնաթափել կուտակված դատական գործերը և դատարաններին հնարավորություն տալ դատական ռեսուրսները կենտրոնացնել առավել բարդ գործերի ուղղությամբ,
2. Հանցանք կատարած անձանց խրախուսել համագործակցելու պետության հետ, որը նաև հնարավորություն կստեղծի հետքննության մարմինն և քննիչին առավել դյուրին ձևով բացահայտելու հանցագործության մյուս մասնակիցներին:

Նշված ինստիտուտը միանշանակորեն չընդունվեց ՀՀ իրականությունում, և մի շարք իրավաբաններ անընդունելի համարեցին նման վա-

րույթի կիրառումը՝ նշելով արագացված կարգի կիրառման հետևյալ բացասական կողմերը.

1. Նպաստում է սեփական անձի մեղավորությունը հաստատող ցուցմունքներ տալուն: Մեղքի բանակցության և արագացված կարգով դատական քննության դեպքում, որպես կանոն, ամբաստանյալը պետք է ավելի մեղմ պատիժ ստանալու դիմաց ինքնախոստովանական ցուցմունքի տեսքով ցուցմունք տա իր դեմ, խոստովանի հանցագործության կատարման մեջ կամ ընդունի իր մեղքը: Ավելի մեղմ պատժի խոստումը շահագրգռում է ամբաստանյալներին ընդունել իրենց ներկայացված մեղադրանքը: Ուստի մեղքի բանակցությունը և արագացված կարգով դատական քննությունը նպաստում է սեփական անձի մեղավորությունը հաստատող ցուցմունքներ տալուն, սահմանափակում լուրջություն պահպանելու իրավունքը և մեղադրողի վրայից հանում մեղավորությունն ապացուցելու պարտավորությունը (“burden of proof”):
2. Վնասում են անմեղներին և առաջացնում անարժանահավատ ինքնախոստովանական ցուցմունքներ:
 Մեղքի բանակցության և արագացված կարգով դատական քննության գործընթացներն անմեղ անձանց ճնշման են ենթարկում, որպեսզի նրանք խոստովանեն (ֆինանսական, անձնական կամ ընտանեկան պատճառներով և/կամ քրեական արդարադատության համակարգի նկատմամբ ունեցած վախի պատճառով) իրենց իրավունքներին և դատավարական երաշխիքներին հետամուտ լինելու փոխարեն:
3. Խոստովանող հանցագործների նկատմամբ անհարկի մեղմ վերաբերմունք է դրսևորվում: Ավելի մեղմ պատիժը հակասում է «ռետրիբուցիայի» սկզբունքին, աղավաղում ավելի երկար պատժի կանխարգելիչ նշանակությունը և շրջանցում օրենքով սահմանված պատժի համաչափության սկզբունքը:
4. Հասարակությունը կարծիք է ձևավորում, թե քրեական արդարադատության համակարգը չի պաշտպանում ո՛չ առանձին ամբաստանյալներին, ո՛չ ամբողջությամբ վերցրած հասարակությանը՝

արդարացի դատաքննությունից և հանցավորության դեմ պայքարից վեր դասելով համակարգի արդյունավետ աշխատանքը¹:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր օրենք չի կարող լինել կատարյալ, և տվյալ ինստիտուտի կիրառման արդյունավետությունը կախված է առկա խնդիրների լուծմամբ: Առաջին նկատառումը վերաբերում է քր. դատ. օր.-ի 375¹ հոդվածի առաջին մասին, մասնավորապես՝ պատիժ նշանակելուն: Այս հարցի առնչությամբ քրեական և քրեադատավարական ոլորտում առաջ եկան հակասություններ, քանի որ պատիժ նշանակելը ինքնին կարգավորվում է քրեական իրավունքի կողմից, և հարց է առաջանում, թե ինչու՞ է արագացված վարույթի դեպքում նման իրավասություն ստանձնել քրեական դատավարությունը: Հաշվի առնելով նման խնդիրների առաջացումը և այն հանգամանքը, որ և՛ քրեական օրենսգիրքը, և՛ քրեական դատավարության օրենսգիրքն ունեն հավասար իրավաբանական ուժ, ուստի հակասություններին վերջ տալու համար անհրաժեշտ է պատժի նշանակման հարցը լուծել հետևյալ ձևով: Պատժի նշանակման հարցը վերապահել միայն քրեական օրենսդրությանը, քանի որ ինքին պատժի նշանակումը հանդիսանում է քրեաիրավական ինստիտուտը, ինչը նույնպես ամրագրված է տվյալ օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածների համատեքստում: Հաջորդ հիմնախնդիրը վերաբերում է մեղադրյալի կողմից քաղաքացիական հայցը ընդունելուն: ՀՀ քր. դատ. օր. 375¹-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, եթե տվյալ գործով հարուցված է նաև քաղաքացիական հայց, և ամբաստանյալը (մեղադրյալը) կամ քաղաքացիական պատասխանողը ընդունում է այն, ապա դատարանը դատավճռով բավարարում է նաև քաղաքացիական հայցը, եթե այն չի հակասում օրենքին (այդ դեպքում անհրաժեշտ է նաև պարզել հայցի ընդունման կամավորությունը): Դատարանը գտնելով, որ հայցի ընդունումը հակասում է օրենքին կամ կամավոր չէ կամ վերաբերում է այլ անձանց իրավունքներին, հայցը թողնում է առանց քննության՝ քաղաքացիական հայցվորին բացատրելով քաղաքացիական դատավարության կարգով հայց ներկայացնելու նրա իրավունքը: Այսպիսով՝ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ քաղաքացիական հայցը չընդունելը չի բա-

¹ Տե՛ս **Ղամբարյան Ա., Պողոսյան Տ.**, «Դատական քննության արագացված կարգը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում», Երևան: «Ֆենոմեն» հրատ., 2008, էջ 19-20:

ցառում դատական քննության արագացված կարգի կիրառումը: Կարծում ենք, որ նշված կարգավորումը չի բխում արդարադատության արդյունավետության իրականացման սկզբունքից: Այդ սկզբունքը իրենից բովանդակում է այն, որ մեկ դատավարության արդյունքում պետք է լուծվեն հանցագործության և դրա հետևանքով պատճառված բոլոր հարցերը: Կարելի է արձանագրել, որ քր. դատ. օր.-ի 375¹ հոդվածի 6-րդ մասն այդ սկզբունքից շեղում ունի: ՀՀ Վճռաբեկ դատարանը այս հարցի հետ կապված իր դիրքորոշման մեջ նշել է, որ այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնցով ներկայացված քաղաքացիական հայցի առարկայի ծավալի մեջ ներառված գույքային վնասը համընկնում է մեղադրանքի ծավալի մեջ ներառված գույքային վնասի հետ, ներկայացված քաղաքացիական հայցն ամբաստանյալի կողմից լրիվ կամ մասնակի չընդունելը նշանակում է, որ նա լրիվ կամ մասնակի համաձայն չէ իրեն առաջադրված մեղադրանքի հետ: Հետևաբար, նման դեպքերում դատարանը ամբաստանյալի կողմից հայցի հետ չհամաձայնվելը պետք է գնահատի որպես առաջադրված մեղադրանքի հետ ամբաստանյալի կամ մեղադրյալի լրիվ կամ մասնակի անհամաձայնություն և դրա հիման վրա մերժի դատական քննության արագացված կարգ կիրառելու միջնորդությունը: Այլ խոսքով՝ այն դեպքում, երբ արագացված կարգով դատական քննության ժամանակ դատարանը պարզում է, որ ամբաստանյալը համաձայն չէ պատճառված վնասի բնույթի և չափի վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ առկա ենթադրության հետ դատարանը պետք է որոշում կայացնի արագացված դատական քննություն չկիրառելու և ընդհանուր կարգով դատաքննություն անցկացնելու մասին²: Կարելի է պնդել, որ նման պրակտիկայի շնորհիվ վերջնականապես կարգավորվեց և որոշակի ուժ հաղորդվեց տուժող կողմի դիրքերին:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ) որպես դատական քննության արագացված կարգի նոր մոդել՝ նախատեսված է համաձայնեցման վարույթը: Տեսական գրականության մեջ կարծիք կա, որ համաձայնեցման վարույթը զուտ անվանափոխում է դատական քննության արագացված կարգը³: Առաջարկում ենք

² Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.11.2012թ. թիվ ԵԿԴ/0219/01/11 որոշումը:

³ **Ղամբարյան Ա.**, Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները: Գիտագործնական ձեռնարկ: Երևան: «Աստղիկ գրատուն» հրատ., 2011, էջ-131:

հարաբերակցություն անցկացնել նշված ինստիտուտների միջև, որը միջոց է լուծելու առաջ եկած հակասությունները: Արագացված կարգի և համաձայնեցման վարույթի ընդհանրություններն են.

1. Նշված ինստիտուտները դատական քննության պարզեցված ձևեր են:
2. Թե՛ արագացված կարգի և թե՛ համաձայնեցման վարույթի կիրառման հիմքը մեղադրյալի կողմից առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելն է:
3. Երկու դեպքում էլ ապացույցների անմիջական հետզոտություն չի իրականացվում:
4. Նշված ինստիտուտների կիրառման նախաձեռնությունը երկու դեպքում էլ մեղադրյալի հայեցողությանն է, որը միջնորդության տեսքով ներկայացվում է դատարան:
5. Բոլոր դեպքերում դատարանը մերժում է վարույթների կիրառումը, եթե չեն պահնպանվել օրենքի որոշակի ձևական պահանջները:

Նշված ինստիտուտների տարբերություններն են.

1. Քր. դատ. օր.-ի 375¹ հոդվածի համաձայն՝ արագացված դատական քննություն կարող է իրականացվել այն հանցագործություններով, որոնց համար քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը, սակայն Նախագծի 458-րդ հոդվածին համապատասխան՝ համաձայնեցման վարույթ կարող է կրառվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների դեպքով:
2. Քր. դատ. օր.-ի 375² հոդվածի համաձայն՝ ամբաստանյալը կամ մեղադրյալը արագացված կարգով դատական քննություն անցկացնելու միջնորդություն կարող է ներկայացնել քրեական գործը դատարան ուղարկելու պահից մինչև դատաքննությունն սկսվելը, մինչդեռ համաձայնեցման վարույթի դեպքում մեղադրյալն այդպիսի միջնորդություն կարող է ներկայացնել նախնական դատալուսմաների փուլում:
3. Քր. դատ. օր.-ի 375¹ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝ արագացված կարգի կիրառման դեմ կարող են առարկել պետական մեղադրողը և տվյալ հանցագործության դեպքով ամ-

բաստանյալներից թեկուզ մեկը, իսկ քաղաքացիական հայցի առկայության դեպքում վարույթը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ մեղադրյալը չի ընդունում քաղաքացիական հայցը: Ի տարբերություն արագացված կարգի՝ դատարանը տուժողի նախաձեռնությամբ կարող է մերժել համաձայնեցման վարույթ կիրառելու միջնորդությունը, եթե առերևույթ հիմնավորվում է, որ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցված չէ (Նախագծի 458-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ), եթե մեղադրյալին մեղսագրվող արարքը ակնհայտորեն կատարվել է մեղադրյալ չհանդիսացող այլ անձի կողմից կամ նրա մասնակցությամբ (Նախագծի 461-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), եթե մեղադրյալին մեղսագրված արարքին տրված իրավական գնահատականն ակնհայտորեն չի համապատասխանում մեղադրանքի փաստական հանգամանքներին (Նախագծի 461-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), դատարանը չի ընդունում համաձայնության մասին արձանագրությունը և սահմանում է նոր արձանագրություն կազմելու և դատարան ներկայացնելու ժամկետ, եթե համաձայնեցված պատժատեսակը կամ պատժաչափը անօրինական է:

4. Կարելի է արձանագրել նաև այն փաստը, որ համաձայնեցման վարույթի դեպքում պատժի տեսակը և չափը դրված է կողմերի հայեցողությանը, ինչը արագացված կարգի դեպքում բացակայում է:

Այսպիսով՝ տեսական հարթությունում՝ արագացված կարգի և համաձայնեցման վարույթի շուրջ ստեղծված խնդիրներին լուծում տալու համար առաջարկում ենք առաջնորդվել վերը նշված հարաբերակցությամբ՝ հատկապես շեշտը դնելով նշված ինստիտուտների տարբերությունների վրա:

ВЗАИМОСВЯЗЬ УСКОРЕННОЙ И СОГЛАСОВАННОЙ ПРОЦЕДУР

Айвазян Артак Арсенович

Академия Образовательного комплекса

полиции РА, студент 4 курса юридического факультета

В этой статье рассматриваются несоответствия между ускоренной и согласованной процедурами. На основе изучения норм отечественного права, мнений известных ученых-юристов, в статье были выявлены разногласия, существующие между указанными процедурами. Автор попытался положить конец существующим спорам между этими институтами.

Ключевые слова: ускоренное судебное разбирательство, ускоренное производство, согласованное производство, эффективность правосудия, законодательство.

THE RELATIONSHIP BETWEEN THE ACCELERATED PROCEDURE AND THE AGREED PROCEEDINGS

Ayvazyan Artak

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

This article deals with the inconsistencies between the expedited procedure and the "agreed proceedings". In the article, by studying the domestic legal norms, the opinions of lawyer-scholars, the existing disagreements about them were revealed, and by drawing a parallels, the author tried to resolve the existing disputes between these institutions.

Key words: expedited trial procedure, expedited procedure, agreed proceedings, efficiency of justice, legislation.

ՍԵՌԱՓՈԽ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Բունիաթյան Գևորգ

Մկրտչյան Նազիկ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի 3-րդ խմբի սովորողներ

Վերջին ժամանակներում հասարակությունն էլ ավելի է իր ուշադրությունը սևեռել այնպիսի երևույթի վրա, ինչպիսին է տրանսսեքսուալիզմը և տրանսսեքսուալ անձինք: Տրանսսեքսուալիզմն առաջին անգամ հիշատակվել է դեռևս 19-րդ դարի վերջին Ռիխարդ Ֆոն Կռաֆթ-Էբինգի կողմից¹ (1886թ.), իսկ որպես հասկացություն՝ Մագնուս Գիռշֆելդի կողմից² (1910թ.): 1910թ-ից գրվել են մի շարք աշխատություններ, որոնցում ուսումնասիրվել է այս երևույթը, իսկ 1930թ-ին Դանիայում կատարվել է սեռափոխության առաջին վիրահատությունը. էյնար Վեգեները սեռափոխ եղավ և դարձավ կին՝ Լիլի Ելբա³: Առավել հայտնի սեռափոխության վիրահատություն էր 1962թ-ին Դանիայում կատարված սեռափոխության վիրահատությունը, երբ ազգությամբ ամերիկացի Ջորջ Յորգենսենը սեռափոխվեց և դարձավ Կրիստինա Յորգենսեն: Խորհրդային գիտնականներից այս հարցին է անդրադարձել Ա. Բելկինը⁴, ով կարծում էր, որ սեռափոխությունն այս անձանց համար մարդասիրական ակտ է, որը ոչ միայն ազատում է վերջիններիս տանջալից իրավիճակներից, այլ նաև օգնում է իրենց տեղը գտնել հասարակության մեջ:

1950-ական թվականներին ամերիկացի բժիշկ Գ. Բենյամինը տվել է տրանսսեքսուալիզմ տերմինը և սահմանել է այն գիտական տեսանկյու-

¹ **Крафт-Эббинг Р.**, Половая психопатия, с обращением особого внимания на извращение полового чувства: Пер. с нем. М., 1996, էջեր 289-328:

² https://ru.qwe.wiki/wiki/Magnus_Hirschfeld.

³ <https://birdinflight.com/ru/mir/kak-eto-vyglyadelo-pervye-operatsii-po-smene-pola.html>:

⁴ **Белкин А. И.**, Третий пол. Судьбы пасынков Природы. М., 2000, էջ 43, <http://www.drlev.ru/work/belkin.pdf>.

նից: Նա 1966թ-ին սահմանեց սեքսուալ կողմնորոշման սանդղակը, որի նպատակն էր տրանսֆեստիզմի և տրանսսեքսուալիզմի տարբեր տեսակների և ենթատեսակների դասակարգումը⁵:

I. Տրանսսեքսուալիզմը՝ պաշտոնական բժշկական փաստաթղթերում

Հարկ ենք համարում անդրադառնալ պաշտոնական փաստաթղթերում տրանսսեքսուալիզմի մեկնաբանմանը:

Հիվանդությունների միջազգային դասակարգիչ

Առաջին հերթին ուսումնասիրենք հիվանդությունների միջազգային դասակարգիչը (այսուհետ՝ ՀՄԴ), որը համարվում է ղեկավար փաստաթուղթ և առողջապահության բնագավառում օգտագործվում է որպես բժշկական վիճակագրության և դասակարգման հիմք: Այն հաստատվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից և ենթարկվում է վերանայման յուրաքանչյուր 10 տարի⁶:

Առաջին անգամ տրանսսեքսուալիզմը ներառվել է ՀՄԴ 9-ում 1975թ-ին հոգեկան խանգարումներ դասի սեքսուալ խանգարումներ բաժնում հետևյալ ծածկագրով՝ 302.5⁷: 1990թ.-ին ընդունվեց ՀՄԴ 10-ը, որտեղ տրանսսեքսուալիզմը ներառված է հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ դասի, **անձի և վարքի խանգարումներ հասուն տարիքում խմբում՝ կրելով F64.0 ծածկագիրը**⁸: Համաձայն ՀՄԴ 10-ի՝ **տրանսսեքսուալիզմը** հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկությունն է, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին: Ի տարբերություն ՀՄԴ 10-ի՝ ՀՄԴ 11-ը, որն ընդունվել է 2019թ-ի մայիսի 25-ին և ուժի մեջ է մտնելու 2022թ-ի հունվարի 1-ից, ցուցաբերել է այլ մոտեցում՝ ներառելով տրանսսեքսուա-

⁵

⁶ <https://mkb-10.com/>

⁷

⁸

լիզմը սեքսուալ առողջությանը վերաբերող դասում, այս անգամ նոր անվանումով՝ գենդերային անհամապատասխանություն (HA60)⁹:

Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկը

Այս հարցին անդրադարձած մեկ այլ կարևոր բժշկական փաստաթուղթ է Հոգեկան խանգարումների ախտորոշիչ և վիճակագրական ձեռնարկը (այսուհետ՝ DSM), որը մշակվում և հրապարակվում է Ամերիկյան հոգեբուժների միության կողմից: 1980թ-ին գենդերային ինքնության խանգարումն ամրագրվեց DSM 3-ում, որը վերաբերում էր տրանսսեքսուալներին և ներառված էր այն հիվանդությունների գլխում, որոնք հանդիպում են մանկության և դեռահասության տարիքում: 1987թ-ին ընդունվեց DSM-3-R-ը¹⁰, որը գենդերային ինքնության խանգարումը փոխարինեց տրանսսեքսուալիզմ տերմինով: DSM 4-ում¹¹ տրանսսեքսուալիզմ տերմինը փոխարինվեց դեռահասների և մեծահասակների գենդերային ինքնության խախտում տերմինով՝ ներառվելով սեքսուալ խանգարումների գլխում: Եվ ահա վերջին փոփոխություններով DSM 5-ում¹² (2013թ-ին) գենդերային ինքնության խանգարումը փոխարինվեց գենդերային դիսֆորիայով: Այս դեպքում դասակարգման հիմքում դրվեց ոչ թե ինքնությունը, այլ այն անհարմարությունները, որոնք կրում են տրանս մարդիկ, երբ իրենց կենսաբանական սեռը չի համապատասխանում իրենց կողմից ընդունվող սեռին:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ գիտության ու բժշկության զարգացումը հնարավոր դարձրեց սեռափոփոխությունն ինչպես վիրահատական, այնպես էլ հորմոնալ ճանապարհով: Եթե 20-րդ դարի վերջում կատարված գիտական և բժշկական հետազոտություններում տրանսսեքսուալիզմը հոգեկան կամ վարքի խանգարում էր, ապա հետագա հետազոտությունների արդյունքում դուրս մղվեց հոգեկան խանգարումների ցանկից և դասվեց սեքսուալ առողջության խանգարման շարքին:

⁹ <https://www.who.int/ru/news-room/spotlight/international-classification-of-diseases>:

¹⁰ https://en.wikipedia.org/wiki/Classification_of_transsexual_and_transgender_people:

¹¹ http://www.genderpsychology.org/transsexual/dsm_iv.html:

¹² https://en.wikipedia.org/wiki/Classification_of_transsexual_and_transgender_people:

II. Տրանսսեքսուալիզմը ՀՀ իրավական ակտերում

Անդրադառնանք տրանսսեքսուալիզմի մեկնաբանությանը Հայաստանի Հանրապետությունում: Ներկայումս ՀՀ-ում գործում է ՀՄԴ-10-ը, որը հաստատվել է 2005թ-ին, ավելին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ-ի սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանով¹³ սահմանվել է հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչը՝ ըստ որի սեռական նույնականացման խանգարումներ բաժնում ներառված է տրանսսեքսուալիզմը (F64): Այն սահմանված է հետևյալ կերպ՝ հակառակ սեռի կերպարով ապրելու և շրջապատի կողմից ընդունվելու ցանկություն, որը սովորաբար ուղեկցվում է սեփական անատոմիական կառուցվածքից և սեռային պատկանելությունից դժգոհ լինելու զգացումով: Հիվանդը ցանկանում է վիրահատվել կամ ստանալ հորմոնային բուժում, որպեսզի հնարավորինս համապատասխանի նախընտրած սեռին: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ ԱՀԿ-ի կողմից հաստատված դասակարգչում և ՀՀ-ում ներպետական դասակարգչում տրված տրանսսեքսուալիզմի սահմանումները նույնական են:

Ինչպես արդեն նշել էինք, սեռափոխությունը հնարավոր է կատարել 2 տարբերակով՝ հորմոնալ և վիրահատական: ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում սեռափոխության վիրահատության իրականացման հնարավորություն, ինչպես նաև ուղղակիորեն չի արգելում այդպիսի վիրահատական միջամտություն կատարելը: Համաձայն 1996թ-ի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»¹⁴ ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը և կառուցվածքը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Վերոնշյալ ցանկն ամրագրված է ՀՀ կառավարության՝ «ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպա-

¹³ ՀՀ էկոնոմիկայի նախարարի թիվ 871-Ն «Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Հիվանդությունների և առողջության հետ կապված խնդիրների վիճակագրական դասակարգիչ» հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2005թ.-ի մարտի 31-ի 67-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ընդունված 19.09.2013, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=86263>:

¹⁴ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 04.03.1996 <https://www.arlis.am/documentView.aspx?docID=104958>:

սարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» 2008թ-ի մարտի 27-ի թիվ 276-Ն որոշմամբ¹⁵: Այս ցանկում չի նշվում ո՛չ սեռափոխության վիրահատության, ո՛չ էլ վերջինիս համար անհրաժեշտ հորմոնաթերապիայի մասին: Թիվ 276-Ն որոշմամբ սահմանվող ցանկում, որպես նեղ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում, նշված են վիրաբուժության մի քանի տեսակներ, որոնք չեն ներառում սեռափոխությանն ուղղված վիրահատական միջամտություն: Ինչ վերաբերում է արդեն իսկ սեռը փոխած անձանց, ապա նրանց հիմնական խնդիրները կապված են վիրահատություն կատարելուց հետո արտաքին տեսքի և անձը հաստատող փաստաթղթերում նշված տվյալների անհամապատասխանության հետ: Որոշ տրանսգենդեր անձանց մոտ, այնուամենայնիվ, սեռափոխության վիրահատությունից հետո փաստաթղթային խնդիրների լուծման հաջող փորձեր գրանցվել են:

2004թ-ի դեկտեմբերի 8-ին ընդունված «Քաղաքացիական կացության ակտերի մասին»¹⁶ ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի «գ» կետի համաձայն՝ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը կազմվում է հետևյալ դեպքերում՝ գ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական կազմակերպությունը տվել է սեռի փոփոխության մասին սահմանված ձևի փաստաթուղթ: Սակայն որևէ իրավական ակտում նշում չկա ինչպես «օրենսդրությամբ սահմանված կարգի», այնպես էլ «սահմանված ձևի փաստաթղթի» մասին:

«Բնակչության պետական ռեգիստրի մասին»¹⁷ ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ռեգիստրում մշակվող անձնական տվյալներից է անձի սեռը, որը փոփոխելու դեպքում անձնական տվյալների փոփոխության հիմքով նոր անձնագիր ստանալու համար անձը դիմում է Անձնագրային

¹⁵ «ՀՀ-ում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման տեսակների ցանկը սահմանելու մասին» կառավարության թիվ 276-Ն որոշում՝ ընդունված 27.03.2008, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=69784>:

¹⁶ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 08.12.2004, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69107>:

¹⁷ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 24.09.2002, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=75963>:

և վիզաների վարչություն՝ ներկայացնելով «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ակտի փոփոխված գրառման հիման վրա տրված նոր վկայականը (անձնական տվյալների փոփոխման դեպքում՝ նոր ծննդյան վկայականը) կամ օրենքի 70-րդ հոդվածի առաջին մասի «գ» ենթակետի հիմքով ՔԿԱԳ մարմնի եզրակացության հիման վրա փոփոխված ակտը:

III. Օտարերկրյա պետությունների փորձ

Հետազոտության լրիվությունը պահպանելու նպատակով ուսումնասիրենք արասահմանյան որոշ երկրների օրենսդրությունը տվյալ հարցի վերաբերյալ:

Ռուսաստանի Դաշնություն:

ՌԴ-ում սեռափոխության կարգը կարգավորվում է առողջապահության նախարարության կողմից սահմանված «բժշկական հաստատության կողմից սեռափոխության փաստը գրանցելու մասին» N850 հրամանով: Համաձայն այդ հրամանի՝ սեռափոխության փաստը հավաստող տեղեկանքը տրվում է բժշկական հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի անդամներն են՝ հոգեբույժը, հոգեբանը և բժիշկ-սեքսուոլոգը: Առանց սեռափոխության մասին տեղեկանքի ՔԿԱԳ մարմինները փոփոխություններ չեն կատարում: «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Դաշնային օրենքի (N^o 143-Փ3)¹⁸ 70-րդ հոդվածի համաձայն (ընդունված 15.11.1997թ.)՝ քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում կամ փոփոխություն իրականացվում է ՔԿԱԳ մարմնի կողմից նաև այն դեպքում, երբ բժշկական հաստատության կողմից տրվել է սեռափոխության վերաբերյալ սահմանված ձևի փաստաթուղթը:

Բելառուսի Հանրապետություն

Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է սեռի փոփոխությունը, ըստ որի դա սեռի փոփոխությունն է հորմոնալ և (կամ) վիրահատական ճանապարհով: Տվյալ ոլորտի բժիշկները, հաստատելով

¹⁸ Федеральный закон РФ «Об актах гражданского состояния», принят 22.10.1997, <http://pravo.gov.ru/proxy/ips/?searchres=&bpas=cd00000&intelsearch=%CE%E1+%E0%EA%F2%E0%F5+%E3%F0%E0%E6%E4%E0%ED%F1%EA%EE%E3%EE+%F1%EE%F1%F2%EE%FF%ED%E8%FF&sort=-1:>

«տրանսսեքսուալիզմ» ախտորոշումը, վերջինիս տալիս են հատուկ փաստաթուղթ՝ սեռի փոփոխության անհրաժեշտության մասին որոշում՝ ՔԿԱԳ ներկայացնելու նպատակով: Հանձնաժողովը պացիենտին փաստաթղթերի փոփոխման գործում ցուցաբերում է աջակցություն: Անձը, որը փոխել է անձնագրային սեռը ոչ շուտ, քան 6 ամիս անց, անձնագրային սեռի փոփոխությունից հետո կարող է ենթարկվել սեռի փոփոխության վիրահատության՝ հանձնաժողովի որոշման հիման վրա: Այս ժամկետը նախատեսված է, որպեսզի անձը ժամանակ ունենա հարմարվելու իր նոր կարգավիճակին:

IV.Քրեական պատասխանատվության առանձնահատկությունները

Իսկ ինչպե՞ս վարվել, երբ սեռափոխ անձը կատարում է հանցանք: Այս հարցը պետք է դիտարկել երկու տեսանկյունից.

1. անձը սեռափոխվում է մինչև հանցանք կատարելը,
2. անձը սեռափոխ է լինում հանցանք կատարելուց հետո:

Երբ անձը սեռափոխվում է մինչև հանցանք կատարելը, ապա այս պարագայում մենք խնդրի ենք բախվում այն ժամանակ, երբ անձը կատարել է սեռափոխման վիրահատությունը, սակայն պաշտոնական փաստաթղթերում դեռ փոփոխություններ չեն կատարվել: Փաստաթղթային տվյալների չփոփոխումը բերում է նրան, որ պատիժ իրականացնող մարմինը չի կողմնորոշվում կանանց թե՛ տղամարդկանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում պատժի կրումն իրականացվի: Արարքի որակման հարցում մենք չենք բախվում խնդիրների, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի¹⁹ 6-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից կամ անձնական կամ սոցիա-

¹⁹ ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 18.04.2003, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=5>:

լական բնույթի այլ հանգամանքներից: Խնդիր կարող է առաջանալ միայն ՀՀ քրեական օերնսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունն իրականացնելու դեպքում, եթե արարքը կատարելիս անձը եղել է արական սեռի, իսկ պատասխանատվության ենթարկելիս՝ իգական սեռի ներկայացուցիչ: Տվյալ դեպքում առաջնորդվելով հանցանքը կատարելու պահին ՀՀ քրեական օերնսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ լինելու հանգամանքով՝ նա կենթարկվի պատասխանատվության, սակայն պատիժը կրելու համար կտեղափոխվի «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ հաշվի առնելով փաստաթղթերում նշված սեռը:

Երկրորդ դեպքում անձը կատարում է հանցանքը և միայն դրանից հետո է սեռափոխ լինում: Ուսումնասիրելով արտասահմանյան դատական գործերը՝ կցանկանայինք անրադառնալ հետևյալ դատական գործին: Դատական պրակտիկայում նմանտիպ դեպք է գրանցվել 2004թ-ին Բուլղարիայում: Սրեդկո Իչկովը (տղամարդ) կատարել էր գողություն, որի համար ձերբակալվել էր իրավապահ մարմինների կողմից: Նրա մեղավորությունը հաստատող ապացույցներն անհերքելի էին, սակայն այն ժամանակահատվածում (12 ամսվա ընթացքում), երբ Սրեդկոն գրավի դիմաց ազատության մեջ էր, նա կատարում է վիրահատություն, որի արդյունքում փոխում է իր սեռը՝ դառնալով կին՝ Ալբելնա Միխաիլովա: Դրա հիման վրա դատարանը վճռում է, որ սեռի փոփոխության արդյունքում առաջանում է նոր անձ, ով հետևաբար չպետք է պատասխանատվություն կրի այն արարքների համար, որը կատարել է «իր նախորդը»: Բուլղարիայի դատարանի կայացրած դատավճիռը խիստ վիճելի է, քանի որ սեռի փոփոխությունը չի հանգեցնում անձի ներքին - որակական հատկանիշների փոփոխմանը: Փաստացի ֆիզիկական անձը, սեռափոխ լինելով, մի կենսաբանական հատկանիշից փոխվում է այլ հատկանիշի: Չկան հիմքեր իրավունքների և պարտականությունների դադարման համար, և այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ իրավունքները և պարտականություններն անփոփոխ են, և դրանք անքաքտելիորեն կապված են տվյալ անձի հետ: Որպես կանոն, այսպիսի փոփոխությունները չեն

ազդում մարդու բարոյական կերպարի, սկզբունքների, իրավագիտակցության և իրավահպատակության վրա:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ անձը ենթակա է քրեական պատասխանատվության միայն անձանք իր կատարած հանցանքի համար, այսինքն՝ սեռափոխությունից հետո անձի իրավունքները և պարտականությունները մնում են նույնը: Հետևաբար, եթե նա կատարել է հանցանք, և նրա մեղքը հաստատվել է, ապա սեռափոխության վիրահատությունը չի կարող հիմք հանդիսանալ նրան քրեական պատասխանատվությունից ազատելու համար: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում հստակ սահմանված են քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերը, որոնց մեջ բացակայում է տվյալ հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելը:

Ամփոփելով այսքանը՝ կցանկանայինք ևս մեկ անգամ ընդգծել այն փաստը, որ սեռափոխության արդյունքում նոր անձ չի ծնվում, և մինչ սեռափոխ լինելն իր կողմից կատարված հանցագործությունների համար վերջինս պետք է պատասխանատվություն կրի՝ անկախ սեռափոխ լինելու հանգամանքից: Դատարանները նմանատիպ գործեր քննելիս պետք է ուշադրություն դարձնեն ոչ թե անձի սեռին, այլ նրա դիտավորությանը, իսկ անձի սեռին ուշադրություն պետք է դարձվի այն ժամանակ, երբ նշանակվում է պատիժը:

V. Խնդիրները պատժի կրման ընթացքում

Պրակտիայում կարող են հանդիպել այնպիսի իրավիճակներ, երբ հարց է ծագում անձին կանա՞նց թե՞ տղամարդանց համար նախատեսված քրեակատարողական հիմնարկ ուղարկել: Առաջին հայացքից թվում է, թե որևէ խնդիր առկա չէ. պետք է հիմք ընդունել անձնագրում նշված սեռը: Իսկ ինչպես՞ վարվենք այն դեպքում, երբ անձը սեռափոխվել է, սակայն դեռ չի փոխել իր անձնագրային տվյալները կամ չի փոխել սեռը, բայց իրեն հակառակ սեռի ներկայացուցիչ է համարում: Նմանատիպ իրավիճակ է տեղի ունեցել 2015թ-ին մոսկվայաբնակ Դմիտրի Կոժուկովի մասնակցությամբ, ով ավելի հայտնի է նաև որպես Ալինա Դևիս: Խնդիրը կայանում էր նրանում, որ ոստիկանները չէին կարողանում որո-

շել կանա՞նց թե՛ տղամարդկանց համար նախատեսված քննչական մեկուսարանում տեղավորել նրան (վերջինս կասկածվում էր ապօրինի կերպով թմրամիջոց պահելու մեջ): Անձնագրային տվյալներով նա արական սեռի ներկայացուցիչ էր, սակայն արտաքննապես նույնացվում էր որպես կին: Իրավապահները երկմտում էին. Ալինաին ուղարկելը տղամարդկանց մեկուսարան կհանգեցներ նրա իրավունքների խախտմանը և հավանական էր՝ ավարտվեր նրա նկատմամբ տարաբնույթ ոտնձգություններ իրականացնելով: Կանանց համար նախատեսված մեկուսարան ուղարկելու համար չկար իրավական հիմք, քանի որ անձնագրով նա արական սեռի ներկայացուցիչ էր: Նրա կարգավիճակի իրավական որոշակիության բացակայության պատճառով նա ազատ է արձակվել և խափանման միջոց էր կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Մեկ այլ օրինակ. 2015թ-ի աշնանը Մեծ Բրիտանիայում տեղի ունեցած դեպքն է: Դատարանը 26-ամյա տրանսգենդեր Տառա Հադսոնի (տղամարդ) նկատմամբ նշանակել էր ազատազրկում, որը նա պետք է կրեր տղամարդկանց համար նախատեսված ազատազրկման վայրում: Չնայած նրան, որ ամբաստանյալն արտաքննապես կին էր, դատարանը որոշել էր առաջնորդվել բացարձակապես անձնագրային տվյալներով: Բժշկական փորձաքննություն չէր իրականացվել: Նրա իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ազատազրկման վայրի վարչակազմի աշխատակիցները ստիպված էին լինում փոխել օրվա կանոնակարգը՝ նրան առանձնացնելով մենախցում: Արդյունքում, որոշակի ժամանակ անց պատիժը կրելով, նա տեղափոխվեց կանանց համար նախատեսված ազատազրկման վայր:

Ենթադրվում է, որ տրանսգենդեր անձանց համար քրեակատարողական հիմնարկի ընտրությունը ՀՀ-ում պետք է իրականացվի՝ ելնելով նրանց անձնագրում նշված սեռից, սակայն եթե այդ անձը դեռ չի փոխել անձնագիրը, կամ անձնագրային և փաստացի/ կենսաբանական սեռերը չեն համապատասխանում, քրեակատարողական հիմնարկում այդ անձը պետք է պահվի մեկուսի՝ իր անձնական անվտանգությունից ելնելով, քանի որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածը, ի թիվս անջատ պահելու այլ պայմանների, նախատեսում է, որ ուղղիչ հիմնար-

կում անջատ է պահվում դատապարտյալը, որի կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում մյուս դատապարտյալներից՝ ուղղիչ հիմնարկի վարչակազմի որոշմամբ: Եթե այս հիմքերը բացակայում են, ապա տրանսգենդեր դատապարտյալին մեկուսացված պահելն անհնարին է:

Ելնելով վերագրյալից՝ կարող ենք փաստել՝

1. Կենսաբանական սեռի փոփոխման արդյունքում նոր անձ չի ձևավորվում և մինչ սեռափոխությունը կատարած հանցանքի համար անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվություն, եթե նրա մեղքն ապացուցված է:
2. Անձնագրային սեռի փոփոխություն պետք է անհրաժեշտ պայման դառնա սեռափոխության վիրահատություն կատարելու համար՝ որոշակիություն ձևավորելով այդ անձի մասնակցությամբ տարբեր իրավահարաբերություններում:
3. Տրանսսեքսուալիզմը, համարվելով վարքի խանգարում, չի ազդում անձի գիտակցական կամ կամային հատկանիշների վրա, հետևաբար այն չի կարող դատարանի կողմից դիվել ո՛չ ծանրացնող, ո՛չ էլ մեղմացնող հանգամանք:

Հաշվի առնելով այս ամենը՝ առաջարկում ենք, որ.

1. Դատարանը տրանսգենդեր անձանց մասնակցությամբ գործեր քննելիս ոչ միայն հաշվի առնի նրանց անձնագրային սեռը, այլ նաև վերջիններիս արտաքին տեսքը, նրանց առօրյան և իր կողմից ընդունված սեռային պատկանելիությունը՝ համապատասխան ձևակերպումներ տալով դատական ակտում: Նպատակահարմար ենք համարում դատահոգեբանական փորձաքննության նշանակումը, որն առավել պարկերավոր կբացահայտի անձի հոգեբանական վիճակը՝ մասնավորապես իր սեռային կողմնորոշումը:
2. Բացառել սեռափոխության վիրահատությունը, երբ անձը գտնվում է քրեական հետապնդման մեջ: Սա ուղղված կլինի նրան, որ սեռափոխ լինելով՝ անձը չխուսափի քրեական պատասխանատվությունից, քանի որ անձի արտաքին տեսքի փոփոխությունը գրեթե անհնար կդարձնի նրա հայտնաբերումը:

3. Պատժի կատարման վայրն ընտրելիս առաջնորդվել անձնագրային սեռով, իսկ անհրաժեշտության դեպքում դատապարտյալ այդ անձի անվանգրությունն ապահովել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի շրջանակներում:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ НАКАЗАНИЯ И УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЦ, СМЕНИВШИХ ПОЛ

Буниятян Геворг Самвелович, Мкртчян Назик Феликсовна

Студенты 4-го курса юридического факультета

Академии Образовательного комплекса полиции РА.

В последнее время в СМИ стали часто появляться материалы, посвящённые транссексуалам, их жизни и социальным проблемам, которые у них возникают. Настоящая статья имеет целью обозначить проблему определения пола лица с точки зрения назначения уголовного наказания и выбора вида исправительного учреждения. Проблема является актуальной в отношении лиц, страдающих расстройством половой идентификации. Был сделан вывод о том, что нарушение полового самосознания встречается и на фоне полного психического равновесия, т.е. не влечёт невменяемость, а, соответственно, и не исключает уголовную ответственность. Таким образом, авторы приходят к выводу, что независимо от пола данного лица на момент совершения им противоправного деяния, транссексуал может быть привлечен к уголовной ответственности за совершённое им преступление.

Ключевые слова: право, транссексуализм, смена пола, наказание, уголовная ответственность, пол

ON SOME ISSUES REGARDING THE PUNISHMENT AND CRIMINAL LIABILITY OF PERSONS WHO HAVE CHANGED THEIR SEX

Buniatyan Gevorg, Mkrtchyan Nazik

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

Recently, the media has largely been discussing issues about transsexuals, their lives and the social problems they face. The current article sheds light upon the

statement of gender identification while enacting criminal punishment and choosing a correctional facility. This issue especially concerns people with gender orientation disorder. In conclusion, it has been assumed that violation of sexual consciousness is also opposed to the background of complete mental equilibrium, but it does not necessarily attract insanity and, respectively, it doesn't exclude criminal liability. Thus, the authors come to a conclusion that the transsexual person can be brought to trial for the crime committed by him irrespective of his whereabouts at the time of the commitment of an illegal act.

Key words: *Law, transsexualism, gender reassignment, punishment, criminal liability, gender.*

ДУХОВНО-НРАВСТВЕННЫЕ АСПЕКТЫ ВОСПИТАНИЯ, ПРОТИВОДЕЙСТВУЮЩИЕ ВЕРБОВКЕ МОЛОДЕЖИ И РАСПРОСТРАНЕНИЮ ЭКСТРЕМИСТСКИХ ВЗГЛЯДОВ

Григорян Ануш Огсеновна

*Старший преподаватель кафедры обществоведческих
дисциплин и психологии Образовательного комплекса
полиции РА, майор полиции*

*«Из всех творений самое прекрасное —
получивший прекрасное воспитание человек».*

Эпиктет

Демокрит утверждал, что «результатом воспитания должен быть нравственный человек, умеренный во всём, действующий в соответствии с общественным долгом». Одной из концепций процесса воспитания в Древней Греции поддерживалось рассмотрение человека не самого по себе, а только в отношении его к государству. Никто не мог позиционировать себя вне государства, в поддержание благосостояния которого он вкладывал всего себя, т.к. получал обратную связь – гарантию своей жизни.

В этой статье мы говорим об актуальности проблемы духовно-нравственного воспитания, т.к. она обусловлена особенностями жизни современного человека. Он живёт и развивается среди множества положительно и отрицательно воздействующих на него разнообразных источников (средства массовой информации, коммуникации, неординарные события в различных частях света, природные катаклизмы и т.п.), которые постоянно влияют на неокрепший интеллект и чувства молодого человека, на его формирующуюся сферу, нравственность.

Недаром говорят, что духовное единство народа и объединяющие моральные ценности – это такой же важный фактор развития, как политическая и экономическая стабильность. Ведь общество лишь тогда способно ставить и решать масштабные национальные задачи, когда у него есть общая система нравственных ориентиров. В числе таких

ориентиров можно отметить такие, как духовность и нравственность – ведь они считаются базовыми характеристиками личности, проявляющимися в деятельности и поведении человека. Эти качества проявляются в уважении общечеловеческих ценностей. Человек, уважающий нормы нравственности, придерживается определенных духовных ценностей и целей, а духовность приходит к человеку через литературу, искусство, народную мудрость, обычаи, культурные традиции, науку и образование. Духовно богатый человек всегда выделяется среди других, его стремление к духовным ценностям помогает легко преодолеть жизненные преграды и жить в гармонии с обществом и природой.

В этой связи, нужно отметить, что культура как совокупность и единство различных ценностей ведет людей к духовной свободе. Духовные ценности наполняют смыслом жизни каждого и могут открыть дорогу в будущее. Общество, которое ценит духовность, ждет большое будущее, а это будущее стоит за следующим поколением. Исполнок веков существует одна простая истина: «За молодежью будущее человечества», а поскольку молодежь – это люди от 14 до 30 лет, то значит, что проблемы молодого поколения – это общечеловеческие проблемы. В этом контексте, многие представления современной молодежи о некоторых вещах и вопросах могут удивить и шокировать старшее поколение. Это касается, прежде всего, уровня культуры, правил поведения в обществе, правил этикета. Отсюда возникает вопрос и старшего поколения, почему неизвестны такие простые истины и как можно этого не знать?

Сама по себе, молодёжь – это специфическая социально-демографическая группа в структуре общества, выделяемая на основе определенных, присущих только ей характерных однородных признаков: возраст, духовный мир, интересы, социальные ценности, устремления, поступки, характер поведения. Они являются активными участниками как социальных взаимоотношений, так и, на определенных этапах своего становления и в определенной среде, выполняют роль объекта или субъекта общественного воздействия.¹

¹ Международный журнал прикладных и фундаментальных исследований. 2016.- /№1- ц. 275-277.

Молодежная среда в силу своих социальных характеристик и остроты восприятия окружающей обстановки является той частью общества, в которой наиболее быстро происходит накопление и реализация негативного протестного потенциала, а также она, в силу ряда факторов, является той социальной группой, которая наиболее восприимчива к радикально-националистическим и ксенофобским идеям и настроениям. Зачастую, некритическое восприятие молодыми людьми сообщений некоторых средств массовой информации и других источников, отсутствие конструктивной гражданской позиции и возможность достаточно открыто выражать националистические взгляды через, так называемые, субкультурные каналы может способствовать перерастанию обычной бытовой ксенофобии в источник агрессии и открытого расистского насилия. В этой связи, сегодня особенно актуальной является проблема духовно-нравственного воспитания молодежи, так как в современном мире человек живет и развивается, окруженный множеством разнообразных источников сильного воздействия на него как позитивного, так и негативного характера. Нужно отметить, что этими источниками, в первую очередь, являются средства массовой коммуникации, со стороны которых ежедневно обрушивается огромный поток информации об окружающей среде на еще неокрепший интеллект и чувства молодого человека, на его формирующуюся сферу нравственности. Следовательно, воспитание и развитие у современной молодежи нравственности и высокой культуры является одной из важнейших задач в процессе становления личности.

Духовно-нравственное воспитание начинается с рождения человека и сопровождает его всю жизнь, через общение, трудовую деятельность, повседневные дела — делая человека более совершенным. У молодого поколения в настоящее время наблюдается потеря основного мотива развития личности - развитие духа. Необходимо признать, что в становлении мировоззрения у большинства молодых людей точка зрения о вероисповедании достаточно точно не определена. Высокий уровень образования не всегда может обеспечить значительного показателя духовно-нравственной воспитанности. Воспитанность - это черта личности, которая определяет именно в ежедневном поведении, его отношении к

окружающим на основе почтения и благосклонности к каждому субъекту и личности.

Что касается духовно-нравственного воспитания, то - это прежде всего, процесс формирования:

- *нравственных чувств /совести, долга, веры, ответственности, гражданственности, патриотизма/*
- *нравственного облика / терпение, милосердие, кротость, незлобивость/,*
- *нравственной позиции /способности к различению добра и зла, проявлению самоотверженной любви, готовности к преодолению жизненных испытаний/,*
- *нравственного поведения / готовности к служению людям и Отечеству, проявлению духовной рассудительности.*

Особое внимание нужно уделить и содержанию духовно-нравственного воспитания, которое предполагает:

- *формирование чувства долга и ответственности за свою страну и свое поведение,*
- *потребность в труде, гуманное отношение к окружающим,*
- *бережное отношение к природе,*
- *законопослушность,*
- *формирование социально одобряемых взглядов и отношений в семейной жизни,*
- *выработка коммуникативных навыков, навыков культуры общения,*
- *формирование потребности и умений в самопознании и самовоспитании и др.*

Что касается духовно-нравственного воспитания молодежи, то оно является первостепенной задачей современного образования, ведь образование представляет собой одну из основных составляющих социального заказа для образовательной системы. Духовно-нравственное воспитание- это аспект воспитания, имеющий своей целью усвоение и претворение в практическое действие высших духовных ценностей. Значимость духовно-нравственного воспитания подрастающего поколения особенно актуальна в современный период в связи с утратой людьми

нравственного смысла собственной жизни, следствием чего является растущая агрессивность, некоторая инфантильность молодых людей, бездуховность. В последнее время наблюдается дефицит именно нравственных ценностей, пренебрежение моралью, этическими нормами, и это становится повсеместным явлением.

Важно отметить, что в самом воспитательном процессе происходит дифференциация систем ценностей, принятие традиционных или вырабатывание новых. Духовность, в общем смысле, определяется как совокупность проявлений духа в мире и человеке. Что касается социологии, культурологии и публицистики, то здесь духовностью часто называют объединяющие начала общества, выражаемые в виде моральных ценностей и традиций, накопленных, как правило, в религиозных учениях и практиках, а также в художественных образах искусства. В рамках такого подхода установление духовности происходит в процессе просвещения идей. Например, известный немецкий философ **Иммануил Кант считал, что «нравственное воспитание- это создание такого настроения, под влиянием которого избирались бы лишь добрые цели».**²

Здесь важно упомянуть о тех факторах, которые влияют на становление нравственных качеств. Итак, с одной стороны, научно-технический прогресс, социальные изменения в мире, увеличение числа и разнообразия взаимоотношений между людьми — все это заставляет говорить о повышенных требованиях и к моральной зрелости, и к самостоятельности человека. С другой стороны, нравственное становление человека представляет собой чрезвычайно сложный и многоликий процесс, где решающую роль играет само общество. Формирование нравственных качеств происходит именно в социальной среде, в его реальных действиях и поступках и в той внутренней работе, которая закрепляется вокруг них и в них же выплескивается.

Стать нравственным — означает стать истинно мыслящим, т. е. способным самостоятельно найти принцип, который объединил бы всю совокупность этических требований, в котором все многогранные и противоречивые жизненные впечатления влились бы в гармонию. Поиск

² М. В. Головушкина, «Формирование основ духовно-нравственного воспитания», Гуманитарные науки. Педагогика, №2[22], 2012, [18, с.112].

такого внутреннего стержня обусловлен собственной активностью и самостоятельно установленными нравственными убеждениями.

Духовно-нравственное воспитание — один из аспектов воспитания, направленный на усвоение подрастающими поколениями высших духовных ценностей, их претворение на практике и изменения в поведении.

Важно подчеркнуть, что актуальность рассматриваемой проблемы состоит еще и в том, что в современном обществе большей частью утрачены общие цели, которые были очевидны при социализме, а без них, как известно, любое «общество обречено на вымирание». Отсюда утрата целостности, гражданственности, резкое расслоение общества, враждебность, обращенность только на себя, кардинальная смена ценностей, а это может привести к идеям космополитизма (я – дитя не какой-то страны, а земли-космоса, где живу сейчас – там и Родина) и к идее национализма. И то, и другое не имеет ничего общего с гражданско-патриотической позицией и не способствует ее развитию. В современном обществе много проблем, угрожающих жизни и здоровью человека – смертельные вирусы, наркозависимость, экономические и политические кризисы и пр., но, пожалуй, самой страшной угрозой стал терроризм. За последнее десятилетие произошли кардинальные изменения, связанные со сменой духовных, нравственно-этических ориентиров, а это, в свою очередь, привело к неутешительной тенденции и проявлению такой проблематики, как омоложение современного терроризма. По данным социологов, 70% террористов, совершивших преступления – это молодые люди в возрасте от 18-ти до 29-ти лет.³

С учетом информационной доступности современного мира существенно увеличивается и целенаправленное влияние извне, которое приводит к проявлениям экстремизма – от сепаратизма до бытовой ксенофобии. Экстремизм является основной идеологией террористических организаций, плацдармом для рекрутирования новых членов. Вот почему так важно иметь духовно подкованную молодежь.

Международный терроризм – проблема, которая уже множество десятилетий сопровождает жизнь современного общества. В разные

³ Журнал «Успехи современного естествознания», 2014, №8, с. 92-93.

периоды эта проблема проявлялась с новых сторон и, к сожалению, сегодня она стала болевой точкой для общества, так как активизировалась деятельность террористических организаций именно по вербовке в свои ряды новых «рекрутов» из самых разных социальных слоев, различной национальности и вероисповедания. В этой связи, к месту отметить, что мишенью вербовщиков становятся именно подростки и молодежь как наиболее восприимчивые к психологическому воздействию категории, ведь они в силу своего возраста находятся в постоянном мировоззренческом поиске.

Нужно отметить, что основным орудием экстремистов в отношении еще неоформленных взглядов и точек зрения подростков является манипуляция, псевдорелигиозные догмы, какие-то постулаты, заблуждение избранности и т.п. Однако, несмотря на все прилагаемые усилия он по-прежнему остается глобальной и опасной проблемой всей современной цивилизации. Безусловно, причины и основания терроризма имеют комплексный характер, и ему, как системному феномену, присущи исторические, политические, экономические, социальные и психологические факторы. Сам террористический акт направлен на изменение психологического состояния людей, создание психологической обстановки террора у широких масс населения. Терроризм по своей сущности и последствиям - это одновременно преступное, политическое, социальное, психологическое и морально-нравственное явление. Искорженное сознание и глубоко деформированная личность террориста не считается с основными жизненными ценностями человечества. В своих больных принципах, основанных на ненависти, нетерпимости, насилия, несправедливости, жестокого обращения, террористы легко жертвуют невинными людьми как «расходным материалом». Как известно, в основе каждой культуры лежит своя многовековая и целостная картина мира, которая во многом определяет связь между поведением и мировоззрением людей, объединяет их, формирует неповторимую личность каждого, причастного именно этой культуре человека. Отсюда совершенно очевидно, что террорист – это человек, в силу разных причин, потерявший идентичную связь со своей изначальной культурой, нацией, семьей. Психика террориста находится вне любого человеческого миро-

понимания и этноса, она принадлежит чужеродной матрице разрушения и уничтожения всего живого, какими бы, зачастую, «красивыми» идеями преобразования мира это не оправдывалось. Любой, более или менее, здравомыслящий человек способен осознавать, что никакие, даже самые многообещающие преобразования общества «не стоят слезы ребенка». У терроризма такая способность утрачена.⁴

Следовательно, важно учесть, чем обусловлена такая нереальная бесчувственность ко всему человеческому, каким психологическим способам противодействия вербовочной деятельности нужно обучать молодых людей и как работать с теми, кто уже оказался под воздействием экстремистских террористических сект. Корни экстремистского поведения можно обнаружить как внутри личности, так и в социуме. На индивидуально-психологическом уровне этот феномен проявляется: во-первых, типологическими особенностями авторитарной личности: своеволие, эгоцентризм, постоянство позиции, ригидность идей, высокая агрессивность, жесткое соблюдение эгоистичных правил (тотальный контроль), отсутствие элементарного сопереживания другому человеку, не умение вести диалог, учитывать потребности другого и во-вторых, специфической мировоззренческой установкой. Она состоит из невероятного откровения или интуиции, заменяющей рациональное познание реальности и логическое рассуждение.

Для экстремиста ни гибкости, ни широты, ни глубины мировоззренческого познания нет. Терроризм – это крайняя степень проявления экстремизма (радикализма, фанатизма, фундаментализма) при разрешении конфликтных противоречий между социальными субъектами, доведенная до подчинения одной сверхцели – уничтожения противника. Известно, что в такой слепой борьбе работает лозунг «для достижения цели все средства хороши». Из крайностей экстремизма (радикализма, фанатизма, фундаментализма) вырастает терроризм, который, в свою очередь, может принимать многообразные формы: от отдельных актов террора фанатиков-одиночек, группового и государственного терроризма до транснациональных мафиозно-террористических структур.

⁴ Есауленко И. Э., Попов В. И., «Духовно-нравственное воспитание молодежи-проблемы и пути решения» ГБОУ ВПО имени Н. Н. Бурденко Минздрава России.

Особо следует отметить необходимость предупредительно-профилактической работы по отслеживанию и принятию мер к ликвидации экстремистско-националистических и экстремистско-террористических сайтов в Интернете, активно пропагандирующих идеологию экстремизма, национализма и терроризма, содержащих призывы к совершению преступлений экстремистской и террористической направленности против людей другой национальности или вероисповедания, иностранных граждан, а также подробные инструкции по изготовлению взрывных устройств, совершению террористических актов, "националистических" убийств и т.п.

В этой связи следует выделить основные особенности, которые могут сформировать экстремистские взгляды, особенно в молодежной среде.

Во-первых, экстремизм формируется преимущественно в маргинальной /пограничной/ среде, когда идет подпитка неопределенностью положения молодого человека и его неустоявшимися взглядами на происходящее.

Во-вторых, экстремизм чаще всего проявляется при характерном отсутствии постоянных нормативов, установок, направляющих на законопослушность и консенсус с государством.

В-третьих, экстремизм проявляется чаще в тех обществах и группах, где проявляется низкий уровень самоуважения.

В-четвертых, данный феномен характерен для общностей не столько с так называемым «низким уровнем культуры», сколько с культурой разорванной, деформированной, не являющей собой целостности.

В-пятых, экстремизм соответствует обществам и группам, принявшим идеологию насилия и проповедующим нравственную неразборчивость, особенно в средствах достижения целей.

Вместе с этими особенностями нужно отметить также и те причины, вследствие которых могут возникнуть экстремистские проявления в молодежной среде. 1. Это обострение социальной напряженности в молодежной среде (социальные проблемы, включающие в себя проблемы уровня и качества образования, «выживания» на рынке труда, социального неравенства, снижения авторитета правоохранительных органов и т.д.). 2. Это криминализация ряда сфер общественной жизни (в молодежной среде это выражается в широком вовлечении молодых людей в

криминальные сферы бизнеса и т.п.). 3. Это изменение ценностных ориентаций /значительную опасность представляют зарубежные и религиозные организации и секты, насаждающие религиозный фанатизм и экстремизм/. 4. Это наличие незаконного оборота средств совершения экстремистских акций (некоторые молодежные экстремистские организации в противоправных целях занимаются изготовлением и хранением взрывных устройств, обучают обращению с огнестрельным и холодным оружием и т.п.). 5. Это использование в деструктивных целях психологического фактора (агрессия, свойственная молодежной психологии, активно используется опытными лидерами экстремистских организаций для осуществления акций экстремистской направленности). 6. Это использование сети Интернет в противоправных целях.

Отсюда напрашивается тезис о том, что с текущей информационно-разъяснительной работой с молодежью следует обязательно активизировать те усилия, которые направлены на устранение самих предпосылок формирования сознания, ориентированного на насилие как средство разрешения противоречий. Под призмой социальных, политических, экономических и иных факторов, наиболее подверженных разрушительному влиянию, в молодежной среде легче формируются радикальные взгляды и убеждения.

Таким образом, молодые граждане пополняют ряды экстремистских и террористических организаций, которые активно используют молодежь в своих политических интересах. В последние годы отмечается резкая активизация ряда экстремистских движений, которые вовлекают в свою деятельность молодых людей. Анализ данных за последние пять лет показывает, что возраст четырех из пяти лиц, преступная деятельность которых пресечена, составляет не более 30 лет, и нередко, в том числе несовершеннолетние лица от 14-ти до 18-ти лет.⁵

Субъектами преступлений выступают в основном лица мужского пола, однако, членами неформальных молодежных экстремистских группировок наряду с молодыми людьми иногда являются и девушки. Отмечено, что основу рядового состава бандформирований для осуществле-

⁵ Харченко К. В., Современные проблемы духовно-нравственного воспитания обучающихся в современных условиях.

ния террористических актов и его пополнения составляют именно молодые люди, которые в силу ряда социально-психологических, физиологических и демографических особенностей наиболее восприимчивы к идеологическому воздействию, подвержены максимализму и радикальным настроениям.⁶

В отличие от обычных групп подростков, совершающих хулиганские действия или акты вандализма, как правило, с целью «поразвлечься», неформальные экстремистские группировки осуществляют свои противоправные действия, базируясь на определенной идеологии, в качестве основного тезиса которой может выступать, например, такой: для преодоления всех политических и экономических проблем в стране необходимо создание «национального» государства, так как это, по их представлению, послужит гарантией от любых угроз. Характерная черта современного молодежного экстремизма – рост масштабности, жестокости, навязывание своих принципов оппонентам, стремление к общественному резонансу путем устрашения населения.

Поэтому актуально и важно знать предпосылки, которые могут привести к такого рода настроениям и поведению в молодежной среде, вовремя предупреждать и противодействовать их развитию и возможному перерастанию в правонарушения и преступления не только экстремистской направленности, но и вербовочной деятельности.

ДУХОВНО-НРАВСТВЕННЫЕ АСПЕКТЫ ВОСПИТАНИЯ, ПРОТИВОДЕЙСТВУЮЩИЕ ВЕРБОВКЕ МОЛОДЕЖИ И РАСПРОСТРАНЕНИЮ ЭКСТРЕМИСТСКИХ ВЗГЛЯДОВ

Григорян Ануш Огсеновна

Старший преподаватель кафедры обществоведческих дисциплин и психологии Образовательного комплекса полиции РА, майор полиции

В статье рассматриваются актуальные вопросы и аспекты духовно-нравственного воспитания, а также высокой культуры и развития современной

⁶ <http://data.gov.ru> [information – usage].

молодежи, которые являются основополагающими факторами, влияющими на процесс становления личности.

По мнению автора, вышеизложенные факторы должны быть поставлены «во главу угла», стать основной задачей духовно-нравственного воспитания и современного образования молодежи, поскольку отсутствие нравственного воспитания молодого поколения, особенно в наши дни, может привести к формированию и распространению экстремистских взглядов.

Ключевые слова: *молодежь, воспитание, образование, духовный, нравственный, вербовка, экстремистские взгляды, противодействующий, нормы этики.*

SPIRITUAL AND MORAL ASPECTS OF EDUCATION AS A COUNTERACTING FACTOR TO THE RECRUITMENT AND SPREAD OF EXTREMIST VIEWS AMONG THE YOUTH

Grigoryan Anush

*Senior lecturer Chair of Social Sciences and Psychology
of the College of Educational Complex of Police of the RA,
Police major*

The article covers the problems of morality and high culture, upbringing and development of the youth as a main process of identity development.

The relevance of the article is that the main task of today's moral and spiritual upbringing and education of the youth should be the consideration of the above mentioned factors, as for the time being, their lack might lead to the spread of extremist views.

Key words: *Youth, upbringing, education, spiritual, moral, recruitment, extremist views, counteracting, norms of ethics.*

ԷՄԻԼՆ ՈՒ ՀԱՅՈՐԴԻՆ ՈՐՊԵՍ 18-ՐԴ ԴԱՐԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՐՆԵՐ

Դավթյան Մելանյա

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու, ոստիկանության մայոր

Մարդկության պատմության վերլուծությունը ոչ միայն պայմանավորված է պատմական դեպքերով, այլ նաև կոնկրետ ժամանակահատվածում հանճարեղ գործիչներով և դարակազմիկ մտածողներով: Նրանց մի ուղղությունը 18-րդ դարում կոչվեցին լուսավորիչներ:

Ներկա հոդվածի խնդիրն է անդրադառնալ այնպիսի մի ժամանակահատվածի, ինչպիսին 18-րդ դարն է, որում տարբեր ժողովուրդներ ապրել են կեցության տնտեսական, մշակութային սոցիալական ու քաղաքական ամենատարբեր մակարդակներով: Այս ժամանակահատվածում սկսվում է համաշխարհային մտածողության տեղաշարժեր՝ իր հետ ձևավորելով լուսավորչական շարժումներ, որով սկսվում է անցումը սխոլաստիկական գիտելիքներից աշխարհիկ գիտելիքներին, բնական իրավունքի և հասարակական դաշինքի սկզբունքների հիմնավորմանը լուսավորիչների կողմից, որին հետևում է իրավաքաղաքական մտածողության խմորումները, միապետությունից հանրապետության ձևերին անցման քաղաքական շարժումները, քաղաքացիական հասարակության ձևավորման սկզբնավորումը, անհատից մինչև քաղաքացու դաստիարակումը:

Այսինքն՝ 18-րդ դարը ներկայանում է որպես *համաշխարհային, գիտական մտածողության շարժման դարաշրջան, որտեղ տեղի է ունենում* հասարակական կյանքի բոլոր ոլորտների, արժեքային բոլոր համակարգերի անցումներ: Նորովի զարգացման թափ են առնում ինչպես բնական գիտությունները, այնպես էլ հասարակական գիտությունները:

18-րդ դարն առանձնանում է իր քաղաքական խնդիրներով թե՛ Արևմուտքում, թե՛ Արևելքում, թե՛ պետական իշխանություն ունեցող ժողովուրդների մոտ և թե՛ պետականություն չունեցող ժողովուրդների մոտ: Իրենց ժողովուրդների խնդիրներով ու հոգսերով ապրող լուսավորիչ

մտածողները յուրովի են մոտենում այս խնդիրներին ու առաջադրում իրենց լուծումները: Այս դարաշրջանում լուսավորիչներն առաջադրում են նոր մարտահրավերներ, հասարակական-քաղաքական կյանքը նորովի ապրելու ու կառավարվելու գործընթացում: Սա ստեղծում է ժողովուրդների մեջ նոր քաղաքական կյանքի մրցակցություն, որի նպատակն էր ապրել նոր քաղաքացիական համակարգով, ազգային ու ինքնիշխան պետական կյանքով:

Նոր մտածողությունն ըմբռնելու և կլանելու ընդունակությամբ Եվրոպական մտածողներին զուգահեռ հանդես են գալիս նաև հայ մտածողները, ովքեր, սակայն, գործունեություն են ծավալում ոչ թե իրենց պարսկա-թուրքական լծի տակ գտնվող հայրենիքում, այլ գաղթավայրերում ու օտար միջավայրում:

18-րդ դարում նոր ձևավորվող պետություններում, նոր մարտահրավերների մեջ էր ծավալվում նաև նոր *սերնդի կրթությունն ու դաստիարակությունը*, նրա քաղաքական գիտակցությունն ու քաղաքական վարքը:

Սույն աշխատանքով ցանկացել ենք համեմատական զուգահեռներ անցկացնել 18-րդ դարի հայ և ֆրանսիացի լուսավորիչ-մտածողների մտքերի՝ *միևնույն ժամանակահատվածում գրված* «Էմիլ կամ դաստիարակության մասին» Ժան Ժակ Ռուսսոյի կողմից, որը տպվել է 1762 թ-ին, և «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ»-ը Մովսես Բաղրամյանի կողմից, որը տպվել է 1772 թ-ին աշխատությունների միջև:

Ներկայացնելով իր երկրի պետական ու քաղաքական հոգսերով ապրող ֆրանսիացի լուսավորիչ, փիլիսոփա Ժան Ժակ Ռուսսոյի և հայ մտավորական, լուսավորիչ Մովսես Բաղրամյանի հայացքները՝ նպատակ ունենք նաև ցույց տալ, թե ինչպես են նրանք տեսնում ժամանակակից պետականաշինությունը նոր սերնդի մեջ Ֆրանսիայում և Հայաստանում:

Այս երկու լուսավորիչ հեղինակները՝ Ռուսսոն և Բաղրամյանը, *համաշխարհային քաղաքական մտածողությունը ազգայնացնում* են իրենց հասարակության մեջ՝ սկսելով երիտասարդների դաստիարակությունից ու կրթությունից: Ժամանակի քաղաքական այս խնդիրների մեջ ռազմավարական առաջնային ու խիստ կարևոր խնդիր են դառնում *նոր սե-*

րունդ դաստիարակելը, նրանց մեջ իրավական պետական մտածողություն սերմանելը:

Հայ և ֆրանսիացի երկու հեղինակները իրենց առջև խնդիր են դրել ստեղծելու այնպիսի երիտասարդների հավաքական կերպարներ, ինչպիսին «Հայորդին» էր Բաղրամյանի համար, և «Էմիլը» Ռուսսոյի համար, ովքեր նոր քաղաքական՝ ժողովրդավարական համակարգի ձևավորման մեջ պիտի դառնային հիմնական միջուկն ու ուժը, որոնց շուրջ պետք է պտտվեին ապագայի սպասելիքները, երազանքները, բարեկեցության մղումները:

Այս երկու հեղինակները ստեղծագործել են աշխարհի տարբեր, հակադիր քաղաքակրթական միջավայրում, ու հայտնի չէ նրանք միմյանց ճանաչե՞լ են, թե՞ ոչ, սակայն այսօր համեմատելով նրանց կողմից միևնույն ժամանակահատվածում գրած, ստեղծագործությունները՝ կարող ենք ասել, որ *նրանք համաշխարհային մտքի ըմբռնողներն էին*, նոր տիպի ժողովրդավարական պետությունների հիմնադիրներն ու դարաշրջանի պահանջով քաղաքական նույն նպատակակետերին իրենց սաներին հասցնողները: «Էմիլն» ու «Հայորդին», նոր ստեղծվող հասարակության, քաղաքական միևնույն հարթության վրա առաջին կանգնողներն էին:

Ռուսսոյի համար անցումը հին պետական համակարգից նոր տիպի քաղաքական համակարգին *կարելի էր* հասնել նոր սերնդի մտածողության, կրթության ու դաստիարակության միջոցով, որոնք պետք է տապալեին ազնվականական միապետությունը Ֆրանսիայում: Իսկ ըստ Բաղրամյանի՝ ազգային պետություն *կարելի է ստեղծել* նոր սերնդի՝ պարմանների, նորափոթիների ազգային մտածողությամբ, հատուկ ռազմավարական կրթությամբ ու դաստիարակությամբ, որոնք պետք է տապալեին թուրք-պարսկական տիրապետությունը Հայաստանում:

Ռուսսոն ու Բաղրամյանը իրենց ստեղծագործությունները սկսում են համոզական խոսքով, հասարակական կյանքում դրա օգտակարությունն ու շահավետությունն ընդգծելով:

Ահա թե ինչ է գրում Ռուսսոն. «Սկսե՛ք լավ ուսումնասիրել ձեր սաներին. անկասկած, դուք նրանց բնավ չեք ճանաչում. հետևապես, եթե այս

տեսակետից կարդաք այս գիրքը, կարծում եմ, որ անօգուտ չի լինի ձեզ համար»¹:

Բաղրամյանն էլ գրում է, որ գորովալից մի տենչանք, կաթոգին սիրո մի բաղձանք իրեն ստիպում են հայկազն պարմաններին հայտնելու, որ հաճությամբ ու սրտամոտ ընդունեն իր խոսքը. «Քանզի չէ՞ որ կարող է սա իր համակիր մարդկանց լինել հույժ շահավետ և օգտակար: Որովհետև հետամտում ենք ոչ այլ բան, քան դուրս գալ մեր խեղճությունից, քանի որ տենչում ենք ազատություն»²:

Ըստ Սիմեոն Երևանցու տեղեկությունների՝ Մովսես Բաղրամյանը ծնվել է Արցախում: Մանկության տարիներին ապրել և նախնական կրթությունը ստացել է Նոր Զուղայում՝ Գևորգ Վարդապետի մոտ³: Նա եղել է Հովսեփ Էմինի բարեկամը, ում հետ 1760-ից մինչև 1765 թ. դեգերել է ամբողջ պատմական Հայաստանով և կոնկրետ տեղեկացել հայաստանաբնակների քանակի, նրանց քաղաքական ու տնտեսական վիճակի մասին: Լինելով դժգոհ հայ երիտասարդների աշխարհաճանաչողությունից, ինքնաճանաչողությունից, նրանց դաստիարակության ու կրթության մակարդակից՝ 1770 թ.-ին մեկնում է Հնդկաստանի Մադրաս քաղաք, որտեղ էլ դառնում է մեծահարուստ հայ վաճառական Շահամիր Շահամիրյանի գործընկերն ու նրա որդիների ուսուցիչը: Նրանք միասին ստանձնում են կատարելու մի շատ անհրաժեշտ գործ. այն է հայ երիտասարդությանը «ազատական արվեստներով» դաստիարակելու ու կրթելու, նոր մտածողության բերելու գործընթացը: Բայց մինչև ազատական արվեստներին անցնելը պետք էր սկսել **հայի ոգու** հորդորումից, արթնացումից, սթափեցումից, քաջալերումից՝ «խելքի բերելով իրենց համառ մոլորանքից»⁴, ազգային-ազատագրական նոր ծրագրի մշակումից, Հայոց ինքնության ճանաչումից, ինքնազատագրման մղումից:

Քաջ գիտենալով ինքնազատագրման գործընթացում, ազատական արվեստների ու նրանց մեջ իմաստության օրենքների ուսուցման կարևորությունը՝ Բաղրամյանը գրում է. «Ազատական արվեստն այն է, որ հա-

¹ Տե՛ս **Ժան Ժակ Ռուսո**, Էմիլ կամ դաստիարակության մասին, մաս 1-ին, Եր., 1960, էջ 6:

² Տե՛ս **Մովսես Բաղրամյան**, Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, թարգմ. գրաբարից Պ. Խաչատրյան, Եր., ԵՊՀ, 1991, էջ 53:

³ Տե՛ս Դիվան Հայոց պատմության, հ. Ը, Եր., 1908, էջ 12:

⁴ **Մ. Բաղրամյան**, նշվ. աշխ., էջ 52:

րատն ունենում ես համակ եռանդ արիության, ահա ինչու աղաչում եմ, քաղցրի՛կ մանկունք, կրթողներին ձեր անսացե՛ք, սիրով հարե՛ք, նախ և առաջ բոլոր-բոլոր ուսումնասեր ու գիտական վարպետներին: ...Թող պարտավոր լինենք ջանալ այնքան, մինչև որ թերևս ուրիշների համար ևս դառնանք տիպար, ինչպես այժմ մեզ բոլորիս օրինակ է ժողովուրդը Եվրոպայի»⁵:

«Ո՛վ նազելի մեր եղբայրներ և մեր հայրեր, Աղաչում եմ ձեզ՝ ջանացե՛ք և ձեր խոսքով հորդորեցե՛ք որդիներին, որ կրթված ու մարզված՝ մեկը մեկից լինեն անդուլ աշխատասեր ու եռանդուն, անգամ իրենց զբոսանքի պահին ցանկան վարժվելով՝ զենք կրելու ունակ դառնալ: Ավելի ևս հետամուտ լինեն հասնել ուրիշ-ուրիշ արվեստներին, գիտության և կամ ուսման, մանավանդ թող արվեստին ազատական տիրապետել միշտ ցանկանան, որովհետև օտարների լծից նրանք ի վիճակի են ազատվել այդ միջոցով»⁶:

Ազատական արվեստներով⁷ կրթությունը արևմտյան բարձրագույն կրթության ավանդական ակադեմիական ծրագիր էր: Ազատական արվեստը հիմնականում ընդգրկում է երեք ոլորտ՝ բնական գիտություններ, արվեստներ և հումանիտար գիտություններ: Այստեղ կենտրոնական գիտական առարկաները ներառում են փիլիսոփայություն, տրամաբանություն, լեզվաբանություն, գրականություն, պատմություն, ժամանակակից իմաստով նաև քաղաքագիտություն, սոցիոլոգիա և հոգեբանություն: Ազատական արվեստներով կրթությունը տեղի էր ունենում աստիճանակարգերով, որը վերաբերում էր ընդհանրապես համալսարանական կրթությանը: Ուսումնասիրության նման ընթացքը հակադրվում էր հիմնականում արհեստավարժության տեխնիկային:

Ազատական արվեստները եղել են դեռ հին հունական պյութագորյան փիլիսոփայության հետազոտության շարունակությունը, որը սկսվել էր «համընդհանուրի ըմբռնման ցանկությամբ», տիեզերական ներդաշնակության հետազոտությունը մաթեմատիկայի ու երկրաչափության միջոցով: Նրա հետևորդները աստղագիտության, մաթեմատիկայի, երկրաչափության և երաժշտության չորս արվեստները միացրել են որպես ու-

⁵ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 46:

⁶ Մ. Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 45:

⁷ Տե՛ս https://en.wikipedia.org/wiki/Liberal_arts_education.

սումնասիրության մեկ բնագավառ՝ կազմելով «միջնադարյան քառյակ գիտություններ»: Վաղ միջնադարում Աթենքում պոլիսի կառավարությունը կամ քաղաք-պետությունը հարգել և գրեթե ամեն ինչից վեր դասել է հռետորաբանությունը կամ հասարակության առջև խոսելու ունակությունը: Ի վերջո **հռետորությունը, քերականությունը և դիալեկտիկան (տրամաբանությունը)** դարձել են տրիվիումի կրթական ծրագիրը: Դրանք միասին հայտնի են դարձել որպես յոթ լիբերալ արվեստներ: Ի սկզբանե այդ առարկաները կամ հմտությունները դասական հնություն էին կրում: Այն էական նշանակություն ուներ ազատ անձի համար (լիբերալ, «ազատ մարդուն արժանի»), քաղաքացիական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու, հանրային քննարկմանը մասնակցելու, դատարանում պաշտպանվելու, ժյուրիի կազմում ծառայելու և զինվորական ծառայությանը մասնակցելու համար: Չնայած քվադրիվիումի արվեստը կարող էր առաջանալ տրիվիումի արվեստից առաջ. միջնադարի կրթական ծրագրերը նախ սովորեցնում էր տրիվիումը (քերականություն, տրամաբանություն և հռետորություն), որից հետո քվադրիվիումը (թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն, աստղագիտություն)՝ որպես կրթության հաջորդ աստիճան: Այսպիսի ուսումնական ծրագրով ամբողջացված կրթությունը արմատավորված էր ուշ դասական և հելլենիստական Հունաստանում Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում՝ որպես պաշտոնական կրթություն:

Դեռ անտիկ ժամանակներից, վաղ և ուշ միջնադարում, հումանիզմի ու վերածննդի դարաշրջանում «ազատական արվեստները» գործել են ամենատարբեր մակարդակներով, որպես կրթական ծրագրեր՝ հիմք են ծառայել եվրոպական էլիտաների, քաղաքական կառավարման գործիչների, հոգևորականների և իրավագիտության և բժշկության մասնագետների ու մասնագիտությունների ուսման համար:

«Ազատական արվեստները» նորովի են դրսևորվում նոր ժամանակներում՝ 18-րդ դարում՝ դառնալով համընդհանուր գիտելիքներ հանրության համար: Այն իր մեջ պարունակում է որոշակի գիտելիքների այնպիսի տեսակներ, որոնք ունեն ընդհանուր բնույթ, որտեղ մարդու միտքն ու էությունը սերտաճում են, որից ոչ ոք չի կարող իրեն թույլ տալ ետ մնալու: Նոր դարում, հասարակական, քաղաքական, տնտեսական հարաբերություններում մարդիկ, ակնհայտորեն, չեն կարող լինել լավ արհեստա-

վորներ, վաճառականներ, զինվորներ կամ գործարարներ, քանի դեռ նրանք չեն դարձել բարձրակարգ և քաջատեղյակ մարդիկ և քաղաքացիներ: Եթե այդ հիմքը դրվում է դպրոցական կրթության միջոցով, ապա հետագայում հեշտությամբ ձեռք են բերվում մասնագիտական հմտություններ, և մարդը միշտ ազատ է տեղափոխվում մի զբաղմունքից մյուսը, ինչպես կյանքում հաճախ պատահում է:

Ի դեպ, Հնդկաստանի Մադրաս քաղաքում հայ մեծահարուստ, ազգանվեր գործիչ Շահամիր Շահամիրյանի տպարանում են տպագրվել այնպիսի գրքեր, որոնք «ազատական արվեստներ» ուսուցանող առաջին դասագրքերն են եղել. դրանցից հիշատակության արժանի են՝ «Քերականութիւն», «Երկրաչափութիւն», «Պորփիր, Ներածութիւն» (փիլիսոփայություն), պատմական Հայաստանի աշխարհագրությունն ու քարտեզը և այլն:

«Ազատական» գիտելիքների կողքին լույս է տեսել նաև Արարատյան երկրի սահմանադրության նախագիծը՝ Շահամիրյանի «Որոգայթ փառացը», որը եկել էր լրացնելու «Հայորդու»՝ որպես ազատ քաղաքացի իր անկախ երկրում ապրելու քաղաքական կեցությանը:

«Ազատական արվեստները» բնականաբար պետք էր ոչ միայն արհեստավոր, վաճառական, զինվոր, գործարար լինելու համար, այլ հատկապես պետական-հասարակական կարգը կատարելագործելու համար: Այն սովորեցնում էր նաև ազատորեն ընտրություն կատարել պետական կառավարման համակարգերի մեջ:

Ինչ էր գրում Ռուստոն. «Էմիլը պիտի գիտակցի բնությունից իրեն տրված ազատության մասին, ու նրա վայելումը իր հասարակական կեցության մեջ, ազատ համաքաղաքացիների մեջ իր ազատ դրսևորումը՝ որպես ազատ քաղաքացի: «Դրա համար պետք է, որ նա սկսի ուսումնասիրել կառավարության բնույթը՝ ընդհանրապես, - գրում է Ռուստոն, - կառավարման զանազան ձևերը, և վերջում այն հատուկ կառավարությունը, որի ներքո ինքը ծնվել է, իմանալու համար, թե արդյոք դա ձեռնատու է իրեն»⁸:

Էմիլը պետք է ծանոթանա **քաղաքացիական իրավունքի հիմունքների** հետ՝ ոչ միայն առողջ կերպով դատելու գոյություն ունեցող կառա-

⁸ **Ժան Ժակ Ռուստո**, Էմիլ կամ դաստիարակության մասին, մաս 2-րդ, Եր., 1962, էջ 189-190:

վարությունների մասին, այլև ճշմարիտ պատկերացում կազմելու, թե ինչ և ինչպես պետք է անի իր երջանկության հասնելու համար: Իհարկե, մասնավոր անձին դժվար է շահագրգռել, հարկադրել նրան կառավարությունների մասին քննարկումներ կատարելու, հեռացնելու նրանից այն հարցերը, որոնք ձևակերպվում են. «Իմ ինչ գործն է» և «Ես ինչ կարող եմ այդ խնդրում անել»⁹ հարցերով:

Իսկ Բաղրամյանը քաղաքական անտարբերությունը հեռացնելու հարցում դիմում է. հայ հասարակությանը, հատկապես ծերունիներին, ծերունիներին, «...դուք էլ ի սեր Քրիստոսի՝ պատճառ եղեք ազատության¹⁰ ոչ թե կենաց օրերի ձեր սակավությունը նկատի ունենալով՝ ասեք, թե ո՞վ է կենդանի մնալու, ո՞վ կտեսնի այն, այլ արդար արիության քաջալերո՞ղ եղեք առույգ երիտասարդ և պատանի տղաներին, եթե ոչ դուք, ապա թերևս ձեր սերունդներն արժանանան ժառանգությանը սեփական»¹⁰:

Այսպիսով՝ քաղաքական նոր համակարգով ապրելու համար երկու լուսավորիչ-ուսուցիչները ստանձնում են լուծելու *առաջին խնդիրը*՝ Էմիլի ու Հայրորդու մեջ **քաղաքական անտարբերությանը**:

«Հայկի սերունդները պետք է լավ իմանան,- գրում է Բաղրամյանը,- թե ուզում են կախում ունենալ թուրքերից, պարսիկներից, մնալ ստրկական վիճակում, ապրել այլազգիներին ապրեցնելու համար: Արդյոք որևէ մեկը կամենո՞ւմ է քաջալերել առույգ ու ժիր երիտասարդ ու պատանի սերունդներին, թե մինչև այսօր ոսոխներին անվերջ ծառայելու ենք որպես գերի»¹¹: Բաղրամյանի անցնելիք ճանապարհը սկսվում է հայորդիների ոգու գերության ազատագրումնից, որն ըստ ծրագրի պետք է ավարտվի անկախ հայրենիքով ու նրա ազատ հայրենակիցների քաղաքացիական հասարակարգով:

Իսկ ինչպիսի՞ կրթական ու դաստիարակչական ռազմավարություն պետք է մշակեր Բաղրամյանը հայորդիների, արամյան ազգի պարմանների համար, որպեսզի նրանց միջոցով կարողանար «վերագտնել մեր հայրենիքն Արարատյան»¹²:

⁹ Տե՛ս Ռուստո, մաս 2, նշվ. աշխ., էջ 195:

¹⁰ Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 43:

¹¹ Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 46:

¹² Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 42-43:

Հաջորդ դժվարությունը պայմանավորված է մանկությունից մեզ ներշնչված նախապաշարումներով, այն կանոններով, որոնցով մենք դաստիարակված ենք: Էմիլին դուրս բերելով նախորդ հասարակական դաստիարակությունից՝ Ռուստոն բերում է նոր հասարակության շեմ: «Ես ջանացել եմ,- գրում է Ռուստոն,- այդ դժվարությունն էլ վերացնել Էմիլի համար: Հազիվ թե նա գիտի՝ ինչ բան է կառավարությունը, նրա համար միակ կարևորը, լավագույնը գտնելն է: Նա չի նպատակադրվում գրքեր գրելու, իսկ եթե գրի, ապա դա կանի ոչ թե ուժեղներին խնկարկելու համար, այլ հանուն մարդկային իրավունքների հաստատման»¹³:

Իսկ համաժամանակյա ստեղծագործող Բաղրամյանը լավ գիտի արամյան ազգին մանկությունից ուղղված ու ներշնչված նախապաշարումներն ու այն կանոնները, որոնցով նրանք դաստիարակված են: Նա նախ հայտնում է իր գոհունակությունն ու շնորհակալությունը մեր եկեղեցու առաջնորդներին, բոլոր վարդապետներին ու քահանաներին և գրում է. «Թեպետև շատ գիտուն անձինք բյուրաբազում քարոզներով սույն առիթով փորձում են մեզ խրատ կարդալ և, բերելով սուրբ գրական մատյաններից բազմապիսի առարկումներ, իրենց ասածն հիմնավորել, բոլորն առանց ինչ-որ ընդդիմության ընդունում ենք, քանզի երբեք էլ դրանց դեմ չենք ցանկանում ընթոստանալ: Սակայն մենք այդ կապակցությամբ այս կարծիքը ունենք ընդմիշտ, որն ստիպված ենք սույն տեղում բացատրել: Բայց,- շարունակում է Բաղրամյանը,- հոգևոր մեր տերերին անկեղծորեն այս պետք է ասել ու խղճի մտոք խոստովանել, որ հազարամյակներով հոգևոր դասին է վստահված եղել հայ ազգի ճակատագիրը: Հայոց կյանքում աշխարհիկ իշխանությունները միմյանց չեն հաջորդել, այլ եղել են ընդհատումներով, որի հետևանքով ավերվել են բազմաթիվ հասարակական-քաղաքական արժեքներ: Իսկ Հայոց հոգևոր իշխանությունը չի ընդհատվել, այն փոխանցվել է սերնդե-սերունդ, ձևավորվել է ամեն հայորդու համար՝ որպես նրա կյանքի անհրաժեշտ մաս: Հայ մարդու կյանքում հոգևոր դասը կառավարել է անընդմեջ: Եվ ահա Հայոց հասարակությանը կառավարելու, կազմակերպելու իրավունքին տիրապետում են Հայոց հոգևորականները, ովքեր առաջնորդվում են սեփական ազգի նկատմամբ իրենց խղճով ու գիտելիքներով: Հե-

¹³ Տե՛ս Ռուստո, մաս 2-րդ, նշվ. աշխ., էջ 195:

տևաբար Հայոց ազգային-ազատագրության գործում ուրույն տեղն ու դերն ունի Հայոց հոգևորականությունը: Հետևաբար նոր սերնդի դաստիարակության գործում հոգևոր գիտելիքները պետք է ծառայեն ժամանակի պահանջներին համահունչ և հնազանդության քարոզների փոխարեն առաջնորդեն ազգային-ազատագրության գործում:

Բաղրամյանը, բարձր գնահատելով պետականազուրկ հայ ժողովրդի կյանքում խաղացած եկեղեցու և հոգևորականության դերը, այնուամենայնիվ, քննադատում է նրանց հետադիմական հայացքները: «Նրանք անվերջ կարծես ռամկի կարգ ու բարքով ժողովրդին իրենց կանչում են անիծյալ, և նրանց այդ անիծելու սովորությունը մեզ չափազանց ծանր է թվում, խիստ դժպատեհ, որովհետև մենք կարծում ենք, որ դրանով միգուցե թե հաճախակի շատ շատերի գլխին բերում ենք աղետներ»¹⁴: Սեփական ժողովրդին անիծելու և ստրկամտություն քարոզելու փոխարեն Բաղրամյանը հայ հոգևորականներից պահանջում է, որ նրանք հայ պատանիներին հայրենասիրություն և քաջություն սովորեցնեն:

Հայրենիքի ճակատագրի պես բարդ ու անուսում է հայ պատանին, և՛ անընտել, և՛ անուսում էլ կմնան, եթե սիրով հայ հոգևորականները նրանց չկրթեն, չգոտեսնեն՝ ի սեր հայ ժողովրդի ազատության:

Հայ էթնոսը, զրկված լինելով իր ազգային պետությունից, սեփական քաղաքական իշխանությունից, զրկված էր նույնիսկ ֆիզիկականապես ապրելու իրավունքից ու հայտնվել էր իրեն տիրապետող պետությունների կամակատարության ներքո: Մովսես Բաղրամյանի խնդիրն է ազատել հայորդուն ինքնագերությունից: Այստեղ է, որ Բաղրամյանը նշում է այն հատկանիշները, որոնք են՝ հիմարությունը, տգիտությունը, ազգակիցներին տգիտաբար կոտորելը, միմյանց նկատմամբ ատելությունն ու թշնամանքը, ծուլությունն ու ալարկոտությունը, վախկոտությունը, կամակորությունն ու անիրավությունը, անարդարությունը, ազահիությունը¹⁵, որով մարդը քայլում է դեպի գերություն՝ նույնիսկ այս աշխարհի երեսին դուրս գալով դեմ հանդիման իր ֆիզիկական գոյի խնդրին:

Ռուսոյի ստեղծագործության մեջ կա ևս մի ուշագրավ մաս, երբ էմիլն իր անձնական դժբախտության հետևանքով նեղացած թողնում է իր երկիրն ու համաքաղաքացիներին և գնում է ճանապարհորդության՝

¹⁴ Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 51:

¹⁵ Բաղրամյան, նշվ. աշխ., էջ 129:

երջանիկ կյանք գտնելու: Կարճ ժամանակ անց կորցնում է ճանապարհորդի իր շուքն ու պերճանքը՝ վերածվելով թափառաշրջիկի: Այդպիսի կյանքի բերումով էմիլը հայտնվում է գերու կարգավիճակում: Խզելով կապերն իր երկրի հետ՝ նա կապվում է ամբողջ աշխարհի հետ և դադարելով լինել քաղաքացի՝ դառնում է աշխարհաքաղաքացի:

Այստեղ նույնպես Ռուսսոյի դաստիարակությունը էմիլի համար ծառայում է որպես «ունիվերսալ գործիք»¹⁶, որը բացում է հայրենիքից դուրս գտնվող էմիլի համար ազատության ճանապարհը, ապա վերադարձը դեպի հայրենիք:

«Յուրաքանչյուր մարդ, դառնալով չափահաս և իր անձի տերը, շնորհիվ մի իրավունքի, որը ոչինչ չի կարող խափանել, ազատ է հրաժարվելու իրեն հասարակության հետ կապող դաշինքից, հեռանալով այն երկրից, որտեղ ապրում է: Միայն այն դեպքում, երբ բանականության տարիքին հասնելուց հետո շարունակում է ապրել այնտեղ, կարելի է ընդունել, որ նա լռելյայն հավանություն է տալիս *իր նախնիների կողմից ստանձնված պարտավորություններին*: Նա իրավունք է ձեռք բերում հրաժարվելու իր հայրենիքից այնպես, ինչպես հորը հաջորդելու իրավունքից. մարդը, հրաժարվելով իր ծննդավայրից, դրանով իսկ իրեն զրկում է այդ պարգևից, որ բնությունն է նրան տալիս: Նրա բացարձակ իրավունքն է ամեն վտանգի գնով պահպանել իր ազատությունն այնտեղ, որտեղ ծնված է, բացի այն դեպքից, երբ իր հոժար կամքով ենթարկվում է օրենքներին՝ նրանց պաշտպանությունը վայելելու իրավունք ստանալու համար»¹⁷:

Որտեղ կարելի է ապրել անկախ ու ազատ, առանց հարկադրված լինելու որևէ մեկին վնաս պատճառելու և առանց ուրիշից վնաս կրելու երկյուղի: Կարծում եք հե՛շտ է գտնել այնպիսի երկիր, որտեղ մարդ միշտ կարող է պատվավոր ապրել: Եթե կա մի օրինական ու վստահելի միջոց ապրելու առանց ինտրիգների, առանց վեճերի, առանց ուրիշից կախում ունենալու, դա ընդունում եմ, իր ձեռքի աշխատանքով, իր սեփական հողը մշակելով ապրելն է. բայց ո՞րն է այն պետությունը, որտեղ կարելի լինի ասել. «Այն հողը, որ ես կոխում եմ, իմն է»¹⁸: Նախքան կընտրես այդ

¹⁶ **Ժան Ժակ Ռուսսո**, մաս 2-րդ, նշվ. աշխ., էջ 279:

¹⁷ **Ժան Ժակ Ռուսսո**, մաս 2-րդ, նշվ. աշխ., էջ 189-190:

¹⁸ Տե՛ս **Ժան Ժակ Ռուսսո**, մաս 2-րդ, նշվ. աշխ., էջ 192:

երջանիկ հողը, համոզվի՛ր, թե այնտեղ կգտնե՛ս արդյոք այն խաղաղությունը, որ փնտրում ես, զգուշացի՛ր, որ մի բռնակալ կառավարություն, մի անհանդուրժող կրոն, խաթարված բարքեր չգան քո հանգիստը խռովելու այնտեղ: Պաշտպանվի՛ր չափից վեր հարկերից, որոնք կկլանեն քո աշխատանքի պտուղը, խուսափի՛ր անվերջ դատավարություններից, որոնք կսպառեն քո ունեցվածքը: Այնպե՛ս արա, որ քո արդար ապրելակերպով հեռու մնաս պետական վերակացուների, նրանց փոխանորդների, դատավորների, քահանաների, հզոր հարևանների, ամեն տեսակ խաբեբաների առաջ քծնելու հարկադրանքից. նրանք միշտ պատրաստ են ձեզ տանջելու, եթե չզգուշանաս¹⁹:

Քաղաքացուց դեպի աշխարհաքաղաքացի ապա մարդ, իսկ հայրենիքից դուրս գտնվող մարդուց դեպի գերություն մեկ քայլ է. ահա այն անկման ճանապարհը, որ մարդն անցնում է իր կյանքի տարբեր դրսևորումների հետևանքով: Էմիլը թողնում է իր հայրենիքը ու գնում՝ իրեն հարցնելով. «Ի՞նչ եմ անում, ու՞ր եմ գնում, ի՞նչն է նպատակս», ու պատասխանում է ինքն իրեն, թե ինչ է արել իր ծնվելով. սկսել է մի ուղևորություն, որը ավարտվելու է մահվամբ: Էմիլը կատարում է իր պարտականությունը, պահում է իր տեղը անմեղությամբ ու պարզությամբ: Երբեք չարիք չի պատճառում իր նմաններին, կատարելով բարիք նրանց նկատմամբ՝ հասնում է նրանց կարիքներին: Էմիլն իր կարիքներն է հոգում, ծառայում է նրանց՝ առանց վնասելու լինելով որպես երջանիկ ու բարի, առանց հոգսի ու նեղության ծառայողի օրինակ: Նա հրաժարվում է իր հայրենական ունեցվածքից ու ապրում է առանց դրա, ապրում է՝ ոչ մի անարդարություն չգործելով, առանց ողորմություն խնդրելու: Այսպես ապրում է Էմիլը՝ իր հացը վաստակելով, քանի որ մարդիկ ոչինչ ձրի չեն տալիս: Այն, ինչ պահանջվում է մարդ արարածից, որպես բնության ու հասարակական էակ՝ Էմիլը կատարում է ամենայն կարգապահությամբ ու պարտավորվածությամբ, գիտակցում է, որ կատարում է այն անհրաժեշտությունները, որոնք անհրաժեշտ են ապրելու համար:

Սակայն ավարտվել են Էմիլի նպատակները, պարտականություններն իր հայրենիքի, հայրական ունեցվածքի, ընտանիքի հանդեպ: *Ապրել ուղղակի, վաստակելով հացը սեփական քրտինքով, մարդկանց*

¹⁹ Տե՛ս **Ժան Ժակ Ռուսո**, մաս 2-րդ, նշվ. աշխ., էջ 193:

չվնասելով, պարզվում է՝ ամենաքիչ պայմանն է սեփական ազատությունը պահպանելու համար, քանի որ լուծելով ամենօրյա կենսական պահանջների խնդիրները՝ հող է դառնում այն մարդկանց համար, որոնք բացի կենսական խնդիրներից՝ ունեն նաև (իրենց սեփական երկրում Մ. Դ) ընդհանուր նպատակներ, մեծ քաղաքական ու քաղաքացիական նպատակներ: Հանուն ուրիշների ընդհանուր նպատակների՝ մասնավոր կյանքերը ծառայում են որպես ստորուկներ: Այսինքն՝ ապրել աննպատակ, առանց ապագայի տեսլական ունենալու նշանակում էր կորցնել ազատությունը՝ **հող լցնելով ուրիշների ազատությամբ:**

Մեծ փիլիսոփան, մեծ դաստիարակն ու ուսուցիչը անհրաժեշտ գիտելիքներով ու վարքով արդեն պատրաստված իր էմիլին տանում է փորձությունների, կյանքի մաքառումների, որտեղ էմիլը ապրում է ու իրեն դրսևորում՝ կիրառելով այն դաստիարակությունն ու գիտելիքները, որոնք ստացել է իր ուսուցիչ Ռուստյից: Էմիլի խնդիրն է դառնում դուրս գալ նույնիսկ ամենածանր փորձության միջից, մարդկության համար ամենաաններելի, ամենաստորացված կյանքի ձևից՝ գերությունից, այն գերությունից, որոնք իրեն պատճառվել է ոչ թե բնական անհրաժեշտությունից, այլ մարդկանցից: *Ահա ժամանակների նոր լույսը, նոր կոչը՝ ի հորդորումն մարդու կամքին ու բանականությանը, ու նորովի արթնացման հորդորանքը՝ ընդդեմ այն հանդուրժողականության, որ մարդը գերի է մարդուն:* Վերածնելով այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են ազատությունը, հավասարությունը և արդարությունը, մի անգամ ևս քննության պետք է ենթարկվեր մարդ արարածի կյանքն ու կենցաղն այդ արժեքների միջավայրում, ու հասկացներ, որ ամենասարսափելին **մարդը մարդուն գերի լինելն է:**

18-րդ դարի երկու փիլիսոփաներն էլ՝ Բադրամյանն ու Ռուսսոն, հաղթահարում են խոչընդոտներ՝ իրենց սաներին միևնույն նպատակակետին հասցնելու համար **ազատել գերությունից նրան, ով գտնվում է ստրկության մեջ իր իսկ գերեվարված հայրենիքում և նրան, ով հայտնվել է ստրկական վիճակի մեջ, ստրկացել է իր հայրենիքից դուրս, բայց ունի իր հայրենիքը:** Ահա ինչու՞մ է կայանում խոչընդոտների հաղթահարման ու անցնելիք ճանապարհների տարբերությունը, որն ավարտվում է **միևնույն նպատակակետում**, դեպի ու միայն քաղա-

քական ազատություն և ունենալ բարեկեցիկ կյանք **սեփական հայրենիքում:**

Ամփոփում

Ուսումնասիրելով Բաղրամյանի և Ռուսոյի գրեթե միաժամանակ գրված ստեղծագործությունները՝ գալիս ենք այն եզրակացության, որ լուսավորչականությունը, հանդես գալով տարբեր երկրներում, ունենալով շատ ընդհանրական գաղափարներ, այնուամենայնիվ, իրենց առջև ունենում են առաջնահերթ տարբեր խնդիրներ: Ռուսոն լուսավորչական գաղափարները զարգացնում է Ֆրանսիայում՝ նոր բուրժուական քաղաքական համակարգ ստեղծելու համար, իսկ Բաղրամյանը՝ հայրենիքը թուրք-պարսկական լծից ազատագրելու համար:

Նրանք իրենց սաներին՝ Ռուսոն իր էմիլին, Բաղրամյանը իր Հայորդուն, սովորեցնում են ապրել ազատության մեջ, սեփական երկրում, բարձրակարգ քաղաքացիական հասարակության մեջ, քանի որ ավելի վսեմ ոչինչ չկա, քան սեփական հայրենիքում ապրելը, և ավելի նսեմ բան չկա, քան մարդը մարդուն գերի լինելը:

ЭМИЛЬ И СЫН АРМЯНИНА КАК НОСИТЕЛИ ИДЕЙ ПРОСВЕТИТЕЛЕЙ XVIII ВЕКА

Давтян Меланья Хачатуровна

*Преподаватель кафедры общественных дисциплин
и психологии Колледжа Образовательного комплекса полиции
Республики Армения, канд. полит. наук, майор полиции*

Рассматривая произведения Баграмяна и Руссо, написанные почти одновременно, мы приходим к выводу, что просвещение, появляясь в разных странах, имея очень общие идеи, тем не менее, сталкивается с разными проблемами. Руссо разработал идеи просвещения для создания новой буржуазной политической системы во Франции, а Баграмян - для освобождения родины от турецко-персидского ига.

Они учат своих воспитанников, Руссо - своего Эмиля, Баграмян - своего Сына армянина, - жить свободно, в своей собственной стране, в высококлассном гражданском обществе, потому что нет ничего более возвышеннее, чем жизнь на своей родине, нет ничего более унижительно, чем пленение человека человеком.

Ключевые слова: Руссо, Баграмян, Эмиль, Сын армянина, просветитель, либеральное искусство, свобода, родина.

EMIL AND THE SON OF AN ARMENIAN AS BEARERS OF THE IDEA OF THE 18TH CENTURY ENLIGHTENERS

Davtyan Melanya

*Lecturer at the Chair of Social Sciences and Psychology
of the Educational Complex of Police of the Republic of Armenia,
PhD in Political Sciences, Police Major*

Examining the works of Baghramyan & Rousseau written almost simultaneously, we come to the conclusion that the Enlightenment, appearing in different countries and having very common ideas, nevertheless have different problems to cope with. Rousseau developed Enlightenment ideas to create a new bourgeois political system in France, and Baghramyan to liberate the homeland from the Turkish-Persian yoke.

They teach their pupils, Rousseau to his Emil, Baghramyan to his son, to live in freedom, in their own country, in a high-class civil society, because there is nothing more sublime than living in their own homeland and because there is nothing more humiliating than the captivity of man by man.

Key words: Russo, Baghramyan, Emil, Son of an Armenian, illuminator, liberal art, freedom, homeland.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Խաչատրյան Իզնատ

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա
անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորող,
ոստիկանության ավագ սերժանտ*

21-րդ դարի նախաշեմին անչափահասների հանցավորության խնդիրները շարունակում են մտահոգել ողջ հանրությանը: Այս վտանգավոր երևույթի վրա անհրաժեշտ ազդեցություն գործելու և դրա դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու ուղղությամբ լուրջ աշխատանքներ են տարվում աշխարհի գրեթե բոլոր պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ ՀՀ):

20-րդ դարի 90-ական թվականները մեր երկրում նշանավորվեցին բուռն իրադարձություններով, որոնք իրենց անմիջական ազդեցությունն ունեցան նաև անչափահասների և երիտասարդության վրա: Տնտեսական ճգնաժամը, գաղափարական նախկին հայեցակարգերի փլուզումը, հասարակությունում տեղի ունեցող բուռն գործընթացները, սոցիալ-տնտեսական արմատական բարեփոխումները խթանեցին այնպիսի երևույթների (հանցավոր միջավայր, հանցավոր հեղինակություն և այլն) տարածումը, որոնք նախկինում գտնվել էին ստվերում:

Գիտության մեջ հանցավորության հասկացության վերաիմաստավորման համար, ըստ երևույթին, խթան հանդիսացան Է. Դյուրքեյմի դատողություններն այն մասին, որ հանցավորության գոյությունը բնական երևույթ է, որ այն իրենից ներկայացնում է հասարակության որոշակի գործառույթ, դրա անքակտելի մասը, և ոչ միայն ենթադրում է ան-

հրաժեշտ փոփոխությունների ուղիների առկայություն, այլև որոշ դեպքերում ուղղակիորեն նախապատրաստում է այդ փոփոխությունները¹:

Ինչպես յուրաքանչյուր պետությունում, այնպես էլ ՀՀ-ում գոյություն ունեն անչափահասների հանցավոր վարքագծի դրսևորումներ: Հատկանշական է անչափահասների կողմից դրսևորվող հակաօրինական, հանցավոր վարքագծի վրա սոցիալական, քաղաքական, իրավական, հոգեբանական, ինչպես նաև փլուզվող արժեհամակարգի գործոնների ազդեցությունը: Եթե փորձենք համակարգել անչափահասների հանցավոր վարքագծի դրսևորմանը նպաստող պատճառներն ու պայմանները, ապա դրանց թվին կարող ենք դասել նաև ընկերական շրջապատի բացասական ազդեցությունը, հոգևոր արժեքների ցածր մակարդակը, անչափահասների շրջանում ձևավորված ենթամշակույթը, մշակութային ժամանցի համար սահմանափակ հնարավորությունները, համացանցի միջոցով բացասական տեղեկատվության տարածումը, անբարենպաստ իրավիճակն ընտանիքում և այլն: Այս հանգամանքները թույլ են տալիս եզրակացնելու, որ անչափահասների կողմից կատարված իրավախախտումների խնդիրը շարունակում է մնալ հրատապ²:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն ունի տարածված կարծիք առ այն, որ շեղվող վարքագիծը տվյալ հասարակությունում ընդունված իրավական, բարոյական և, ընդհանրապես, սոցիալական նորմերին հակասող վարքագիծն է, որի հիմքում ընկած են անձի սոցիալականացման խնդիրները: Իհարկե, անչափահասի դրսևորած շեղվող վարքագծի ոչ բոլոր դեպքերն են հանգեցնում քրեական պատասխանատվության: Սակայն որպեսզի հետագայում շեղվող վարքագիծը չստանա հանցավոր դրսևորում, անհրաժեշտ է նախօրոք ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ:

Ինչպես արդեն նշել ենք, անչափահասների հանցավորությունը՝ որպես միջազգային հետաքրքրություն ներկայացնող ոլորտ, աշխարհի գրեթե բոլոր պետություններում համարվում է լուծում պահանջող կարևորագույն հիմնախնդիրներից մեկը:

¹ Տե՛ս՝ **Дюркгейм Э.**, Норма и патология // Социология преступности. Москва, 1966, էջ 39:

² Տե՛ս՝ **Малков В. Д.**, Криминология: Учебник для вузов. 2-е изд., перераб. и доп. М., 2006, ЗАО «Юстицинформ», էջեր 84-95:

Անչափահասների կողմից և նրանց մասնակցությամբ կատարվող հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարը, այս բնույթի հանցագործությունների նախականխումն ու կանխումը, ինչպես նաև դրանց նպաստող պատճառների, պայմանների վերհանումն ու վերացումը մնում է պետության հիմնական անփոփոխ առաջնահերթություններից մեկը:

ՀՀ-ում անչափահասների հանցավորության 2017-2019 թթ. վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2017 թ. համեմատությամբ 2018 թ. նշված ցուցանիշը որոշակիորեն նվազել է (2020 թ. ընթացիկ վիճակը միջանկյալ ամփոփման փուլում է): Եթե 2017 թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 403 դեպք, ապա 2018 թ. արձանագրվել է նման 359 դեպք, այսինքն՝ նվազումը եղել է 44 դեպքով կամ 12%-ով: 17-ով կամ 5%-ով նվազել է նաև հանցանք կատարած, իսկ 32-ով կամ 19,3%-ով՝ դատապարտված անչափահասների թիվը: Իսկ 2019 թ. արձանագրվել է անչափահասի կողմից կամ նրա մասնակցությամբ կատարված հանցագործության 327 դեպք:

Չնայած այս դրական միտումներին՝ 2018 թ. աճել են անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված առանձին վտանգավոր հանցատեսակներով, մասնավորապես, սպանության, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու, ավազակության, կողոպուտի դեպքերը:

Անչափահասների հանցավորության և շեղվող վարքագծի պատճառների և պայմանների բացահայտումը, կանխման արդյունավետ միջոցառումների մշակումն ու իրականացումն անհնար են առանց հանցավոր վարքագծի մեխանիզմի օղակի՝ հանցավոր անձի ուսումնասիրության: Հանցանք կատարած անչափահասի քրեաբանական բնութագրի ուսումնասիրությունը ենթադրում է նրա ոչ միայն սոցիալական, այլև հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն: Վերջինիս կարևորությունը պայմանավորված է նրանով, որ անձի ո՛չ սոցիալական կարգավիճակը, ո՛չ սոցիալական դերերը և ո՛չ էլ հանցավոր վարքագծի դրսևորման պատճառ հանդիսացող օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ գործոնները չեն կարող հանգեցնել հանցանքի կատարման՝ առանց հանցանք

կատարող անձի հոգեբանական ոլորտով անցնելու, հոգեբանական կարգավիճակ ստանալու³:

Անչափահասների հանցավորությունն ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք որոշվում են դիտարկվող տարիքի անձանց հոգեբանական հատկանիշներով: Որոշակի տարիքի հասած անչափահասների մոտ տեղի է ունենում անհատականության ձևավորում, որն իրենից ներկայացնում է «միջանկյալ», «կրկնվող» անհատական սոցիալականացում: Նշենք նաև, որ դեռահասներն այս տարիքում առավելապես խոցելի են արտաքին ներգործություններից, հասակակիցների և, ինչը հատկապես կարևոր է, մեծահասակների բացասական ազդեցություններից: Այս համատեքստում կարելի է պնդել, որ դա է անչափահասների կողմից «քրեածին վարակվածության» բարձր աստիճանի հիմքը, ինչը հանցաշխարհի պարագլուխներին հիմք է տալիս անչափահասներին դիտելու որպես իրենց «կադրային ռեզերվներ»:

Գոյություն ունեն որոշակի գործոններ, որոնց նշանակությունը կարևորվում է հատկապես անչափահասների նոր ձևավորվող վարքագծի համար: Այդ գործոնների թվին են դասվում ընտանիքը և անչափահասների շրջանում ձևավորված ենթամշակույթը:

Նշենք, որ ընտանիքում է տեղի ունենում անչափահասի սկզբնական սոցիալականացումը, ձևավորվում են դերային, արժեքային և աշխարհայացքային կողմնորոշումները: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում, դաստիարակում նրան, ապահովում նրան հոգեբանական աջակցությամբ: Հետևաբար, բարդություններից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջները ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ ունեցող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ ունեցած պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, կենցաղային խնդիրներին դիմակայելու կարողությունը երեխայի մոտ ձևավորվում են

³ Տե՛ս՝ **Попандопуло В. В.**, Преступность несовершеннолетних: состояние, функции, последствия, социальный контроль: Дис. ... канд. юрид. Наук, Краснодар, КубГУ, 2007, էջեր 56-64:

միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց մեծացել է ընտանիքում գոյություն ունեցող անկեղծ ու ջերմ հարաբերությունների պայմաններում⁴:

Անչափահասների իրավախախտ վարքագծի ձևավորմանը առավելապես նպաստող գործոնը ընտանիքում անբարենպաստ իրավիճակն է, որը շտկելու գործին պետության հետ պետք է ներգրավված լինի նաև ընտանիքը: Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված միջազգային փաստաթղթերում ևս կարևորվում է ընտանիքի դերը: Այսպես՝ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 1.1-րդ կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ձգտեն՝ նպաստելու անչափահաս տղայի կամ աղջկա և նրա ընտանիքի բարեկեցությանը⁵: Համանման կարգավորում է պարունակում նաև անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման՝ ՄԱԿ-ի ուղենիշերի («Ռիադյան ուղենիշեր»)՝ 11-րդ կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր հասարակություն պետք է խիստ կարևորի ընտանիքի և դրա բոլոր անդամների կարիքներն ու բարեկեցությունը:

Ռիադյան ուղենիշերի 12-19-րդ կետերը ևս ուղղակիորեն վերաբերում են երեխայի վարքագծի ձևավորման ընթացքում ընտանիքի, ծնողների կողմից երեխայի հանդեպ դրսևորվող վերաբերմունքին՝ կարևորելով դրանք երեխայի առաջնային սոցիալականացման, պաշտպանության և խնամքի ապահովման գործընթացում⁷:

Ինչպես հայտնի է, շատ ընտանիքներ տարբեր պատճառներով չեն կատարում իրենց դաստիարակչական գործառույթը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում է անչափահասների հակահասարակական և երբեմն անօրինական կողմնորոշումների ձևավորմանը: Յուրաքանչյուր նոր ձևավորվող անձի վարքագծի համար անփոխարինելի նշա-

⁴ Տե՛ս՝ **Ковтуненко Л. В.**, Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // Вестник Воронежского института МВД России, 2012, № 3, էջեր 137-143:

⁵ Տե՛ս՝ «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ»-ը («Պեկինյան կանոններ»)՝ հաստատված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով:

⁶ Տե՛ս՝ «Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշեր» («Ռիադյան ուղենիշեր»)՝ հաստատված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թ. դեկտեմբերի 14-ի 45/112 բանաձևով:

⁷ Տե՛ս՝ նույն տեղում:

նակություն և դերակատարություն ունի ընտանիքը: Մինչդեռ ընտանիքում առկա սոցիալ-հոգեբանական խնդիրները (անչափահասի ծնողների միջև պարբերաբար կրկնվող կոնֆլիկտները, ծնողների անտարբերությունը միմյանց և երեխայի նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ հանուն երեխայի հարաբերությունները, հանդուրժողականության պակասի արդյունք հանդիսացող ընտանեկան խնդիրները) հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Յուրաքանչյուր ընտանիքում ծնողների կողմից իրականացվում են դաստիարակչական բնույթի աշխատանքներ՝ ուղղված երեխայի կայուն հոգեբանության, աշխարհայացքի, արժեհամակարգի ձևավորմանը: Ծնողների կողմից իրականացվող նշված աշխատանքների ամբողջությունն էլ հանդիսանում է ծնողական դաստիարակության մի մասը, որի բացակայության կամ թերի իրականացման դեպքում անչափահասի մոտ ձևավորվում է հակաօրինական, շեղվող վարքագիծ: Այս հանգամանքի կարևորությունը, ինչպես արդեն նշել ենք, կայանում է նրանում, որ ընտանիքում են ձևավորվում անչափահասի հոգեբանական հայացքները, ինչն էլ առանցքային նշանակություն ունի անչափահասի հոգեբանության հետագա զարգացման հարցում: Անչափահասները ծնողների կողմից ոչ բավարար ուշադրության արժանանալու դեպքում շատ հաճախ փորձում են այն լրացնել իրենց հասակակիցների շրջանում:

Երեխայի անձի ձևավորման վրա ընտանիքի ազդեցությունը գնահատելիս կարևորագույն հարցերից մեկը ծնողների դաստիարակության մեթոդն է: ՀՀ-ում շեղվող վարքագիծ հաճախ դրսևորվել է արտաքուստ լիարժեք համարվող ընտանիքներում մեծացող երեխաների կողմից: Ընդ որում, որպես նման վիճակի բացատրություն, մենք ավելի հակված ենք այն տեսակետին, որ խնդիրը դաստիարակության ոլորտում է, երբ ծնողների և ընտանիքի մյուս անդամների կողմից երեխայի նկատմամբ չափից դուրս ուշադրությունը, նրան բոլոր տեսակի կենցաղային պարտականություններից ազատելը⁸ երեխայի մեջ ձևավորում են ամենաթողության և անպատժելիության պատկերացում:

⁸ Տե՛ս՝ **Ковтуненко Л. В.**, նշվ. աշխ., էջեր 137-143: Տե՛ս նաև՝ «Юридическая психология: учебник», М., 2003, էջեր 95-116:

Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց նաև խիստ պարտավորեցնող առաքելություն է, որը ենթադրում է նախապատրաստություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերում: Մինչդեռ ՀՀ-ում, ի տարբերություն արևմտաեվրոպական բազմաթիվ երկրների, ծնողների համար նման դասընթացների անցկացումը դեռևս տարածված երևույթ չէ: Հետևաբար ծնողները երեխաներին դաստիարակում են կա՛մ իրենց ծնողների օրինակով, վերջիններիս խորհուրդներով ու ցուցումներով (ինչու՞ չէ, նաև սխալներով), կա՛մ գործում են փորձարկումների մեթոդով՝ մոռանալով, որ «փորձարկվողը» երեխա է, և իրենց յուրաքանչյուր սխալ կարող է կործանարար լինել նրա համար:

Ամենաառանցքային խնդիրը, որն այսօր առկա է դաստիարակության ոլորտում, ծնողների և երեխաների արժեքային տարբեր կողմնորոշումներն են⁹: Այսօրվա դեռահասներից շատերի ծնողները դաստիարակություն են ստացել Խորհրդային Միության (այսուհետ՝ ԽՍՀՄ) ժամանակ ընդունելի համարվող արժեհամակարգով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, բախվելով նոր իրականությանը, ի հայտ եկած նոր արժեքներին, նրանք հայտնվեցին երկընտրանքի առջև. կա՛մ երեխաներին դաստիարակել սկզբունքներով, որոնք իրենց համար ընդունելի չեն, սակայն երեխաներին թույլ կտան գոյատևել և առաջ շարժվել նոր ձևավորված հասարակական հարաբերություններում, կա՛մ երեխաների մեջ սերմանել այն արժեքները, որոնք, իրենց կարծիքով, ավելի ճիշտ են և հիմնավոր: Վերջին դեպքում, սակայն, հետևանքը լինում է այն, որ ծնողների կողմից սերմանվող արժեքները, որոնք պետք է օգնեին երեխաներին զարգանալ, ընդունելի լինել հասարակության կողմից, իրականում ցանկալի արդյունք չեն տալիս: Ծնողների սերմանածը և իրականությունը հակադրվում են, երեխայի մեջ առաջանում է ներքին կոնֆլիկտ, որն էլ հանգուցալուծում է ստանում առաջադրված հարցերի պատասխանը ինքնուրույն կամ հասակակիցների շրջանում փնտրելով, հաճախ հանգեցնում ծնողների հետ հակասությունների, վերջիններիս հեղինակազրկման:

⁹ Տե՛ս՝ Жигинас Н. В., Зверева Н. А., Гребенникова Е. В., Девиантное поведение подростков как искажение нравственного воспитания // Вестник Томского государственного педагогического университета, 2014, № 1 (142), էջեր 39-44:

Ընտանիքի բացասական ազդեցությունն անչափահասի վրա պայմանավորված է այն հանգամանքով, որ ընտանիքը անչափահասի համար կարող է հանդիսանալ անբարենպաստ միջավայր: Ընտանեկան ապաստոցիալականացումը կարող է կապված լինել անչափահասի վրա ընտանիքի բացասական ազդեցության հետ՝ նրա հակահասարակական կողմնորոշումների ձևավորման, վարքի բացասական չափանիշների կամ ընտանիքի կողմից անվերահսկելիության տեսքով¹⁰:

Հոգեբանամանկավարժական գիտելիքների ցածր մակարդակ ունեցող ծնողների կողմից դեռահասների դաստիարակությունը ծնում է անչափահասի քրեածին վարքագծի ուղղվածություն: Նման ընտանիքներում աստիճանաբար վերանում են դրական, հուզական կապերը անչափահասների հետ, ինչը հանգեցնում է նրան, որ ծնողները կորցնում են անչափահասի շփման այլ ոլորտներում առաջացած կոնֆլիկտային իրավիճակները չեզոքացնելու իրենց հնարավորությունը: Արդյունքում անչափահասների մոտ ցանկություն է առաջանում շփման եզրեր գտնել այլ փոքր խմբերում՝ օտարված չզգալու համար:

Բազմաթիվ քրեաբաններ վաղուց ապացուցել են այն թեզը, որ հանցագործությունները ընդհանրապես, իսկ անչափահասների հանցավորությունը մասնավորապես, շատ հաճախ կապված են աղքատության հետ: Ինչպես արդարացիորեն նշում է Յու. Մ. Անտոնյանը, չպետք է մոռանալ, որ աղքատ հասարակությունը աղքատ է նաև հոգեպես, ինչը հանդիսանում է անբարոյականության և հանցավորության ներկայիս բարձր մակարդակի գլխավոր պատճառներից մեկը¹¹:

Անչափահասների հանցավորությունը, հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացների ազդեցության տակ ձեռք բերելով զարգացման նոր գծեր և ուղղություններ, մնում է և ընդմիշտ կմնա քաղաքակրթության «հավերժական ուղեկիցը»:

Անչափահասների հանցավորության կանխարգելման գործում մեծ նշանակություն ունի ընտանիքի կողմից իրականացվող սոցիալական

¹⁰ Տե՛ս՝ **Лелеков В. А., Кошелева Е. В.**, Влияние семьи на преступность несовершеннолетних. Социологические исследования, Учебное пособие. Воронеж: ВИ МВД России 2007. էջեր 85-93:

¹¹ Տե՛ս՝ **Антонян Ю. М.**, Причины преступного поведения, Криминология: Учебник для академического бакалавриата, 3-е изд., пер. и доп., Москва, Издательство Юрайт, 1992, էջ 265:

վերահսկողությունը: Նման վերահսկողությունը հանդիսանում է ոչ միայն հանցավորության դեմ պայքարի միջոցների, հնարքների համակարգ, այլև վերաբերում է կանխարգելիչ գործունեության համոզման մեթոդին:

Այսպես՝ Դ. Ա. Շեստակովը անչափահասի անձի վրա էական ազդեցություն ունեցող ընտանեկան խնդիրների թվին է դասում ներընտանեկան և շրջապատի հետ ընտանիքի կոնֆլիկտները, դրանց հետևանքով առաջացած անոմիան, ակոհոլամոլությունը, թմրամոլությունը, այսինքն՝ վարքագծի բացասական չափանիշների ձևավորումը¹²:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ **բոլոր դեպքերում ընտանիքը պետք է հանդիսանա այն անկյունաքարը, որն օժանդակի անչափահասին և թույլ չտա շեղվել բնականոն ու նորմալ վարքագծի ձևավորման ճանապարհից՝ անկախ ընտանիքում առկա սոցիալական, բարոյահոգեբանական և այլ խնդիրներից:**

Ինչ վերաբերում է քրեական ենթամշակույթին, ապա պետք է նշել, որ այն նախատեսված չի եղել որպես հանցագործություն, չնայած այն իրենից ներկայացնում է հասարակական մեծ վտանգավորություն, և այդ վտանգը առավել մեծ բացասական ներգործություն կարող է ունենալ անչափահասների վարքագծի ձևավորման վրա:

Քրեական կամ հանցավոր ենթամշակույթը բարոյահոգեբանական արժեքների համակարգ է, որը կարգավորում է հանցավոր գործունեությունը: Այս ինստիտուտի առկայությունը խթանում է հանցավոր հանրության համախմբվածությունը, հանցավոր վարվեցողության խրախուսումը և նոր սերունդների շնորհիվ քրեական արժեհամակարգային կանոնների պահպանումը: Քննարկվող երևույթի առանձին բաղադրիչներ, ինչպիսիք են ժարգոնը, դաջվածքները, ժեստերի լեզուն, աստիճանաբար սկսեցին ներառվել օրինապաշտ քաղաքացիների մշակույթում¹³:

Թեև քրեական ենթամշակույթն ունեցել է տարածվածություն թե՛ ԽՍՀՄ-ում, թե՛ Հայաստանի Երրորդ Հանրապետությունում, սակայն

¹² Տե՛ս՝ **Шестаков Д. А.**, Криминология. Учебник для вузов, 2-е изд., СПб, изд-во Р. Асланова «Юридический центр пресс», 2006, էջ 19:

¹³ Տե՛ս՝ **Вакутин Ю. А.**, Словарь жаргонных слов и выражений. Татуировки, Омск, 1979, էջ 126:

այս երևույթը քրեականացվեց ընդամենը վերջերս և նախատեսվեց ՀՀ քրեական օրենսգրքում¹⁴:

Քրեական ենթամշակույթը հիմնված է որոշակի ավանդույթների, կանոնների, նորմերի և ծեսերի վրա, որոնց կենսագործումը հակասում է իրավական պետության և օրինապահ հասարակության ելակետային սկզբունքներին՝ խարխուլելով դրանց հիմքերը: Այսօրինակ անհամատեղելիությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քննարկվող ենթամշակույթն արդարացնում և խրախուսում է հանցավոր ապրելակերպը, այդ թվում՝ հանրորեն վտանգավոր արարքների կատարումը: Միևնույն ժամանակ, քրեական ենթամշակույթը զգալի վնաս է հասցնում պետության հիմքերին՝ հասարակության առանձին հատվածի համար ստեղծելով վարքագծի նոր կանոններ, որոնք առերևույթ չեն համընկնում (ինչպես նաև հակասում են) պետության նախատեսած համապարտադիր իրավանորմերին:

Քրեական ենթամշակույթ կրող անձանց հատկանիշներից են լեզվական ձևախեղումը, մարմնի տարբեր մասերին դաջվածքների առկայությունը, ժեստային հաղորդակցությունը և այլն:

Ենթամշակույթը փոքրամասնությունների մշակույթ է, որն առաջացել է այն պատճառով, որ հասարակությունը մերժում է հանցագործներին՝ նրանց մեկուսացնելով քրեակատարողական հիմնարկներում: Վերջիններս էլ ձգտում են ձևավորել նոր շերտավորում՝ «հասարակություն հասարակության մեջ», որտեղ կգերիշխեն իրենց նախատեսած ավանդույթները, իսկ կանոններն էլ կարտահայտեն իրենց իսկ հանցավոր ձգտումներն ու գաղափարական արժեքները¹⁵:

Ներկայումս տարածված է ենթամշակույթի և այն կրող անձանց ազդեցությունը անչափահասների վարքագծի վրա՝ որպես քրեաբանական և քրեաիրավական հետաքրքրություն ներկայացնող երևույթ:

Տարբեր երկրներում մշտապես առկա է անչափահասների հանցավորության տարածման վտանգ, որն առավել ցայտուն կերպով դրսևորվում է հանցավոր աշխարհի կողմից իր ազդեցության տարածմամբ և իր

¹⁴ Տե՛ս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 223.1-րդ, 223.2-րդ, 223.3-րդ և 223.4-րդ հոդվածները: Լրացումը կատարվել է 22.01.2020 թ. (Տե՛ս՝ ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ. 167):

¹⁵ Տե՛ս՝ **Капорский С. Я.**, Воровской жаргон среди школьников: По материалам обследования Ярославская школа // Вестник просвещения, 1927, № 1, էջեր 45-50:

հանցավոր նպատակների համար անչափահասներին օգտագործելով: Ինչպես նշում են շատ իրավաբան-գիտնականներ, անչափահասների՝ տարբեր խմբերի քրեական ենթամշակույթին հաղորդակից լինելը հանդիսանում է նրանց հակահասարակական և քրեական վարքը պայմանավորող պատճառներից մեկը:

Քրեական ենթամշակույթի կրողներն անչափահասների վրա ազդեցություն են ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ նրանց հետ միասին մտնում են հանցավոր խմբավորումների մեջ, այլև անուղղակի կերպով՝ հակաիրավական արարքներ կատարելիս հաճախ լինելով նրանց հանցավոր գործունեության կազմակերպիչը¹⁶:

Անչափահասները իրենց՝ մեծահասակներից, ընդօրինակման վրա հիմնված հոգեբանության պատճառով, ներգրավվելով քրեական ենթամշակույթի մեջ, ոչ միայն ձեռք են բերում հանցագործություններ կատարելու կամ հանցավոր գործունեություն ծավալելու հակում, այլև իրենք են դառնում այդ ենթամշակույթի տարածողները այլ անչափահասների շրջանում: Իրենց հասակակիցներին ներգրավելով շփման մեջ՝ նրանց հաղորդակից են դարձնում քրեական ենթամշակույթին, քարոզում են քրեական ապրելակերպ:

Քանի որ ենթամշակույթի դեմ պայքարն իրականացվում է պետական համապատասխան մարմինների միջամտությամբ, ուստի կարող ենք նշել, որ ենթամշակույթի ազդեցությունը հասարակության առավել խոցելի շերտի՝ անչափահասների վրա կանխելու նպատակով պետության կողմից պետք է ձեռնարկվեն և իրականացվեն առավել արդյունավետ միջոցառումներ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է արձանագրել, որ անչափահասներն իրենցից ներկայացնում են հասարակության հատուկ սոցիալական շերտ իրենց արժեքներով և գաղափարներով, որոնք ձևավորվում են տարբեր գործոնների ազդեցության տակ: Կարծում ենք, որ եթե անչափահասներն իրենց ընտանիքներում ապահովված լինեն բավարար ուշադրությամբ, հոգատարությամբ և խնամքով, նրանց մոտ դեռևս նոր ձևավորվող արժեքները, սկզբունքները և կողմնորոշումները կհանդիսա-

¹⁶ Տե՛ս՝ **Пирожков В. Ф.**, Законы преступного мира молодежи (криминальная субкультура), Тверь, 1994, էջ 74:

նան պատշաճ վարքագծի ձևավորման հիմքը, ինչի մասին ավելի մանրամասն խոսվել է վերևում: Նշենք նաև, որ ընտանեկան անբարենպաստ միջավայրից բացի, անչափահասի վարքագծի վրա կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև ենթամշակույթը, ինչի տարածման համար հիմք է հանդիսանում անչափահասների կողմից հանցավոր խմբավորումների մեջ ներգրավվելը:

Կարծում ենք, որ հասարակության մեջ անչափահասների կողմից հանցագործությունների կատարումը նվազեցնելու, ինչպես նաև վերջիններիս վարքագծի մեջ **քրեածին տարրերի չեզոքացման հարցում կարևորվում է ընդհանուր սոցիալական վերահսկողությունը, որն առավել արդյունավետ է դառնում ընտանիքի կողմից իրականացվելու դեպքում**. մասնավորապես, ծնողերի կողմից պետք է հաճախակի կազմակերպվեն ժամանցի, հանգստի, ինչպես նաև անչափահասների առօրյան հետաքրքիր և արդյունավետ դարձնելուն ուղղված միջոցառումներ և ծրագրեր:

Այսպիսով՝ անչափահասների հանգստի և ժամանցի տարաբնույթ ձևերի կազմակերպումը ոչ այլ ինչ է, եթե ոչ աճող սերնդի համար առողջ կենսակերպի ապահովում, որի հետ մեկտեղ լուծվում են նաև անչափահասների հանցավորության կանխարգելման խնդիրները: Եվ չնայած, որ ընդհանուր սոցիալական բնույթի կանխարգելման միջոցները չեն կարող ունենալ հատուկ նշանակություն, սակայն կարող են էականորեն ազդել հանցավորության մակարդակի, շարժի և կառուցվածքի վրա, քանի որ կստեղծեն պայմաններ՝ չեզոքացնելու, արգելափակելու կամ էլ վերացնելու այն գործոնների ազդեցությունը, որոնք պայմանավորում են անչափահասների հանցավոր խմբերի ձևավորումը և գործունեությունը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ անչափահասների հանցավորության նվազեցման, ինչպես նաև անչափահասի նոր ձևավորվող վարքագծի համար կարևորվում է այն հարցը, թե ծնողների կողմից դաստիարակության ինչպիսի մեթոդներ են կիրառվում:

Երեխաների դաստիարակության հարցերում ոչ բոլոր ծնողներն են իրենց մոտեցումներում կարևորում անհրաժեշտ հոգեբանական, մանկավարժական տարրերը, և վերջիններիս բացակայության հետևանքով ծնողների կողմից թույլ են տրվում երեխայի իրավունքների խախտում, բռնության գործադրում, ազատությունից զրկում, ինչպես նաև իրենց այդ

վարքագծով երեխայի մոտ հոգևոր արժեքներ սերմանելու փոխարեն ձևավորում են շահադիտական, սպառողական հոգեբանություն:

Ուստի կարծում ենք, որ ՀՀ-ում **անհրաժեշտ է ծնողների համար նախատեսել հատուկ դասընթացներ՝ երեխաների դաստիարակման գործընթացում անհրաժեշտ մանկավարժական, հոգեբանական գիտելիքներ տալու, հմտություններ ու կարողություններ ձևավորելու նպատակով, ինչը խթան կհանդիսանա նաև հասարակության անդամների իրավագիտակցության բարձրացման համար:**

НЕБЛАГОПРИЯТНОЕ СЕМЕЙНОЕ ОКРУЖЕНИЕ И КРИМИНАЛЬНАЯ СУБКУЛЬТУРА КАК ФАКТОРЫ, СПОСОБСТВУЮЩИЕ ПРЕСТУПНОСТИ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Хачатрян Игнат Рубикович

*Учащийся 4 курса очного бесплатного
обучения бакалавриата факультета правоведения
Академии Образовательного комплекса
полиции РА, старший сержант полиции*

В статье обсуждается уровень преступности несовершеннолетних в Республике Армения. В частности, подчеркивается негативное влияние факторов, способствующих преступности несовершеннолетних, таких как неблагоприятная семейная среда и уголовная субкультура, которые воздействуют на мировоззрение несовершеннолетних и формируемое поведение. В качестве ключевого фактора отмечается важность родительского контроля, а также системы методов, отобранных родителями в вопросах воспитания.

Ключевые слова: *преступность несовершеннолетних, уголовная субкультура, семья, родительский контроль, отклоняющееся поведение.*

THE UNFAVORABLE FAMILY CHARACTERISTICS AND CRIMINAL SUBCULTURE AS FACTORS CONTRIBUTING TO JUVENILE DELINQUENCY.

Khachatryan Ignat

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

The article discusses the level of juvenile criminality in the Republic of Armenia. In particular, the author highlights the two factors that have negative influence on juvenile criminality: the unfavorable family characteristics and criminal subculture. The main factor is the importance of parental control, as well as the methods and means of upbringing chosen by parents.

Key words: *juvenile criminality, criminal subculture, family, parental control, deviated behavior.*

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ ПОДРОСТКОВ В ИНТЕРНЕТ СЕТИ

Карапетян Мариам Егишеевна

*Преподаватель кафедры обществоведческих
дисциплин и психологии Образовательного
комплекса полиции РА, майор полиции*

В современном обществе, наряду с другими обсуждаемыми вопросами, одними из важных можно считать те, которые могут повлиять на сокращение роста преступлений и повышение эффективности их предупреждения среди подростков. Здесь уместно отметить, что возрастные особенности подростков требуют психологически грамотного подхода. Интернет пространство, которое имеет положительное влияние на развитие экономики, вместе с этим приводит к новым информационным угрозам. Механизмы информационного воздействия на индивида, посредством сети Интернет широко используются в целях обострения международной и социальной напряженности, а также привлечения к террористической деятельности. Все вышесказанное обуславливает актуальность и необходимость начатого исследования.

Преступность подростков определяется многочисленными факторами, влияющими на формирование элементов преступности. Они связаны как с возрастными, так и с психологическими особенностями подростков.

Цель данной статьи – выявить основные причины, влияющие на преступность подростков, негативные социальные явления, связанные с преступностью подростков, дать анализ их психологических особенностей, выделить основные направления предупреждения преступлений подростков.

Гипотеза – мы предполагаем, что профилактику противоправного поведения подростков будет уместно начинать с детства, уделяя основное внимание формированию высоконравственных ценностей у подростков.

Причины и условия преступности подростков во многом обуславливаются негативными социальными процессами. Вместе с тем их дейст-

вия отличаются такими особенностями психологии подростков, как повышенная чувствительность к социальным явлениям и к личным особенностям, которые влияют на деформирование их ценностных и нравственных ориентаций¹. В этом возрасте подросток чувствительно изменчив, для него типично повышенная раздражительность, грубость и вспыльчивость.

Преступность подростков обусловлена сочетанием ряда отрицательных факторов и внешней среды, и личности самого подростка. Одним из основных условий формирования личностных качеств подростка является семейное неблагополучие, поскольку именно семья является наиболее важным фактором, воздействующим на развитие личности подростка. Значительное отрицательное воздействие на развитие подростков оказывают также недостатки в воспитании подростков в школе². В совершении преступления подростками можно выделить следующие факторы: неблагоприятную атмосферу в семье, неправильную организацию досуга подростков и беспризорность³. Причины правонарушений подростков связаны с психологической, социальной, моральной нестабильностью, обстоятельствами, перед которыми еще несформировавшийся ум подростка не может устоять. Исследователи этой сферы считают, что из многочисленных факторов, которые, оказывают наибольшее воздействие на преступное поведение подростков, первостепенными в наши дни считаются социальные факторы и психологические особенности личности. Психологическая мотивация совершения преступлений у подростков кроется в их внутреннем мировосприятии, в их самосознании, сформировавшихся, в первую очередь, под воздействием норм нашего современного общества. В подростковом возрасте ярко выявляется обособление характера, что, в свою очередь, может выступать предпосылкой преступного поведения подростков. А. Е. Личко отмечал: «Подростки с явными обособлениями составляют группу повышенного риска, они податливы к пагубным воздействиям среды и психи-

¹ Еникеев М. И., Общая, социальная и юридическая психология: Учебное пособие., Спб.: Питер, 2015, с. 215.

² Сорокотягин И. Н., Юридическая психология: Учебник. М.: Юрайт, 2015. С. 200.

³ Дидык А. Н., Причины и условия преступности несовершеннолетних // Вопросы науки и образования. 2018. № 2 (14). С. 68–69.

ческим травмам⁴. Криминологи и психологи отмечают, что уровень подростковой преступности показывает, в каком состоянии находится общественная нравственность, эффективность функционирования социальных институтов, благополучие либо неблагополучие всего общества⁵. В частности, в Армении преступления подростков являются комплексной, социальной проблемой.

Формирование личности подростков происходит под воздействием многочисленных факторов: семьи, образовательного учреждения, общества, сети Интернет. Механизм влияния сети Интернет на личность подростков довольно запутанный и многообразный. При этом нужно принимать во внимание особенности поведения подростков, которые во многом формируются непоследовательностью их возрастного положения. На наш взгляд, в основе проблемы преступности подростков лежит в большей части дурное воздействие информационной среды. Помимо того, не самой лучшей атмосферы в семье, школе, многие дети подвержены воздействию негативного информационного поля. Все это в значительной мере воздействует на еще неокрепший ум подростка⁶. Для образования определенного стереотипа мышления в сети Интернет применяются особые психологические технологии, как: отвлечение внимания, создание иллюзий восприятия, ограничение материала, эмоциональное обострение и т. д.

Очень могучим и внушительным средством воздействия в сети Интернет являются фильмы, видеоролики, клипы, которые доносят до зрителей не сухие факты, а по средствам ярких образов, увлекательных и интересных сюжетов диктуют определенные примеры поведения. Так, подростки наиболее часто в интернете сталкиваются с контентом, в котором содержатся данные о мерах совершения отдельных видов преступ-

⁴ **Личко, А. Е.**, Психопатии и акцентуации характера у подростков. СПб.: Речь, 2013. – с 23.

⁵ **Зайко Т. М.**, Меры борьбы с преступностью несовершеннолетних и молодежи: правовой и психологический аспекты: монография. М-во образования и науки РФ, УрГЮУ. Тамбов: ООО «Консалтинговая компания Юком», 2017, с. 4-5

⁶ **Богданов А. В., Комяхин Б. Н., Хазов Е. Н.**, Преступность несовершеннолетних: новые решения и новые проблемы // Вестник Московского университета МВД России. 2013. № 4. С. 34–38.

лений и способах изготовления наркотических и психотропных веществ. Родители должны позаботиться о блокировании нежелательных сайтов в Интернете. Сетевые игры также часто становятся причиной преступности подростков. Особого внимания, на наш взгляд, заслуживает и проблема воздействия на образование аморального поведения у подростков распространения в сети Интернет компьютерных игр с элементами агрессии. Отсутствие законодательного запрета на фото- и видеоматериалы, которые содержат элементы подростковой жестокости, и ограничений на участие в специализированных форумах асоциальной направленности не дают возможности принимать меры по их блокировке и удалению. Это свидетельствует о необходимости разработки государственных механизмов контент-анализа, контроля и регулирования информационных потоков, находящихся в глобальной сети Интернет, с помощью создания инструментов фильтрации, которые будут направлены на ограничение свободного доступа подростков к ресурсам, способным пагубно воздействовать на развитие личности подростка. Зная факторы, определяющие преступность подростков, механизм негативного влияния сети Интернет, государство обязано создать меры по предупреждению преступности и предотвратить возможные причины неприемлемого поведения.

Серьезную опасность для подростков представляют также специальные форумы в социальных сетях. Использование сети Интернет дает возможность преступникам интенсивно осуществлять вербовку новых участников преступной деятельности, активно обмениваться сведениями о мерах производства наркотических средств, местах их приобретения, проводить расчеты посредством электронных платежных систем с применением виртуальных денег. Беззащитность подростков от неправомерного контента в сети Интернет усугубляет проблемы, которые связаны с торговлей детьми, преступлениями порнографического характера, суицидом, способствует омоложению наркобизнеса и увеличению числа фактов вовлечения подростков в преступную деятельность при помощи сети Интернет.

Основной задачей государственной политики в этой сфере должно являться своевременное выявление опасностей преступности и принятие

способов по их ликвидации⁷. Решение данной задачи возможно путем осуществления профилактики правонарушений, под которой понимается комплекс мер социального, правового, организационного, информационного характера, направленные на обнаружение и предотвращение причин, которые способствуют совершению правонарушений. Правовое урегулирование предупреждения преступности состоит в законотворческой деятельности государства, выражающейся в законах и в нормативных актах. Правовую основу системы предупреждения правонарушений в отношении подростков в сети Интернет составляют положения Конституции Республики Армения, общепризнанные нормы международного права, международные договоры и нормативные акты. Неразделимой частью предупреждения преступности является законодательное обеспечение деятельности, направленной на сокращение причин совершения правонарушений и условий, которые способствуют этому.

В современных условиях борьба против преступлений, которые совершают подростки, представляет, как научный, так и практический интерес. Также довольно актуальной проблемой на сегодняшний день является и усовершенствование организационно-правовых основ деятельности по предупреждению преступлений, при участии подростков. В предупреждении преступлений, совершаемых подростками, есть особенности, которые определяются различием подростков от людей иных возрастных категорий, а также специфической особенностью совершаемых ими преступлений. Эффективным условием борьбы с преступностью подростков является устранение этих факторов и реабилитация подростков, уже совершивших преступление. При этом, важное значение имеет ранняя профилактика, преступного поведения подростков, среди мер которых можно выделить следующие: выявление неблагополучных семей, установление опеки и попечительства, выявление интересов подростков на раннем этапе формирования личности и другие.

Особенным путем предупреждения преступности подростков является развитие спорта, разных творческих кружков, повышение инте-

⁷ **Западнава Ю. А.**, Преступления против несовершеннолетних: тенденции, прогноз и меры предупреждения // Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. 2016. № 14-2. С. 37.

реса к здоровому образу жизни. Кроме того, для ранней профилактики преступлений подростков необходимо разрабатывать детские интеллектуально-развивающие телепередачи, организовывать творческие и интеллектуальные конкурсы, введение уроков правового воспитания в образовательных учреждениях. Необходимо также предусмотреть в данном плане производство фильмов и мультфильмов для подростков, сюжет которых будет содержать информацию о рисках и угрозах, связанных с применением сети Интернет, и мерах, направленных на профилактику. В отношении предупреждения преступности подростков следует осуществить следующие меры: ослабление детской агрессии, приспособление подростков к жизни в современном обществе путем, беседы с детским психологом. Главными задачами предупреждения являются: сокращение уровня преступности, недопущение воздействия лиц, которые совершают противоправные действия на умы подростков, устранение преступных наклонностей у подростков на раннем этапе их развития⁸. Деятельность по профилактике преступности подростков требует также правового регулирования. Совокупность профилактических мероприятий по отношению подростков осуществляют разные государственные и общественные организации. Большую роль в профилактике преступлений, совершаемых подростками, играют правоохранительные органы, поскольку именно они имеют наиболее полную информацию о состоянии, динамике и структуры преступности, о причинах и условиях преступности, о лицах, у которых есть склонность к совершению преступлений. Занимаясь общей профилактикой, правоохранительные органы устанавливают в разных сферах социальной жизни причины и условия, которые способствуют совершению подростками преступлений, отрабатывают и выполняют мероприятия по их предотвращению.

Подводя итоги, можно сформулировать следующие выводы. Итак, главным компонентом для устранения нежелательного влияния информации, которые отрицательно воздействуют на психологию и формирование подростков, должны выступать родители, которые, обязаны воспитывать, заниматься образованием и развитием своих детей, должны ограждать их от вредоносного воздействия контента. Вместе с роди-

телями, одним из главных субъектов профилактики плохого поведения подростков являются образовательные учреждения.

Таким образом, обеспечение информационной безопасности подростков с помощью осуществления общей государственной политики в области защиты прав подростков от информации, которые причиняют вред их здоровью, нравственному и духовному развитию, является важнейшей задачей семьи, образовательного учреждения, правоохранительных органов и других институтов государства, решение которой возможно только при совместной деятельности перечисленных субъектов.

Результаты изучения преступности подростков, анализ психологической характеристики личности преступника, факторы, определяющие его преступное поведение, дают возможность сделать следующие выводы.

Проблема преступности среди подростков по-прежнему остаётся острой. Поведение подростков обусловлено не только ошибками воспитания в семье, недостаточной деятельностью учебных заведений, общественных институтов, но также негативным воздействием сети Интернет. Интернет пространство имеет двойственный характер: с одной стороны, оно предоставляет огромные возможности по социализации и развитию личности, а с другой – создает проблемы, которые связаны с применением информационных ресурсов преступными элементами. Наибольшую опасность представляют социальные сети, специализированные сайты, основной аудиторией которых являются подростки. Отсутствие законодательного запрета на распространение в сети материалов, в которых содержатся элементы подростковой жестокости, популяризацию криминальных норм и ценностей, действия, причиняющие вред достоинству подростка, не дают возможность принимать меры по их блокировке и удалению. Это свидетельствует о необходимости разработки государственных механизмов контент-анализа, контроля и регулирования информационных потоков, находящихся в глобальной сети Интернет, с помощью создания механизмов фильтрации, направленных на ограничение свободного доступа подростков к ресурсам, которые способны оказать пагубное воздействие на формирование личности подростка.

Проведенное исследование воздействия сети Интернет на образование недостойного поведения подростков, дает возможность подытожить и предложить мероприятия по предотвращению преступности.

Итак, по нашему мнению, путем улучшения воспитания в семье и школе следует совершенствовать раннюю профилактику отклонений от норм поведения. Законодательно должен быть определен перечень и порядок проведения мероприятий по предупреждению влияния в сети Интернет. Комплексное проведение профилактической работы всеми субъектами, усовершенствование законодательной базы, регламентирующей вопросы профилактики, будут способствовать снижению уровня влияния сети Интернет на подростков.

Эффективное обеспечение безопасности подростков от негативного воздействия контента сети Интернет зависит не только от действий государственных и правоохранительных органов и должно достигаться превентивными мерами при поддержке всего общества. Осуществление всего комплекса мер по профилактике и предупреждению правонарушений подростков требует как значительного кадрового и материально-ресурсного обеспечения, так и изменения психологии тех профессионалов, которые занимаются данными проблемами. В целом, все вышеизложенное подтверждает необходимость проведения комплексных мер, направленных на совершенствование профилактической деятельности. Совместное регулирование информационной безопасности предусматривает следующие направления реализации: повышение уровня медиаграмотности детей; формирование у детей механизмов критической оценки получаемой информации; разработка и внедрение социальных образовательных и просветительских программ; совершение механизмов блокировки сайтов в сети Интернет; внедрение эффективных современных технических и программных средств защиты детей от информации, причиняющей вред. Предлагаемые меры, на наш взгляд, должны дать определенный профилактический эффект, при условии, если будут подкреплены целым комплексом социально-экономических, политических и государственных мер.

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПРЕСТУПНОСТИ ПОДРОСТКОВ В ИНТЕРНЕТ СЕТИ

Карапетян Мариам Егишеевна

Преподаватель кафедры обществоведческих дисциплин и психологии Образовательного комплекса полиции РА, майор полиции

В современном обществе наряду с другими обсуждаемыми вопросами одними из важных можно считать те, которые могут повлиять на сокращение роста преступлений и повышение эффективности их предупреждения среди подростков. Здесь уместно отметить, что возрастные особенности подростков требуют психологически грамотного подхода. Интернет пространство, которое имеет положительное влияние на развитие экономики, вместе с этим приводит к новым информационным угрозам. Механизмы информационного воздействия на индивида посредством сети Интернет широко используются в целях обострения межнациональной и социальной напряженности, а также привлечения к террористической деятельности. Все вышесказанное обуславливает актуальность и необходимость начатого исследования.

Преступность подростков определяется многочисленными факторами, влияющими на формирование элементов преступности. Они связаны как с возрастными, так и с психологическими особенностями подростков.

Ключевые слова: *подросток, Интернет сеть, психологические особенности, подростковый возраст.*

PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF JUVENILE DELINQUENCY PREVENTION THROUGH THE INTERNET

Karapetyan Mariam

Lecturer at the Chair of Social Sciences and Psychology of the College of Educational Complex of Police of the Republic of Armenia, Major of Police

In modern society the problem of the decrease in the rate of juvenile delinquency and the increase in the effectiveness of crime prevention is becoming highly important. Notably, the age characteristics of adults require a psychologically accurate approach towards the solution of this problem. The Internet, having a positive influence on economic growth, meanwhile leads to new threats. The

mechanisms of information impact on an individual are widely used for aggravating the international and social tension, as well as inciting adults to terrorist acts. The above mentioned facts prove the relevance and the necessity of this research. Juvenile delinquency is characterized by different factors that form the elements of crime. They are connected with both age and psychological characteristics of adults.

Key words: *adult, Internet, psychological characteristics, adult age.*

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հակոբյան Հրաչյա

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

իրավագիտության ֆակուլտետի վճարովի

ուսուցման 3-րդ կուրսի սովորող

Ժողովրդավարական պետության և քաղաքացիական հասարակության կայացման ու զարգացման գործընթացներում, անտարակույս, խիստ էական է հավաքների ազատության դերակատարությունը: Այն հանդես է գալիս որպես քաղաքացիների՝ քաղաքական որոշումների կայացմանը մասնակցելու անուղղակի նախաձեռնությունների արտահայտություն և իշխանության մարմինների հաշվետվողականության ապահովման իրական գրավական:

Ընդ որում, հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից միայնակ կամ իր համախոհների հետ միասին հանրության առջև իր կարծիքն ազատորեն արտահայտելը, հանրային կարծիքի ձևավորման գործընթացին մասնակցելը, հասարակության անդամների կողմից իրավական իրողությունների ընկալման և գնահատման վրա ազդելուն ուղղված հրապարակային միջոցառումները կարող են արդյունավետ մեկնարկ հանդիսանալ՝ հանրային իշխանության և հասարակության միջև քաղաքական խնդիրների լուծման, ժողովրդաիշխանության իրացման ձևերի կատարելագործման և հասարակության կողմից պետության գործունեության նկատմամբ վերահսկողության բարձր նշաձող սահմանելու համար:

Այս աշխատանքի շրջանակներում մեր դիտարկման առանցքը ոստիկանության դերի ուսումնասիրությունն է հավաքի մասնակիցների և հանրային իշխանության միջև փոխհարաբերությունների համատեքստում: Մեր կարծիքով, վերը նշված դերակատարությունը նպատակահարմար է քննարկել՝ համադրելով պետության՝ ի դեմս ոստիկանության, պոզիտիվ պարտականության իրականացումը հարկադրանք կիրառելու բացառիկ իրավասությանը:

Հարկ է նշել, որ օրենսդիրը հստակ ամրագրում է հավաքի ընթացքում ուստիկանության պարտականությունների շրջանակը, մասնավորապես՝

- հավաքի մասին տեղեկատվություն ստանալուց հետո անհապաղ նշանակել իր ներկայացուցչին և այդ մասին հայտնել կազմակերպչին ու լիազոր մարմնին,
- ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը հավաքին,
- հավաքի անցկացման վայրից հեռացնել այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը, եթե այլ կերպ հնարավոր չէ ապահովել այն,
- ապահովել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը,
- բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության, եթե հավաքն անցկացվում է օրենքով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ,
- իր իրավասությունների սահմաններում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի¹:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ ուստիկանության պարտականություններից յուրաքանչյուրը ներամփոփ է հանրային հավաքների ընթացքում իրավակարգի պաշտպանության հիմնական սկզբունքներին: Վերջիններս ներկայացնում են հավաքների ընթացքում իրավակարգի պաշտպանության որոշակիացված մոտեցումների հիմնարար շրջանակները՝ ընդգրկելով ուստիկանության գործունեության ժողովրդավարական հիմքերը, հավաքի մասնակիցների վարվեցողության ընկալումը, իրավակարգի ապահովումը, տեղեկատվության տիրապետումը, համագործակցությունը, հաղորդակցումը, հավաքի մասնակիցներին դիֆերենցված մոտեցումը² :

¹ Տե՛ս «Հավաքների ազատության մասին» ՀՀ 2011 թ. ապրիլի 14-ի օրենքը, հոդված 32 (ՀՀՊՏ 2011.04.22/23(826) Հոդ. 452, 02. 05. 2011) [https://hudoc.echr.coe.int/eng#-{"itemid":\["001-78330"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#-{).

² Տե՛ս Права человека и обеспечение правопорядка во время публичных собраний Руководство БДИПЧ ОБСЕ 2016, էջեր 27-40:

Միաժամանակ ընդգծենք, որ հավաքների ընթացքում ռիսկի կարևորագույն գործոն է ոստիկանության վերաբերմունքը ոչ միայն խմբի կամ ամբոխի, այլև հավաքի յուրաքանչյուր մասնակցի, այդ թվում հնարավոր հանցավոր վարքագիծ դրսևորող անձանց նկատմամբ:

Այս պարագայում կարևոր է հաշվի առնել ոստիկանական ուժերի բաշխման քանակական նպատակահարմարությունը՝ կապված հավաքի մասնակիցների կոնկրետ (իրազեկմամբ անցկացվող հավաքների դեպքում) կամ ենթադրյալ (ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում) թվաքանակի, ինչպես նաև ցուցարարներից յուրաքանչյուրի վարքագծային առանձնահատկությունների հետ:

Որպես կանոն, ոստիկանության՝ օրենքով սահմանված գործելակերպի առանձին դրսևորումներ (հավաքի անցկացման վայրից հեռացնել հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը խախտող անձանց, օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկել սահմանված կարգի խախտմամբ հավաքն անցկացնողներին, դադարեցնել հավաքը, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը և այլն) անհարկի քննադատությունների տեղիք կարող են տալ քաղաքացիների շրջանում, այն դեպքում, երբ վերջիններիս կողմից բարձրաձայնված հարցերի լուծման համար հանրային իշխանության մարմինների կողմից առաջարկություններ ներկայացնելու գործընթացը հապաղում է³:

Ակներև է, որ օրենսդրական ակտերը որևէ դրույթ չեն պարունակում այն մասին, թե ինչպես պետք է արձագանքեն համապատասխան իշխանության մարմինները հավաքների հիմնական պահանջներին, ինչպես պետք է դրանք ներկայացվեն հանրային իշխանության մարմիններին, ինչ կարգով պետք է պատասխանել բարձրացված հարցերին և այլն: Այնինչ, օրենսդրությամբ տրամաբանորեն անգամ մի առանձին քաղաքացու դիմումը ենթակա է սահմանված կարգով քննարկման, իսկ այդ առնչությամբ կայացված որոշումը ենթակա է բողոքարկման, մինչդեռ անհամեմատ մեծ քանակով հանրության ներկայացուցիչների ակտիվ

³ Նկատենք, որ բացասական վերաբերումնքը կարող է արտահայտվել նույնիսկ այն դեպքում, երբ ոստիկանությունը օրենքով սահմանված դեպքերում հարկադրանք է կիրառում հասարակական կարգը ապահովելու կամ այլոց սահմանադրական իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

քաղաքացիական նախաձեռնությամբ դրսևորվող պահանջներին արձագանքելու ընթացակարգերի առնչությամբ որևէ օրենսդրական լուծում չի առաջադրված:

Մեր կարծիքով, հավաքների ազատության իրավունքի կարգավորման վերաբերյալ որոշումներ կայացնող պատասխանատու մարմնի իրավական կարգավիճակի ամրագրումը և գործառույթների հստակ սահմանումը կարող է մեծապես նպաստել հավաքների ազատության իրավունքի արդյունավետ իրացմանը:

Այստեղ, ոստիկանության՝ հավաքի բնականոն և խաղաղ ընթացքն ապահովելու իրավասության հետ մեկտեղ նպատակահարմար է քննարկել նաև ոստիկանության այլ անձանց սահմանադրական իրավունքների ու հանրության շահերի պաշտպանության համար միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը:

Աներկբա է, որ մարդու և պետության փոխհարաբերությունների իրավակարգավորման բազմաշերտ տիրույթում պետության գործառույթների իրականացման նպատակով հաճախ անհրաժեշտություն է առաջանում պետական հարկադրանք կիրառել, որի միջոցով պետությունը հակազդում է հակասոցիալական արարքներին, սահմանափակում է սոցիալապես անցանկալի գործողությունների ազատությունը: Այսինքն՝ պետական հարկադրանքի կիրառմամբ պետությունն ազդում է մարդկանց գիտակցության և վարքագծի վրա:

Այս առումով ուշագրավ են մեր կողմից իրականացված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները: Խոսքը վերաբերում է հետևյալ իրավակարգավորումներին.

ԳԴՀ «Հավաքների ազատության մասին» օրենքը ոստիկանության կողմից հասարակական կարգի ապահովման պարտականությունը համադրում է հավաքի կազմակերպչին աջակցելու պարտականությանը, ինչը կարող է արտահայտվել հավաքի անցկացման վայրից հավաքի խաղաղ և բնականոն ընթացքը խախտող անձանց հեռացնելով: Բացի այդ, օրենսդրությամբ հստակ ամրագրված է հավաքը ցրելու իրավաչափ հիմքը՝ կոնկրետ վտանգ, որի առկայության մասին իշխանության մարմինները պետք է ապացույց ներկայացնեն⁴:

⁴ <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14340> (30.08.2020 16:30).

Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությունը հավաքը ցրելու առանձին ընթացակարգ է սահմանում, որը կապված է զինված հավաք կազմակերպելու կամ ոստիկանության կողմից ոչ պակաս, քան երկու անգամ հավաքը դադարեցնելու պահանջի հետ: Արդյունքում կամավոր չհեռանալու դեպքում նախատեսվում է ընդհուպ քրեական պատասխանատվություն՝ մեկ տարի ազատազրկում⁵:

Այլ պատկեր է Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորությունում, մասնավորապես «Հասարակական կարգի պահպանության օրենքում» նշվում է, որ եթե հավաքը կրում է ստատիկ բնույթ և իրականացվում մեկ վայրում՝ առանց ճանապարհի փակելու, ապա ոստիկանությունն իրավունք չունի ցրել հավաքը: Այլ է պատկերը, երբ հավաքին մասնակցող անձանց թիվը գերազանցում է 20-ը: Այդ դեպքում ոստիկանությունը իրավասու է պահանջներ սահմանելու և դիմելու տեղական ինքնակառավարման մարմնին՝ հնարավոր անկարգությունները կանխելու թույլտվություն ստանալու կամ հավաքը ցրելու համար: Առանձին հիմքով պատասխանատվություն է նախատեսված նաև հավաքի կազմակերպիչների համար, այն դեպքում, երբ հավաքի ղեկավարները ժամանակին չեն զեկուցում ոստիկանությանը զանգվածային անկարգությունների վերաբերյալ⁶:

Փաստորեն թե՛ ներպետական օրենսդրությունը, թե՛ միջազգային իրավակարգավորումները վկայում են հավաքների ընթացում ոստիկանության երկակի կարևոր դերակատարության մասին: Նախ՝ իր իրավասությունների սահմաններում աջակցելու հավաքին, այնուհետև՝ օրենքով սահմանված դեպքում արգելքներ սահմանելու՝ դադարեցնելով կամ ցրելով հավաքը:

Այս համատեքստում հասարակական կարգի պահպանության նպատակով արգելքների սահմանումը կարող է արդարացված համարել միայն այն դեպքում, երբ առկա են ապացույցներ առ այն, որ հավաքի մասնակիցները կարող են իրականացնել կամ դրդել անօրինական և հասարակական կարգը խախտող գործողությունների, և կա այդ գործողությունների տեղի ունենալու հավանականություն:

⁵ <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14334> (30.08.2020 16:30).

⁶ Տե՛ս https://ria.ru/20120521/654426496.html?fbclid=IwAR1wFSgg0mjv_rsZ-hjZ4HkvHtLNabF3ox5DM4xAcI2In841C_wWu-JryS4 (02.09.2020, 15:30).

Մեր կարծիքով, արգելքը վերջին միջոցն է, որի կիրառության հարցը պետք է քննարկել միայն այն դեպքում, երբ նվազ խիստ միջոցառումը չի ապահովի այլ էական շահեր երաշխավորելու առումով իշխանությունների հետապնդած նպատակի իրագործումը:

РОЛЬ ПОЛИЦИИ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА СВОБОДУ СОБРАНИЙ

Акопян Грачья Ашотович

Студент 3-го курса юридического факультета

Академии платной формы обучения Образовательного комплекса полиции РА

В научной статье обсуждается роль полиции в контексте реализации права на свободу собраний. Автор выдвигает конкретные предложения касательно целесообразности закрепления правового статуса органа, регулирующего право на свободу собраний, а также необходимости снижения ограничений.

Ключевые слова: митинг, закон, полиция, государство, участники митинга.

ROLE OF THE POLICE IN THE CONTEXT OF IMPLEMENTING THE RIGHT TO FREEDOM OF ASSEMBLY

Hakobyan Hrachya

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 3rd year

The scientific article discusses the role of the police in the context of experiencing the right to freedom of assembly. The author makes suggestions on the expediency of ensuring the legal status of the body regulating the right to freedom of assembly, as well as the need to reduce restrictions.

Key words: assembly, law, police, state, participant of assembly.

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԵՎ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԲԵՌԻ (ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Հակոբյան Միլենա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի
վճարովի ուսուցման 4-րդ կուրսի սովորող*

Ապացուցման բեռի (պարտականության) բաշխման կանոնները շատ դեպքերում որոշվում են կանխավարկածների միջոցով: Օրինակ՝ անմեղության կանխավարկածի սահմանադրական սկզբունքի պահանջներից է, որ մեղադրողը պետք է ապացուցի անձի մեղավորությունը: Միևնույն ժամանակ դատավարական իրավունքի զարգացման ներկա պայմաններում ապացուցման բեռի (պարտականության) բաշխման խնդիրն ընկալվում է փոքր-ինչ այլ կերպ, հաճախ քննարկվում է օրենքով նախատեսված դեպքերում առանձին վարկածների ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու թույլատրելիության հարցը:

Սույն հոդվածում խնդիր ունենք պարզաբանելու այն հարցը, թե արդյոք դատավարական իրավունքի զարգացման ժամանակակից միտումների և անմեղության կանխավարկածի համատեքստում թույլատրելի է առանձին վարկածների ապացուցման պարտականությունը դնել մեղադրյալի վրա:

Դեռևս նախահեղափոխական ժամանակաշրջանի հայտնի իրավաբան Լ. Վլադիմիրովը գտնում էր, որ ապացուցման բեռը կարող է դրվել մեղադրյալի վրա միայն այն դեպքերում, երբ՝

1. որոշակի գործողություն կատարելու կամ ինչ-որ իրի տիրապետման համար պահանջվում է օրինական թույլտվություն, լիազորություն կամ էլ ընդհանրապես պետք է ներկայացվի արդարացնող պատճառ,
2. մեղադրանքի օգտին մեղադրական ապացույցներ ներկայացնելու հետևանքով ծագում է հիմնավորված ենթադրություն¹:

¹ Տե՛ս, **Владимиров Л. Е.**, Учение об уголовных доказательствах. Тула, 2000, էջ 159:

Քրեական դատավարությունում կանխավարկածի միջոցով ապացուցման բեռի բաշխման կանոններն ապահովում են տարբեր շահեր, որոնց մեջ առաջնայինը կողմերի մրցակցային հավասարությունն է: Այն կողմը, որը օբյեկտիվորեն մյուս կողմի համեմատ գտնվում է առավել թույլ, այսինքն՝ անհավասար վիճակում, կարող է պաշտպանվել կանխավարկածով: Վերջինս թույլ կողմին ազատում է իր համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման անհրաժեշտությունից: Տեսության մեջ նշվում է, որ ապացուցման պարտականությունը դրվում է կողմի վրա այն հիմնավորմամբ, որ վերջինս.

1. իր նյութական և կազմակերպական հնարավորություններով փաստացի ավելի ուժեղ է, քան հակառակ կողմը,
2. ապացուցման ենթակա հանգամանքը օբյեկտիվորեն հասանելի է տվյալ կողմի համար:

Այսպես՝ անմեղության կանխավարկածը պաշտպանում է կասկածյալին և մեղադրյալին՝ մեղավորության ապացուցման պարտականությունը դնելով մեղադրողի վրա, քանի որ պաշտպանության կողմը, որպես կանոն, իր հնարավորություններով փաստացի թույլ է, քան հանրային՝ քրեական հետապնդման կողմը, որը կարող է օգտագործել պետության կազմակերպական և նյութական ռեսուրսը:

Սակայն իրավիճակը արմատապես փոխվում է հատուկ դեպքերում, երբ պաշտպանության կողմը օբյեկտիվորեն գտնվում է անհամեմատ առավել բարենպաստ վիճակում, քան մեղադրանքի կողմը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ մեղադրողը ստիպված է հերքելու, այսպես կոչված, բացասական փաստերը (ինչ-որ մի փաստի բացակայությունը), որոնց վրա հենվում է պաշտպանության կողմը, հատկապես եթե բացասական փաստերը միաժամանակ համարվում են գործով գլխավոր փաստերը: Բացասական փաստերը կարելի է ապացուցել այն դեպքում, երբ այն հաստատվում է այլ դրական փաստերով, օրինակ՝ ապօրինի զենք կրելու կամ պահելու գործերով նշված փաստը կարող է հաստատվել այլ անձից այդ զենքն ապօրինի կարգով ձեռք բերելու փաստով²:

² Տե՛ս, **Калиновский К. Б., Смирнов А. В.**, Презумпции в уголовном процессе. Российское правосудие. 2008. № 4, էջ 68-74:

Առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելու վերաբերյալ դրույթներ պարունակում են նաև մի շարք միջազգային կոնվենցիաներ: ՄԱԿ-ի Անդրազգային հանցավորության դեմ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մասնակից պետությունները կարող են քննարկել այն հնարավորությունը, որ հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձն ապացուցի հանցագործությունից ստացված ենթադրյալ եկամուտների կամ բռնագրավման ենթակա այլ գույքի օրինական ծագումն՝ այն չափով, որքանով այդպիսի պահանջը համապատասխանում է իրենց ներքին օրենսդրության սկզբունքներին և դատական կամ այլ քննության բնույթին:

Կոռուպցիայի դեմ 2003 թ. ՄԱԿ-ի Կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր սահմանադրության և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով քննության է առնում իբրև քրեորեն պատժելի արարք անօրինական հարստացումը ճանաչելու հնարավորությունը, այսինքն՝ հանրային պաշտոնատար անձի ակտիվների՝ նրա օրինական եկամուտները գերազանցող նշանակալի մեծացումը, որը նա չի կարող ողջամտորեն հիմնավորել:

Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի Կոնվենցիայի վերոհիշյալ նորմի կապակցությամբ Մ. Խաչատրյանը նշում է, որ Կոնվենցիայի 20-րդ հոդվածով սահմանված դրույթն այն մասին, որ պաշտոնատար անձը «ողջամտորեն չի հիմնավորում» դրույթը պետք է հասկանալ ոչ թե որպես նրա պարտականություն, այլ իրավունք: Այսինքն՝ կոռուպցիոն գործերով մեղադրյալը նույնպես պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, սակայն իրավունք ունի մասնակցել ապացուցմանը և ներկայացնել ապացույցներ իր անմեղության վերաբերյալ³:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան: Մարդու իրա-

³ Տե՛ս, **Խաչատրյան Մ.**, Ապացուցման պարտականությունն ըստ Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ 2003 թ. Կոնվենցիայի 20-րդ հոդվածի /Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկան, 2006 թ., թիվ 2, էջ 64:

վունքների Եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) ամրագրել է, որ անձի մեղավորության ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը⁴:

Ուստի անհրաժեշտ է քննարկել այն հարցադրումը, թե արդյոք առանձին փաստերի ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի հակասում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի և ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին:

ՄԻԵԴ-ը գտնում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը սկզբունքորեն չի բացառում ազգային օրենսդրությունում իրավական կամ փաստական կանխավարկածների գոյությունը, որոնց ապացուցման պարտականությունը դրվում է մեղադրյալի վրա: Այնինչ, ցանկացած դրույթ, որը սահմանում է անմեղության ապացուցման պարտականության փոխանցում կամ հնարավոր է համարում մեղադրյալի դեմ գործող կանխավարկածի կիրառումը, պետք է սահմանափակված լինի «բանական սահմաններով հաշվի առնելով այն ամենի կարևորությունը, ինչը մեղադրյալի համար դրված է խաղասեղանին, և ինչը ապահովում է նրա պաշտպանությունը»⁵:

Ուշագրավ է, որ փաստական կանխավարկածներին, որոնք տեղ են գտել առանձին պետությունների օրենսդրություններում, ՄԻԵԴ-ը շատ զգույշ է մոտենում և յուրաքանչյուր գործով կարևորում է, թե արդյոք մեղադրյալին հնարավորություն տրվել է արդյունավետ պաշտպանվելու, այսինքն՝ հերքելու մեղքը հաստատող կանխավարկած-փաստերը (որոնք համարվում են գոյություն ունեցող, քանի դեռ հակառակը չի ապացուցվել)՝ հատուկ ուշադրություն դարձնելով որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալուն:

⁴ «Barbera, Messegue and Jabardo v. Spain» Постановление Европейского Суда по правам человека от 06 декабря 1988 года (жалоба № 10590/83).

⁵ SALABIAKU V. FRANCE, 7.10.1988, P 28, գանգատ № 10519/83: «Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով դիմումատուի նկատմամբ, որն իրականացրել էր թմրամիջոցներով լցված ճամպուրկի փոխադրում, առաջ էր քաշվել մեղավորության կանխավարկածը: Դատարանը, սակայն, հանգեց այն եզրակացության, որ քանի որ ազգային դատարանը ազատ է եղել իրավիճակի գնահատման հարցում և հաշվի է առել գործի հանգամանքները՝ բեկանելով նախկինում կայացված դատավճիռներից մեկը, ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում առկա չի եղել:

Վերը նշված բոլոր օրինակները, ինչպես նաև այն դեպքերում, երբ գործում են որոշակի կանխավարկածներ, ըստ մեզ, չեն նշանակում մեղավորության կանխավարկած, այսինքն՝ ապացուցման պարտականությունը մեղադրյալի վրա դնելը չի նշանակում, որ վերջինս համարվում է մեղավոր, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Սկզբնական ապացուցման պարտականությունը միշտ էլ քրեական հետապնդման մարմինների վրա է դրվում: Տարբեր են ապացույցների տեսակը և ապացուցման առարկայի մեջ մտնող հանգամանքները: Խնդիրն այն է, որ նշված դեպքերում քրեական հետապնդման մարմինների կողմից հավաքված ապացույցներն անուղղակի ապացույցներ են: Մեղադրանքը, ճիշտ է, հիմնված է միայն անուղղակի ապացույցների վրա, սակայն դրանց համակցությունն այնքան ծանրակշիռ է, որ հանգեցնում է մեղադրյալի մեղավորության վերաբերյալ եզրակացության: Այս պարագայում նման ապացույցների հերքման պարտականությունը արդեն մնում է մեղադրյալի վրա:

Վերը հիշատակված կոնվենցիաների համատեքստում մեղադրյալը սկսում է ապացուցել, որ, օրինակ, իր՝ որպես հանրային պաշտոնատար անձի ակտիվների նշանակալի մեծացումն անօրինական չեն միայն այն բանից հետո, երբ իրավապահ մարմինները ցույց են տալիս, որ նրա հարստացման չափը էականորեն գերազանցում է նրա օրինական եկամուտները, ապացուցում է բոլոր հնարավոր օրինական եղանակներով դրանց ստացված չլինելը, ինչը բավականին հեշտանում է քաղաքացիների և հատկապես պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրման պարտադիր համակարգի ներդրված լինելու շնորհիվ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անմեղության կանխավարկածն ամրագրող նորմում (18-րդ հոդված) ավելացնել դրույթ հետևյալ բովանդակությամբ՝ «օրենքով նախատեսված դեպքերում մեղադրյալի վրա կարող են դրվել բացառապես իր իրազեկության սահմաններում գտնվող առանձին փաստերի (իրավական կանխավարկածի) ապացուցման պարտականությունը»:

ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ПРЕЗУМПЦИИ НЕВИНОВНОСТИ И ОБЯЗАННОСТИ (БРЕМЕНИ) ДОКАЗЫВАНИЯ

Акобян Милена Кареновна

Студентка 4-го курса юридического факультета

Академии полиции Образовательного комплекса полиции РА

Обязанность (бремя) доказывания в юридической литературе, в основном, рассматривается как правовая конструкция, назначение которой состоит в выяснении обстоятельств конкретного дела. В данной статье рассматриваются вопросы соотношения презумпции невиновности и обязанности (бремени) доказывания, в частности, возможность закрепления за обвиняемым обязанности доказывания (распределения бремени доказывания).

Ключевые слова: право, презумпция невиновности, обязанность (бремя) доказывания, обвиняемый.

THE PROBLEM OF THE RELATIONSHIP BETWEEN THE PRESUMPTION OF INNOCENCE AND THE OBLIGATION TO PROVE IT

Hakobyan Milena

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

The obligation to prove is mostly discussed in the literature as a mechanism for the prosecutor to clarify certain circumstances. This article addresses the issue of whether the obligation to prove certain hypotheses can be placed on the accused. To this end, studies have been conducted in the context of foreign countries, international law and case law.

Key words: right, presumption of innocence, obligation to prove, guilt, accused.

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ

Հակոբյան Սամվել

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի Ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի վճարովի
ուսուցման 4-րդ կուրսի սովորող*

Սույն հոդվածը միտված է արհեստական բանականությանը որպես հանցագործության սուբյեկտ դիտարկելու հիմքերի պարզաբանմանը և քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցերի ներկայացմանը:

Արհեստական բանականության (այսուհետ՝ ԱԲ) միջամտությունը մարդկային էկոհամակարգում այլևս անժխտելի փաստ է, իսկ ցանկացած ենթադրյալ հանրորեն վտանգ ներկայացնող ներգործություն պետք է ներառվի համապատասխան իրավակարգավորումների դաշտում: Հատկապես ներկայում, երբ ներպետական կարգավորումները գտնվում են վերանայման և լրացումների փուլում, թեման էլ ավելի արդիական է դառնում և կարող է հանգեցնել որոշակի լուծումների առաջարկման:

ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով արհեստական բանականությունը հանցագործության սուբյեկտ չէ, սակայն գործնականում առկա են իրավիճակներ, երբ նրա կողմից իրականացվում են հանրորեն վտանգավոր արարքներ: Սույն հոդվածում հիմնավորվում է, որ արհեստական բանականությունը կարող է էականորեն վնաս հասցնել հասարակական հարաբերություններին, կատարել մի շարք հանրորեն վտանգավոր արարքներ, և տրամաբանորեն բարձրացվում է այդ արարքների համար պատասխանատվության ենթարկվելու հարցը:

Այն, որ արհեստական բանականությունը քաղաքացիաիրավական հարաբերությունների օբյեկտ է¹, փաստ է և բխում է ներպետական կարգավորումների բովանդակությունից:

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 132; Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենք, հոդված 5:

Սույն հոդվածում կոդիտարկվի ԱԲ-ը՝ որպես հանցագործության սուբյեկտ, քրեական պատասխանատվության ենթարկելու մի քանի մոդելներ, և կառաջարկվի մեկ այլ նոր մոդել, որը ձևավորվել է սույն հետազոտության շրջանակներում: Այն պայմանականորեն անվանվել է «Ըստ նպատակային նշանակության օգտագործելու» պատասխանատվության մոդել:

Տեսության մեջ չկա միասնական կարծիք ԱԲ հասկացության սահմանման վերաբերյալ: Մեծամասամբ ընդունելի է հետևյալ սահմանումը՝ արհեստական բանականությունը խելացի մեքենաներ ստեղծելու տեխնոլոգիա և գիտություն է²: Մեկ այլ սահմանման համաձայն՝ ԱԲ-ն իրենից ենթադրում է ինժեներական դիսցիպլին, քանի որ ի սկզբանե նրա նպատակն է եղել ստեղծել շինություններ:³ԱԲ են անվանում մեքենա ստեղծելու գործընթացը, որոնք ունակ են գործելու այնպես, որ մարդու կողմից ընդունվեն որպես խելացի: Դա կարող է լինել մարդու վարքի կրկնություն:⁴Ի հակադրումն այս սահմանման՝ տարածված է նաև հետևյալ կարծիքը՝ արհեստական բանականություն է այն խնդիրը, որը դեռ չի լուծվել⁵:

Չնայած նրան, որ այն պայմանավորված է 1940-ական թվականներին էլեկտրոնային հաշվողական համակարգի և արհեստական նեյրոնային ցանցերի առաջացմամբ, ԱԲ-ը՝ որպես ակադեմիական ուղղություն, ստեղծվել է 1956 թվականին և ժամանակի ընթացքում լուրջ հաջողություններ է գրանցել:⁶

² **Пройдаков Э. М.**, Современное состояние искусственного интеллекта, Москва, 2018, էջ 2; **Емцев Д. И.**, Искусственный интеллект, плюсы и минусы. Экономика и социум, Москва, 2016, էջ 4:

³ **Нильсон Н.**, Искусственный интеллект; Методы поиска решений, Москва, 1973, էջ 7:

⁴ **Джонс Т. М.**, Программирование искусственного интеллекта в приложениях, Москва, 2004, էջ 15:

⁵ **Hofstadter D.**, Metamagical Themas: Questing for the Essence of Mind and Pattern, 1985, էջ 601:

⁶ Արհեստական բանականությունը գիտության ճյուղ է, որը լույս է տեսել 1956 թ-ին Դարթմութի քոլեջում (Հանովեր, ԱՄՆ) ամառային սեմինարի ժամանակ, այն կազմակերպել էին ամերիկացի չորս գիտնականներ՝ Ջոն Մաք-Կարտին, Մարվին Մինսկին, Նաթանիել Ռոչեստերը և Կլոդ Շեննոնը:

[https://ru.unesco.org/courier/2018-3/iskusstvennyy-intellekt-mezhdu-mifom-i-realnostyu#:~:text=%D0%98%D1%81%D0%BA%D1%83%D1%81%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D0%BB%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%20\(%D0%98%D0%98\)%20%E2%80%93%D1%8D%D1](https://ru.unesco.org/courier/2018-3/iskusstvennyy-intellekt-mezhdu-mifom-i-realnostyu#:~:text=%D0%98%D1%81%D0%BA%D1%83%D1%81%D1%81%D1%82%D0%B2%D0%B5%D0%BD%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%B8%D0%BD%D1%82%D0%B5%D0%BB%D0%BB%D0%B5%D0%BA%D1%82%20(%D0%98%D0%98)%20%E2%80%93%D1%8D%D1)

Ներկայումս ընդունված է առանձնացնել ԱԲ-ի երկու մակարդակ՝ թույլ և ուժեղ՝ կապված ԱԲ-ի կողմից մարդկային կարողությունների վերարտադրման աստիճանի հետ, սակայն գրականության մեջ հաճախ հանդիպում է նաև երրորդ մակարդակը՝ սուպերբանականությունը:

Թույլ ԱԲ-ը, որը հաճախ անվանվում է նաև *արհեստական նեղ բանականություն*, ԱԲ-ի համակարգ է, որը մշակված և պատրաստված է որոշակի խնդրի համար: Այն կարող է հավասար լինել, ինչպես նաև գերազանցել մարդկային կարողությունները որոշակի առաջադրանքների համար:

Ուժեղ ԱԲ-ը, որը հայտնի է նաև որպես *արհեստական ընդհանուր բանականություն*, ԱԲ-ի համակարգ է՝ մարդու ճանաչողական ունակությունների ընդհանրացումներով: Այն առանց մարդու միջամտության կարողանում է խնդիրներ լուծել: Այն օժտված է մարդկային կարողությունների ամբողջ ծավալով և կարող է հաջողությամբ իրականացնել ցանկացած առաջադրանք, ինչը կարող է մարդը:

Արհեստական սուպերբանականությունը կամ գերբանականությունը մեքենայական բանականություն է, որը գերազանցում է մարդու բանականությունը ցանկացած խնդրում: Հաճախ ապագայի վերաբերյալ կանխատեսումներում հիմնական մտավախությունները կապված են հենց արհեստական սուպեր բանականության հետ: Տիպիկ ԱԲ-ն ընկալում է միջավայրը և իրականացնում է գործողություններ, որոնք առավելագույնի են հասցնում հաջողությամբ իր նպատակներին հասնելու հնարավորությունը:⁷

Ճիշտ է, ԱԲ-ը դեռ իրավահարաբերության սուբյեկտ չէ, սակայն չի բացառվում, որ կգա ժամանակ, երբ վերջինս կհամարվի որպես այդպիսին: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ ժամանակի ընթացքում իրավահարաբերության սուբյեկտները նույնպես փոփոխվում են: Օրինակ՝ Հնդկաստանը դեֆիններին դարձրել է իրավահարաբերության սուբյեկտ: Հնդկաստանում հասարակության մեծամասնության համար

%82%D0%BE,%D0%9D%D0%B0%D1%82%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8D%D0%BB%D1%8C%20%D0%A0%D0%BE%D1%87%D0%B5%D1%81%D1%82%D0%B5%D1%80%20%D0%B8%20%D0%9A%D0%BB%D0%BE%D0%B4%20%D0%A8%D0%B5%D0%BD%D0%BD%D0%BE%D0%BD.

⁷ Russell & Norvig (who prefer the term "rational agent") and write "The whole-agent view is now widely accepted in the field" University of Michigan, 2003, էջ 55:

անսպասելիորեն դեֆինները վերջերս օրենսդրորեն ճանաչվել են որպես «անհատներ, ովքեր չեն դասվում մարդկային ցեղին», և հետևաբար նրանց՝ որպես իրավահարաբերության հատուկ սուբյեկտ, տրվել են հատուկ իրավունքներ: Դեֆինների օգտագործմամբ արգելվում է գործունեությունը դեֆինարիումներում, ակվարիումներում և այլն:⁸

Մի շարք ոլորտներում ԱԲ սուբյեկտը փոխարինում է մարդուն՝ կատարելով վերջինիս գործառույթները: Օրինակ՝ ԱԲ քիմիկոսի վիճակի է վերլուծելու ստացված տվյալներն ու հաշվարկելու արդյունքի հասնելու այս կամ այն եղանակի պայմանական հավանականությունը⁹, ԱԲ բարմենն արդեն աշխատում է Ճապոնիայում¹⁰, ԱԲ-վիրաբույժը կարում է արյունատար անոթները¹¹: Ավելին՝ ԱԲ սուբյեկտն արդեն կարող է ընկալել ֆիզիկական միջավայրն այնպես, ինչպես մարդը¹²:

Զարգացումների համատեքստում ենթադրվում է, որ ԱԲ սուբյեկտը տարիներ անց ամբողջությամբ կփոխարինի մարդուն, և այդ ժամանակ արդարացիորեն հարց կառաջանա՝ արդյոք ԱԲ սուբյեկտը պետք է ունենալ մարդու իրավունքներին և պարտականություններին համարժեք սեփական իրավունքներ ու պարտականություններ: Հարց, որի պատասխանը ներկայումս շատ դժվար կլինի տալ:

ԱԲ-ն ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: ԱԲ-ի դրական կողմերը բնութագրվում են նրանով, որ ԱԲ-ն կարողանում է շատ ավելի արագ կատարել տարբեր գործողություններ (օրինակ՝ հաշվարկներ), քան մարդը: Դիշտ ծրագրավորման դեպքում ԱԲ-ն Օ-ի է հասցնում սխալների հավանականությունը և բարձրացնում է ճշգրտությունը: ԱԲ-ի դրական կողմերը երևում են մի շարք ոլորտներում՝ առողջապահական, ֆինանսական, մարքեթինգի և այլն:

⁸ <https://www.pronline.ru/Advokat-Matiushienko-rasskazal-ob-iskusstviennom-ntielliektie-kak-subiektie-ugholovnogho-prava.html>:

⁹ <https://www.nature.com/articles/s41586-020-2442-2>ԱԲ-քիմիկոսին ներկայացրել են Լի-վերպուլի համալսարանի գիտնականները:

¹⁰ <https://www.qbit-robotics.jp/en-1>ԱԲ-բարմենը պատրաստվել է QBIT Robotics ընկերության կողմից:

¹¹ https://www.nature.com/articles/s41467-019-14188-w?fbclid=IwAR02kf-_EFTCLUBeif6VP-9luUKk8TiEPVv-M6mOtS_JRcUvo9D8e2q-9VEgԱԲ-վիրաբույժը մշակվել է հոլանդական MicroSure ընկերության կողմից:

¹² <https://news.mit.edu/2020/robots-spatial-perception-0715>ԱԲ սուբյեկտը մշակվել է Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտի (MIT) կողմից:

ԱԲ-ի բացասական կողմերից մեկը թերևս գործազրկությունն է: Ակնհայտ է՝ ԱԲ մի շարք ոլորտներում ամբողջովին կփոխարինի է մարդուն, ինչն էլ, բնականաբար, կհանգեցնի գործազրկության: Բացակայում են համապատասխան իրավական կարգավորումները¹³: ԱԲ-ի զարգացման միտումները մեծ են: Ապագայում մարդիկ և մեքենաները կկարողանան գոյատևել համատեղ մի աշխարհում, որտեղ մեքենաներն ուժեղացնում են մարդկային կարողությունները՝ պահպանելով համակեցության նորմերը: Սակայն մարդկային հասարակությունը դեռ պատրաստ չէ նման փոփոխությունների:¹⁴

Տեխնոլոգիական աշխարհն արագորեն փոխվում է: Ռոբոտները և համակարգիչները փոխարինում են ավելի ու ավելի պարզ մարդկային գործունեությունը: ԱԲ-ն մարդու վարքի և համակարգչում ճանաչողական գործընթացների իմիտացիոն հավաքական է: ԱԲ-ի հետազոտությունները սկսվեցին 1940-ական թվականներին:

1950 թ. Իսահակ Ասիմովը սահմանեց ռոբոտաշինության երեք հիմնական օրենք.

- 1) ռոբոտը չի կարող վնասել մարդուն կամ անգործության միջոցով թույլ տալ, որ մարդն ինքն իրեն վնաս հասցնի,
- 2) ռոբոտը պետք է ենթարկվի մարդու կողմից տրված հրամաններին, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հակասում էր առաջին օրենքին,
- 3) ռոբոտը պետք է պաշտպանի իր սեփական գոյությունը, քանի դեռ այդպիսի պաշտպանությունը չի հակասում առաջին կամ երկրորդ օրենքներին:¹⁵

Իհարկե, ԱԲ-ը որպես հանցագործության սուբյեկտ դիտարկելու վերաբերյալ միասնական կարծիք չկա տեսության մեջ: Տարբեր տեսություններ առանձնացնում են առանձնահատուկ հիմքեր և պահանջներ ԱԲ-ն հանցագործության սուբյեկտ դիտարկելու համատեքստում: Առանձնացված են լայն տարածում գտած ԱԲ քրեական պատասխա-

¹³ **Васильев А. А., Шпопер Д.,** Искусственный интеллект: Правовые аспекты, Барнаул, 2018, էջ 24:

¹⁴ **Kissinger H.,** How the Enlightenment Ends 2018, էջ 1: <https://www.theatlantic.com/magazine/archive/2018/06/henry-kissinger-ai-could-mean-the-end-of-human-history/559124/>.

¹⁵ **Азимов А.,** Хоровод, журнал Astounding Science Fiction, Нью-Йорк, 1942, էջ 100: <https://librebook.me/runaround/vol1/1>.

նատվության ենթարկելու 3 մոդել, որոնք առաջ է քաշվել տեսաբան Գաբրիել Հալկի կողմից:¹⁶

1. «Մեկ այլ անձի միջոցով կատարված» պատասխանատվության մոդել,
2. «Բանական-հավանական-հետևանքների» պատասխանատվության մոդել,
3. «Ուղղակի» պատասխանատվության մոդել:

Մինչ վերոնշյալ պատասխանատվության մոդելների բովանդակության անդրադառնալը, քննարկենք լայն աղմուկ բարձրացրած 1981թ-ին Ճապոնիայում կատարված սպանությունը:

1981 թ-ին, մոտոցիկլետների գործարանի 37-ամյա ճապոնացի աշխատակիցը «սպանվել էր»ԱԲ սուբյեկտի (ռոբոտի) կողմից, որն աշխատում էր իր կողքին: Ռոբոտը սխալմամբ աշխատակցին բնորոշել էր իր աշխատանքին սպառնացող և հաշվարկել, որ այդ սպառնալիքը վերացնելու ամենաարդյունավետ միջոցը նրան հարակից գործող մեքենայի մեջ հրելն է: Օգտագործելով իր շատ հզոր հիդրավլիկ թևը՝ ռոբոտն աշխատակցին գցեց աշխատող մեքենայի մեջ՝ վայրկենական սպանելով նրան, այնուհետև վերսկսեց իր պարտականությունները, քանի որ ոչ ոք այլևս չէր «խանգարում» իր աշխատանքին:

Առաջանում է իրավական հարց. ո՞վ է պատասխանատվություն կրելու այս «ֆանտաստիկ», բայց կանխամտածված սպանություն համար:

Որպեսզի հասկանանք՝ կատարված գործողությունը հանցանք է, թե ոչ, պետք է գտնել հանցակազմի 4 տարրերը. այն է՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը:

Օբյեկտն ակնհայտ է՝ կյանքի պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները: Կարծես թե ակնհայտ է նաև ենթադրյալ հանցագործության օբյեկտիվ կողմը. այն է՝ ԱԲ-ի կողմից կատարված արարքը (հրելը):

Սուբյեկտիվ կողմի հետ կապված Գբրիել Հալկը նշել է, որ դրա առկայությունն ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթար-

¹⁶ **Hallevy G.**, The Criminal Liability of Artificial Intelligence Entities - from Science Fiction to Legal Social Control, The University of Akron, 2016, էջ 177:

կելու հիմքն է:¹⁷ Այս համատեքստում սուբյեկտիվ կողմը դիտավորությունն է, քանի որ ԱԲ մոդելը դիտավորությամբ է հրել աշխատակցին: Իսկ ո՞վ է նկարագրված հանցագործության սուբյեկտը:

ՀՀ քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածը սահմանում է՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի», և, հետևաբար, այստեղ բացակայում է ենթադրյալ հանցագործության սուբյեկտը, քանի որ չկա ֆիզիկական անձ: Հետևաբար բացակայում է նաև հանցակազմը. օրենսդիրը հանցագործության սուբյեկտ չի դիտարկել էլեկտրոնային անձին (ԱԲ սուբյեկտին):

Դիտարկելով Գաբրիել Հալևի կողմից առաջ քաշված ԱԲ քրեական պատասխանատվության մոդելները՝ պետք է և պարզել՝ հնարավոր է քրեական պատասխանատվության ենթարկել ենթադրյալ հանցագործության մեղավորին:

«Մեկ այլ անձի միջոցով կատարված» պատասխանատվության մոդելը ենթադրում է, որ ԱԲ սուբյեկտը հանդես է գալիս որպես «հանցագործություն կատարման միջնորդ կամ հանցագործություն անմեղ կատարող»¹⁸:

Պատասխանատվության այս մոդելը չի ենթադրում ԱԲ սուբյեկտը որպես պատասխանատվության սուբյեկտ դիտարկելու հանգամանքը: Այստեղ ԱԲ սուբյեկտը հանդես է գալիս ինչպես մտավոր խնդիրներ ունեցող մարդ, մանկահասակ, անգործունակ, ով զուրկ է հանցագործություն կատարելու մտածված դիտավորությունից: «Մեկ այլ անձի միջոցով կատարված» պատասխանատվության մոդելը ենթադրում է, որ հանցավորը հանցագործության կատարման միջոց ընտրել է ԱԲ սուբյեկտը, որը կատարում է հանրորեն վտանգավոր արարքը հանցավորի փոխարեն:¹⁹ Ստացվում է, որ ԱԲ սուբյեկտը հանդես է գալիս որպես հանցագործության կատարման գործիք, իսկ քրեական պատասխանատվության

¹⁷ Hallevy G., The criminal liability of artificial intelligence entities – from science fiction to legal social control, Akron Intellectual Property Journal, 2010, էջ 178:

¹⁸ Solum L. B., Legal Personhood for Artificial Intelligences, University of Illinois, 1992, էջ 7:

¹⁹ <https://www.pronline.ru/Advokat-Matiushienko-rasskazal-ob-iskusstviennom-intielliektie-kak-subiektie-ugholovnogho-prava.html>.

պետք է ենթարկել ԱԲ սուբյեկտը ծրագրավորողին կամ դիտավորյալ սխալ օգտագործողին:²⁰

Ծրագրավորողը կարող է ստեղծել ԱԲ սուբյեկտ՝ հետագայում նրա միջոցով/կողմից հանցագործություն կատարելու մտադրությամբ: Օրինակ՝ ծրագրավորողը ստեղծում է այնպիսի ԱԲ սուբյեկտ, որ վերջինս մարդ «տեսնելուց» սկսում է կրակել (նման ԱԲ սուբյեկտներ հանդիպում են զինված ուժերում): 1-օրյա «աշխատանքի» ընթացքում ԱԲ սուբյեկտը սպանում է 5 մարդու: Այս օրինակում սպանության համար քրեական պատասխանատվության պետք է ենթարկել ծրագրավորողին:

Այս պատասխանատվության մոդելը կիրառելի չէ այն ժամանակ, երբ ԱԲ մոդելը ստեղծված չէ հանցագործություն կատարելու համար, բայց, այնուամենայնիվ, կատարում է:

Հաջորդ՝ «Բանական-հավանական-հետևանքների» պատասխանատվության մոդելը ենթադրում է, որ ծրագրավորողները կամ օգտագործողներն ԱԲ սուբյեկտը ծրագրավորել և օգտագործում են ըստ նպատակային նշանակության, բայց առանց որևէ հանցագործություն կատարելու մտադրության: Օրինակ՝ իր ամենօրյա հանձնարարությունների կատարման ընթացքում ԱԲ սուբյեկտը հանցագործություն է կատարում: Ծրագրավորողները կամ օգտագործողները տեղյակ չեն եղել հանցագործության մասին մինչև դրա կատարվելը. նրանք չեն պլանավորել որևէ հանցագործություն կատարել և չեն մասնակցել կոնկրետ այդ հանցավոր գործունեությանը: Օրինակ՝ թռիչքի ընթացքում մարդ օդաչուն ակտիվացնում է ավտոմատ օդաչուի ծրագիրը (որն ԱԲ սուբյեկտն է), և ծրագիրը սկսում է աշխատել: Ինչ-որ պահի՝ ավտոմատ օդաչուի ակտիվացումից հետո, մարդ օդաչուն տեսնում է, որ փոթորիկը մոտենում է, և փորձում է ընդհատել առաջադրանքը, վերադառնալ բազա: ԱԲ սուբյեկտը մարդ օդաչուի գործողությունները գնահատում է որպես առաջադրանքի կատարմանը խոչընդոտ և միջոցներ է ձեռնարկում այդ խոչընդոտը վերացնելու համար: ԱԲ սուբյեկտը չի կատարում մարդ օդաչուի հրամանները, արդյունքում փոթորիկը մոտենում է, ուղղաթիռը կորցնում է կառավարումը և բախվում լեռներին: Մարդ օդաչուն մահանում է:

²⁰ **Debessonnet C. G.**, An Artificial Intelligence Application in the Law: CCLIPS, A Computer Program that Processes Legal Information / C. G. Debessonnet, G. R. Cross // High Technology Law Journal, 1986, էջ 329:

Ակնհայտ է, որ ծրագրավորողը չէր նախատեսել որևէ մեկին սպանել, մանավանդ մարդ օդաչուին, բայց, այնուամենայնիվ, մարդ օդաչուն մահանում է ԱԲ սուբյեկտի գործողությունների արդյունքում, և այդ գործողությունները կատարվել են ըստ ծրագրի, բայց ոչ մարդ օդաչուին սպանելու նպատակով:

Այս մոդելի հիմքում ընկած է ծրագրավորողների կամ օգտագործողների իրավախախտումների կատարումը կանխատեսելու հնարավորության սկզբունքը: Ըստ երկրորդ մոդելի՝ անձը կարող է պատասխանատվության ենթարկվել հանցանքի համար, եթե այդ հանցագործությունն այդ մարդու գործողությունների բնական և հավանական հետևանքն է: Ի սկզբանե բնական-հավանական-հետևանքների պատասխանատվության մոդելն օգտագործվել է հանցակիցների նկատմամբ հանցավոր պատասխանատվություն սահմանելու համար, երբ հանցակիցներից մեկը կատարել է հանցանք, որը ընդգրկված չէր մյուս հանցակիցների դիտավորությամբ: Դատարանների և տեսաբանների կողմից սահմանված կանոնն այն է, որ հանցակցի պատասխանատվությունը տարածվում է հանցագործություն կատարողի գործողությունների վրա, որոնք հանցավոր սխեմայի «բնական - հավանական - հետևանք» էին:²¹

Այս պատասխանատվության մոդելի համատեքստում ծրագրավորողը կամ օգտագործողը կենթարկվի քրեական պատասխանատվության անփութությամբ հանցագործություն կատարելու համար:²²

Առաջին երկու մոդելները չեն ենթադրում ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ամբողջական սուբյեկտ, ինչը չի կարելի ասել երրորդ՝ «Ուղղակի» պատասխանատվության մոդելի մասին, որն ԱԲ սուբյեկտին դիտարկում է պատասխանատվության ամբողջական օբյեկտ:

Որպեսզի ԱԲ սուբյեկտին պատասխանատվության երրորդ մոդելի համատեքստում ենթարկենք քրեական պատասխանատվության, նախ պետք է ապացուցենք արտաքին և ներքին գործոնների առկայությունը:

²¹ United States v. Powell, USA 1991, <https://casetext.com/case/us-v-powell-111>.

²² ՀՀ քրեական օրենսգիրք հոդված 30 մաս 3 «Հանցանքը համարվում է անփութությամբ կատարված, եթե անձը չի նախատեսել իր գործողության (անգործության)՝ հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք»:

Ներքին գործոնն իրենից ենթադրում է ծրագրավորողի կողմից համապատասխան կարգավորումների ներդրում ԱԲ սուբյեկտի ծրագրի մեջ, որն ԱԲ սուբյեկտին կտա հանցագործություն կատարելու մտավոր ունակություն:

Արտաքին գործոնը ենթադրում է այն գործողության/անգործության առկայությունը, որի հետևանքով կատարվել է հանցագործությունը: Արտաքին գործոնն ամբողջապես կախման մեջ է գտնվում ներքին գործոնից, քանի որ, եթե ծրագրավորողը համապատասխան գործողության/անգործության համար անհրաժեշտ կարգավորումներ չմտցնելի և համապատասխան մտավոր ունակություններ չզարգացնի ԱԲ սուբյեկտի մոտ, ապա ԱԲ սուբյեկտը հանցագործություն չի կատարի իր գործողությամբ կամ անգործությամբ (ներքին գործոն):

«Ուղղակի» պատասխանատվության մոդելը, ամբողջացնելով «Բանական-հավանական-հետևանքների» պատասխանատվության և «Մեկ այլ անձի միջոցով կատարված» պատասխանատվության մոդելները, սահմանում է քրեական պատասխանատվության ենթարկելու 2 տարբերակ:

Տարբերակ 1- ԱԲ սուբյեկտը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե վերջինիս ծրագրավորողը/օգտագործողը նախապես ունեցել է դիտավորություն ստեղծելու/օգտագործելու այնպիսի ԱԲ սուբյեկտ, որը կկատարի հանցագործություն:

Տարբերակ 2 - ԱԲ սուբյեկտը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե վերջինիս ծրագրավորողը կամ օգտագործողն անփութության պատճառով չէր նախատեսել հնարավոր հանցագործության կատարումն ԱԲ սուբյեկտի կողմից, սակայն պարտավոր էին և կարող էին նախատեսել:

Երկու տարբերակները համապատասխանաբար «Մեկ այլ անձի միջոցով կատարված» և «Բանական-հավանական-հետևանքների» պատասխանատվության մոդելներից տարբերվում են նրանով, որ վերջիններս չեն պահանջում ներքին և արտաքին գործոնների ապացուցում. արտաքին գործոնն ամբողջապես բավարար է ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

Զարգացնելով «Ուղղակի» պատասխանատվության մոդելը՝ առաջարկվում է պատասխանատվության նոր մոդել. այն է՝ «Ըստ նպատա-

կային նշանակության օգտագործելու» մոդելը: Այն ենթադրում է ԱԲ սուբյեկտի նկատմամբ քրեական պատասխանատվության սահմանում, եթե ԱԲ սուբյեկտը մեղավորությամբ օգտագործվել է ոչ նպատակային նշանակությամբ, ինչը հանգեցրել է ԱԲ սուբյեկտի կողմից հանցագործություն կատարելուն:

Սահմանումից բխում է 3 հատկանիշ՝

- 1) ԱԲ սուբյեկտը պետք է օգտագործվի մեղավորությամբ,
- 2) ԱԲ սուբյեկտը պետք է օգտագործվի ոչ նպատակային նշանակությամբ,
- 3) ԱԲ սուբյեկտի օգտագործումը պետք է հանգեցնի հանցագործության:

Վերոնշյալ 3 հատկանիշների առկայությունը մեկ միասնական համակցության մեջ կթույլատրի քրեական պատասխանատվության ենթարկել ԱԲ սուբյեկտին ըստ «Ըստ նպատակային նշանակության օգտագործելու» մոդելի: Եթե հատկանիշներից որևէ մեկը բացակայում է, ապա այս պատասխանատվության մոդելը կիրառելի չի լինի:

Իրավացիորեն հարց կարող է առաջանալ՝ ինչպես կկարգավորվի ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, եթե բացակայի վերոնշյալ 3 հատկանիշներից որևէ մեկը:

Առաջին հատկանիշի (ԱԲ սուբյեկտը մեղավորությամբ օգտագործվել է) բացակայության դեպքում չի կարող քննարկվել ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, քանի որ մեղքի (հանցակազմի սուբյեկտիվ կողմի) բացակայությունն այն անհնարին է դարձնում. չկա մեղք, չկա հանցակազմ, չկա հանցագործություն:

Երկրորդ հատկանիշի (ԱԲ սուբյեկտը ոչ նպատակային նշանակության օգտագործվել է) բացակայության դեպքում ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը ամբողջությամբ կարգավորում է «Ուղղակի» պատասխանատվության մոդելը:

Երրորդ հատկանիշի (ԱԲ սուբյեկտի օգտագործումը հանցագործության հանգեցնել է) բացակայության դեպքում ԱԲ սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը նույնպես չի քննարկվում, քանի որ չկա հանցագործություն:

Վերոնշյալ պատասխանատվության մոդելը տարբերվում է վերը թվարկված 3 պատասխանատվության մոդելներից նրանով, որ այս պա-

րագայում պատասխանատվություն կնախատեսվի բացառապես այն դեպքում, երբ ԱԲ սուբյեկտն օգտագործվի մեղավորությամբ և ոչ նպատակային նշանակությամբ:

Դիտարկենք մի օրինակ, երբ «X» կազմակերպությունն արտադրում է այնպիսի զենք(ԱԲ սուբյեկտ), որը պետք է ավտոմատ կրակ արձակի 100 մետր հեռավորությամբ գտնվող ցանկացած մարդու վրա (այս զենքի նպատակային նշանակությունն է սահմանները հսկելը), սակայն անբարեխիղճ գնորդն ԱԲ սուբյեկտը տեղադրում է ոչ թե սահմանամերձ տարածքում, այլ քաղաքի մարդաշատ վայրերից որևէ մեկում:

Առաջին՝ «Մեկ այլ անձի միջոցով կատարված» պատասխանատվության մոդելի դեպքում ԱԲ սուբյեկտը պատասխանատվության չի ենթարկվի, քանի որ ի սկզբանե ծրագրավորող/օգտագործողը նպատակ չեն ունեցել հանցագործություն կատարելու, իսկ հանցագործությունը կատարվել է ԱԲ սուբյեկտը ոչ նպատակային օգտագործելու արդյունքում:

Երկրորդ՝ «Բանական-հավանական-հետևանքների» պատասխանատվության մոդելի դեպքում ԱԲ սուբյեկտը նույնպես պատասխանատվության չի ենթարկվի, քանի որ վերջինս չի արել այնպիսի գործողություն, որը նախապես ընդգրկված չի եղել ծրագրավորողի/օգտագործողի դիտավորությամբ. թե՛ ծրագրավորողը, թե՛ օգտագործողը նախապես իմացել են, որ 100 մ հեռավորության վրա գտնվող ցանկացած մարդու վրա ավտոմատ կրակ է արձակելու ԱԲ սուբյեկտը, իսկ հանցագործությունն առաջացել է վերջինիս ոչ նպատակային օգտագործելու հետևանքով:

Երրորդ՝ «Ուղղակի» պատասխանատվության մոդելը տվյալ պարագայում նույնպես չի սահմանում պատասխանատվություն ԱԲ սուբյեկտի նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ արտաքին և ներքին գործոններն ապացուցված են, սակայն այստեղ բացակայում է ծրագրավորողի/ օգտագործողի մեղքը, քանի որ վերջիններս չգիտեին և չէին էլ կարող իմանալ, որ գնորդն ԱԲ սուբյեկտը կարող է օգտագործել ոչ նպատակային նշանակության:

Չորրորդ՝ «Ըստ նպատակային նշանակության օգտագործելու» պատասխանատվության մոդելի՝ ԱԲ սուբյեկտը կենթարկվի քրեական պատասխանատվության, քանի որ վերջինս դիտավորյալ (մեղավորությամբ)

ոչ նպատակային է օգտագործվել, ինչն էլ հանգեցրել է հանցագործության:

Ամեն դեպքում ԱԲ սուբյեկտին պատասխանատվության ենթարկելիս պետք է բոլոր 4 մոդելները դիտարկել մի համակցության մեջ՝ արդյունավետ կարգավորում ստանալու նպատակով:

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները և չորրորդ տարբերակի մեկնաբանությունները, կարծում ենք, որ ԱԲ պետք է դիտարկել որպես հանցագործության սուբյեկտ: Դրա անհրաժեշտությունը նախ և առաջ բխում է պետության անվտանգության տեսանկյունից, քանի որ, ինչպես հասկացանք, ԱԲ-ն իրենից լուրջ վտանգ կարող է ներկայացնել, եթե վերջինս չմտցվի իրավական դաշտ: Ներկա տեխնիկական զարգացման տեմպերը թույլ են տալիս ենթադրել, որ ԱԲ ներկայությունը մեր կյանքում շարունակելու է աճել: Հետևաբար անկարելի է պատկերացնել հասարակական բնականոն համակեցության շարունակականության ապահովման առանց վերոնկարագրյալ վտանգների կանխարգելման: Նման կանխարգելումը հնարավոր է հիմնավորված և բազմաշերտ իրավական կարգավորումների ներդրման շնորհիվ:

Ժամանակին, եթե գիտնականներն արհեստական բանականության մոդելը չանվանեին գիտաֆանտաստիկ երևակայություն, ապա այսօր մենք կունենայինք համապատասխան իրավական կարգավորումներ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակին գիտաֆանտաստիկ երևակայություն կոչվածն այսօր իրականություն է և մեր կյանքի անբաժանելի մասը:

Եթե մարդն արհեստական բանականության նկատմամբ տիրապետումը կորցնի, ապա արհեստական բանականությունը կտիրապետի մարդուն:

ИСКУССТВЕННЫЙ ИНТЕЛЛЕКТ КАК СУБЪЕКТ ПРЕСТУПЛЕНИЯ

Акопян Самвел Ваграмович

Студент 4-го курса Академии

Образовательного комплекса полиции

Республики Армения

Данный труд направлен на рассмотрение искусственного интеллекта как субъекта преступления.

Автор коснулся вопросов динамики совершенствования искусственного интеллекта, предметом обсуждения стали 3 теории, выдвинутые Габриелом Халевым, а также предложена новая теория - модель привлечения к уголовной ответственности.

Ключевые слова: *искусственный интеллект, преступление, субъект, уголовная ответственность, теория.*

ARTIFICIAL INTELLIGENCE AS THE SUBJECT OF THE CRIME

Hakobyan Samvel

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

This work is aimed at considering artificial intelligence as a subject of crime. We touched upon the dynamics of improving artificial intelligence, discussed the 3 theories put forward by Gabriel Hallevy, and proposed a new theory, a model of criminal prosecution.

Key words: *Artificial intelligence, crime, subject, criminal responsibility, theory.*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մանասերյան Քրիստինե

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի վճարովի ուսուցման
4-րդ կուրսի սովորող*

Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության բաղադրատարրերից է դատական ծախսերի ինստիտուտը: Այն առաջին հերթին կոչված է դատական իշխանությանը զերծ պահել անհիմն հայցերի հարուցումից և դատավարական իրավունքների չարաշահումից՝ ապահովելով դատավարության արդյունավետությունը: Մինևույն ժամանակ, դատական ծախսերի ինստիտուտի միջոցով օրենսդրական և գործնական մակարդակում երաշխավորում է անձի դատարանի մատչելիության իրավունքն այն բոլոր դեպքերում, երբ դատական պաշտպանության իրավունքի իրագործման համար պետության կողմից սահմանված ֆինանսական սահմանափակումներն ի սկզբանե հաղթահարելի չեն անձի համար: Դատական ծախսերի և մասնավորապես պետական տուրքի կարևորությունն ընդգծվում է նաև այն առումով, որ դրանց շնորհիվ տեղի է ունենում դատական պաշտպանության իրավունքի իրագործման հետևանքով անձի կրած ծախսերի արդարացի և ողջամիտ հատուցումը: Այս ինստիտուտի միջոցով շահագրգիռ անձի համար ապահովվում է բարենպաստ դատական ակտին հասնելու համար կատարված ծախսերի մասով մինչև իրավունքի խախտումը եղած դրության վերականգնումը: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում¹ (այսուհետ՝ Օրենսգիրք) զգալի տեղ է հատկացվել դատական ծախսերի հետ կապված հարաբերությունների կարգավորմանը: Արդյունքում դատական ծախսերի ինստիտուտն ենթարկվել է էական զարգացման՝ բազմաթիվ հարաբերություններում որդեգրելով նոր մոտեցումներ: Խնդիրն այն է, որ արդարադատության իրականացումը ենթադրում է զգալի ֆինանսական ծախ-

¹ Ընդունվել է 09.02.2018թ., ՀՕ-110-Ն, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374) Հոդ. 208:

սեր, որոնց ապահովման առաջնային բեռը դրված է պետության վրա: Ընդ որում, 'Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք' Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի² 38-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով դատարանների ֆինանսավորումը պետք է իրականացվի այնպես, որ ապահովեն նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ ծախսերը: Հարկ է նկատի ունենալ, որ դատարանների կողմից քննվող գործերի մեծամասնությունը բխում է մասնավոր իրավահարաբերություններից: Նաև այդ պատճառով է քաղաքացիական դատավարությունում ձևավորված դատական ծախսերի ինստիտուտը հիմնվում շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանության վճարովիության սկզբունքի վրա³:

Այսպիսով, իրավունքի տարբեր սուբյեկտների խախտված կամ վիճարկվող իրավունքների ու ազատությունների լիարժեք դատական պաշտպանությունն ապահովելու համար ծախսվում են զգալի ֆինանսական միջոցներ: Պետությունը շահագրգռված է արդարադատության՝ որպես պետական գործունեության յուրահատուկ տեսակի իրականացմամբ: Միաժամանակ դրանում հետաքրքրված են նաև դատական պաշտպանություն հայցող անձինք: Այդ պատճառով էլ արդարադատության իրականացման հետ կապված ծախսերի մի մասը կրելու պարտականությունը օրենքը դրել է նշված անձանց վրա⁴:

Օրենսգիրքը չի տալիս դատական ծախսերի սահմանումը: Օրենսդրության և մասնագիտական գրականության⁵ համեմատական վերլուծության հիման վրա դատական ծախսերը կարելի է բնորոշել որպես գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև դատական ակտերի վերանայման առնչությամբ դատարանի, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կատարած ծախսեր,

² Ընդունվել է 07.02.2018թ., ՀՕ-95-Ն, ՀՀՊՏ 2018.02.12/10(1368) Հոդ. 143:

³ Ст'я Комментарий к Гражданскому процессуальному кодексу Российской Федерации /под ред. М. А. Викин. - М. Издательство 'Юрайт', 2012, էջ 141:

⁴ Ст'я **Պետրոսյան Ռ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն /Ռ. Գ. Պետրոսյան (իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Լ. Զ. Թադևոսյան խմբագրությամբ): - Չորրորդ իրատարակություն. - Եր., Ոսկան Երևանցի, 2012, էջ 202:

⁵ Ст'я օրինակ **Իսրայելյան Գ. Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունք: Ընդհանուր մաս: Դատախոսությունների և թեստերի ժողովածու: Երևան, Աստղիկ Գրատուն, 2018, էջեր 116-122:

որոնց փոխհատուցման պարտականությունը, օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, դրվում է գործին մասնակցող անձանց վրա:

Օրենսգրքի 101-րդ հոդվածը սահմանում է, որ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող օրենքով սահմանված պարտադիր վճար է, իսկ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանից փաստաթղթերի պատճեններ ստանալու համար և այլ դեպքերում: Սրանից բխում է, որ քաղաքացիական դատավարությունում պետական տուրքը դատարանի կողմից շագագրգիռ անձի խնդրանքի հիման վրա արդարադատության իրականացման կամ օրենքով սահմանված առանձին դատավարական գործողությունների կատարման համար պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Պետք է նկատի ունենալ, որ պետական տուրքի ինստիտուտը կարգավորվում է ոչ միայն քաղաքացիական դատավարության, այլև ֆինանսական իրավունքի նորմերով: Մասնավորապես, ֆինանսական իրավունքի նորմերով են կարգավորվում դատական ծախսերը պետական բյուջե վճարելու կապակցությամբ ծագած հարաբերությունները⁶:

Դատական ծախսերի, այդ թվում պետական տուրքի գանձումը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ հատուցողական և կանխարգելիչ: Հատուցողական նպատակի նշանակությունը դատական համակարգի պահպանման և կանոնավոր գործունեության ապահովման համար պետության կատարած ծախսերի մի մասի վերականգնումն է, ինչպես նաև կոնկրետ գործի քննության հետ կապված ծախսերի հատուցումը: Կանխարգելիչ նպատակի նշանակությունն է համապատասխան սուբյեկտներին՝ իրենց պարտականությունները կատարելուն հարկա-

⁶ Ст'я Гражданский процесс: учебник для бакалавров /А. А. Влосов. 4-е изд., перераб. и доп.- М.: Издательство Юрайт, 2012, էջեր 186-187:

դրելով՝ մյուսներին կարգապահ դարձնելու համար հոգեբանորեն ներգործելը, ինչպես նաև անհիմն դատարան դիմելը կամ պարտականությունների կատարումից անհիմն խուսափելը կանխելը⁷:

Պետական տուրքին բնորոշ են դատական ծախսերին բնութագրական հետևյալ գործառույթները.

1. Խթանիչ գործառույթ, որն արտահայտվում է հնարավոր դրամական նոր պարտավորություններից զերծ մնալու նպատակով պարտավորությունը կամովին կատարելով և գործը դատարան չհասցնելով:
2. Պատժողական գործառույթ, որն իրագործվում է՝ մեղավոր անձի վրա դատական ծախսերի հատուցման բեռը դնելով:
3. Դաստիարակչական գործառույթ, որը դրսևորվում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների մոտ կարգապահության խթանման ձևով և այլն⁸:

Օրենսդիրը տարբերակում է պետական տուրքի երկու տեսակ՝ պարզ տուրք, որը գանձվում է բազային տուրքի՝ 1000 դրամի նկատմամբ սահմանված դրույքաչափով, և համամասնական տուրք, որը գանձվում է հայցագնի նկատմամբ սահմանված տոկոսային դրույքաչափով: Դատավարագիտության մեջ առանձնացվում է նաև պետական տուրքի 3-րդ տեսակը՝ համակցված տուրքը, որի էությունը դրսևորվում է պարզ և համամասնական տուրքերի համադրման մեջ⁹:

Պետական տուրքի վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով: Այն մասնավորապես սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը վճարվում է հայկական դրամով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ համաձայնեցնելով կարող է սահմանել և պարտադիր կիրառության մեջ դնել պե-

⁷ Մանրամասն տե՛ս **Խրայեյան Գ. Վ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունք: Ընդհանուր և հատուկ մասեր: Ուսումնական ձեռնարկ: Երևան, Աստղիկ Գրատուն, 2014, էջեր 74-75:

⁸ Տե՛ս **Մարկոսյան Տ. Ա.**, Դատական ծախսերը քաղաքացիական դատավարությունում: Գիտագործնական ձեռնարկ - Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 7-8:

⁹ Տե՛ս Гражданский процесс: учебник для бакалавров /А. А. Власов - 4-е изд., перераб. и доп. - М.: Издательство 'Юрайт', 2012, էջ 188:

տական տուրքի վճարման բանկային հաշվարկային փաստաթղթերի (անդորրագրերի) տիպային ձևեր:

Հնարավոր են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջանում լրիվ կամ մասնակիորեն վերադարձնել վճարված պետական տուրքը: Պետական տուրքի վերադարձման հիմքերը սահմանված են «Պետական տուրքի մասին» օրենքում, որի 38-րդ հոդվածը սահմանում է. «Պետական տուրքը» ենթակա է վերադարձման լրիվ կամ մասնակի.

- 1) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ,
- 2) Սահմանադրական դատարանի կողմից դիմումը վերադարձնելու, գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում,
- 3) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժվելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժվելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի,
- 4) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը,
- 5) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը,
- 6) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում,
- 7) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ,

- 8) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը, ինչպես նաև սույն օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին կետի 5.1-ին և 11.1-ին ենթակետերով սահմանված գործունեության իրավունք ձեռք բերելու համար վճարված պետական տուրքը,
- 9) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման փոխարեն մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով,
- 10) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում,
- 11) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումը բողոքարկման խորհրդի կամ դատարանի կողմից անվավեր ճանաչելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է փորձաքննության որոշումն ընդունումից հետո ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքերով,
- 12) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչև մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Պետական տուրքի վերադարձման հիմքերի ուսումնասիրությունը փաստում է ևս մեկ հիմքի ներդրման անհրաժեշտությունը բոլոր այն դեպքերում, երբ օրենքի ուժով պետական տուրքից ազատված գործերով

պատասխանողը բողոքարկման կապակցությամբ վճարում է պետական տուրք և հայցը մերժվում է, իսկ հայցվորն ի սկզբանե պետական տուրքից ազատված լինելու արտոնության ուժով ազատվում է նաև պատասխանողի կողմից վճարված տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունից: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համարժեք կարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարանը 10.07.2018 ՍԴՈ 1423 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. դատաքննության անբարենպաստ ելքով կամ օրենքով նախատեսված կոնկրետ հիմքով պայմանավորված դատավարության մասնակից այն սուբյեկտը, որն իրավունքի ուժով օգտվել է պետական տուրքի վճարման արտոնությունից, դատարանի որոշմամբ կարող է կրել դատական ծախսեր օրենքով նախատեսված հիմքերով հատուցելու պարտականություն՝ պահպանելով պետական տուրքի գծով արտոնությունը: Ավելին, նման գործերով դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ որոշվում է պետական տուրքը վերադարձնել այն վճարած և բարենպաստ դատական ակտին հասած կողմին¹⁰:

Բոլոր դեպքերում պետական տուրքը ենթակա չէ վերադարձման, եթե գործի քննության ընթացքում հայցվորը հայցի առարկան այնպես է փոփոխել, որ առաջացել է պետական տուրքի ավել վճարված մաս, իսկ վճարեկ բողոքի ընդունումը մերժվելու դեպքում պետական տուրքը չի վերադարձվում ոչ ավել, քան քսան հազար ՀՀ դրամի չափով:

«Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է պետական տուրքի վճարումից ազատման հիմքերը: Դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա) հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով,

բ) հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

գ) հայցվորները՝ խեղման կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով,

¹⁰ Մանրամասն տե՛ս **Մարկոսյան Տ. Ա.**, նշված աշխ., էջ 22:

դ) սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության մարմինները՝ տուժողին կամ նրա ընտանիքի անդամներին վճարված թոշակի և նպաստի գումարները վնաս պատճառողից գանձելու վերաբերյալ ռեգրեսիվ հայցերով,

ե) հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով և այլն:

Ինչպես վերը նշվեց, բացի պետական տուրքից, դատական ծախսերը ներառում են նաև այսպես կոչված գործի քննության հետ կապված այլ ծախսերը: Օրենսգրքի 105-րդ հոդվածով թվարկված են գործի քննության հետ կապված այլ ծախսերը, մասնավորապես, դրանց թվին են դասվում՝

1. փորձաքննության և թարգմանության հետ կապված ծախսերը,
2. վկաներին, փորձագետներին, մասնագետներին և թարգմանիչներին վճարվելիք գումարները,
3. գործին մասնակցող անձանց՝ գործի քննության վայր ժամանելու, ինչպես նաև նրանց՝ դատարան ներկայանալու կապակցությամբ ժամանակավոր կացարանով ապահովելու հետ կապված ծախսերը,
4. գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները,
5. ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու հետ կապված ծախսերը,
6. գործին մասնակցող անձանց փոստային ծախսերը,
7. դատարանի պահանջները և դատական հանձնարարությունները կատարելու հետ կապված գործին մասնակցող անձանց ծախսերը,
8. իրեղեն ապացույցների պահպանման ծախսերը,
9. հաշտարարի վարձատրության գումարը,
10. դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը:

Գործի քննության հետ կապված ծախսերի նման մանրամասն թվարկումը նպատակ է հետապնդում ապահովել իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջները, քանի որ դրանք, մի կոմից,

ուղենիշ են այն կատարող անձանց համար, իսկ, մյուս կողմից, կոչված են պաշտպանելու պարտվող կողմին, ում վրա, որպես կանոն, դրվում է ծախսերը հատուցելու պարտականությունը¹¹:

Այսպիսով, դատական ծախսերը կարելի է բնորոշել որպես գործի հարուցման, քննության և լուծման, ինչպես նաև դատական ակտերի վերանայման առնչությամբ դատարանի, գործին մասնակցող անձանց և դատավարության այլ մասնակիցների կատարած ծախսեր, որոնց փոխհատուցման պարտականությունը, օրենքով այլ բան նախատեսված չլինելու դեպքում, դրվում է գործին մասնակցող անձանց վրա: Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից: Կատարված հետազոտությամբ արձանագրվեց պետական տուրքի վերադարձման ինստիտուտում օրենսդրական լրացում կատարելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, կարծում ենք, որ օրենքում թվարկված հիմքերից զատ, կա ևս մեկ հիմքի ներդրման անհրաժեշտություն: Խոսքը բոլոր այն դեպքերի մասին է, երբ օրենքի ուժով պետական տուրքից ազատված գործերով պատասխանողը բողոքարկման կապակցությամբ վճարում է պետական տուրք և հայցը մերժվում է, իսկ հայցվորն ի սկզբանե պետական տուրքից ազատված լինելու արտոնության ուժով ազատվում է նաև պատասխանողի կողմից վճարված տուրքի գումարը փոխհատուցելու պարտականությունից:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИНСТИТУТА СУДЕБНЫХ РАСХОДОВ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Манасерян Кристине Ашотовна

Студентка 4-ого курса платного обучения

факультета правоведения Академии

Образовательного комплекса полиции РА

Статья посвящена некоторым проблемам судебных расходов по гражданским делам. Автор предлагает внести соответствующее дополнение в гражданско-процессуальное законодательство, с целью совершенствования правового регулирования института судебных расходов.

¹¹ Տե՛ս նույն տեղում:

Ключевые слова: судебные расходы, государственная пошлина, другие расходы, гражданское судопроизводство.

SOME ISSUES OF THE INSTITUTE OF JUDICIAL COSTS IN CIVIL PROCEEDINGS

Manaseryan Cristine

Educational Complex of Police of the Republic of Armenia,

Faculty of Law, 4th year

The article is devoted to some of the problems of court costs in civil cases. The author proposes to make an appropriate addition to the civil procedural legislation, in order to improve the legal regime of the institution of judicial payments.

Key words: court costs, state duty, other costs, civil proceedings.

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սահակյան Ալեքսանդր

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի

ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ,

ոստիկանության գնդապետ

Ժամանակակից աշխարհն այսօր հայտնվել է մի իրավիճակում, որը կանխատեսել կամ պլանավորել նախօրոք հնարավոր չէր: Խոսքը COVID-19 վիրուսի տարածման մասին է, որը «պաշարել է» ողջ աշխարհը և հանգեցրել պանդեմիայի՝ համավարակի, որի մասին 2019 թվականի մարտի 11-ին հայտարարեց Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ):

Բնականաբար այս իրողությունը նոր իրավիճակ ստեղծեց աշխարհում, որում հայտնվեց ողջ մարդկությունը: Դադարեցվեցին աշխատանքի հիմնական օղակները:

Վարակի շարունակվող տարածումը հանգեցրեց ֆոնդային շուկայի խաթարման, որը սկսվել էր 2020 թվականի փետրվարի կեսերին: Մասնավորապես, Դուու Ջոնսի արդյունաբերական ցուցանիշը և S&P 500 ցուցանիշը հաջորդ ամսվա ընթացքում նվազեցին 26-27%-ով:

Հետաձգվեցին բազմաթիվ սպորտային մրցումներ, այդ թվում՝ եվրոպական երկրների ազգային առաջնությունները գրեթե բոլոր մարզաձևերով: Չեղարկվեցին կամ հետաձգվեցին բազմաթիվ փառատոներ, ցուցահանդեսներ և մրցույթներ, ներառյալ Մոսկվայի միջազգային կինոփառատոնը, Կաննի կինոփառատոնը, Ֆարնբորոյի ավիասալոնը, Եվրատեսիլ-2020 երգի մրցույթը և այլն:¹

Ինչպես ցույց տվեց ժամանակը, շատ երկրներ, այդ թվում և մեր հանրապետությունը, պատրաստ չէին համավարակին, և բնականաբար այն պիտի առաջացներ նախ՝ խուճապ, այնուհետ՝ միայն հետզհետե

¹ COVID-19 պանդեմիա Վիքիպեդիայից:

ձևավորվող կանոնակարգված մոտեցում, որի լուծումը համավարակի հայտարարումն ու հետևաբար արտակարգ դրության կիրառումն էր:

Մեր հանրապետությունում արտակարգ դրություն մտցվեց 2020 թվականի մարտի 16-ին, որն ինքնըստինքյան ենթադրում էր բազմաթիվ սահմանափակումներ՝ այդ թվում երկրից դուրս ու ներս գալու, ավիաուղիները և ավտոճանապարհները փակելու, որը վերաբերում էր նաև մարզերի միջև հաղորդակցությանը, հասարակական հաստատությունների, աշխատանքի, կրթության, զանգվածային միջոցառումների անցկացմանը և այլն:

Նոր կարգավիճակը պահանջում էր նաև գործունեության բոլոր ոլորտներում աշխատանքի նոր մեթոդների կիրառում: Ինչպես ասում են անգլիացիները՝ «յուրաքանչյուր ձեռքբերում կորուստ է, և ամեն մի կորուստ՝ ձեռքբերում» (Every acquisition is loss and every loss is an acquisition):

Ընդհանուր առմամբ աշխարհում 09.05.2020 դրությամբ Covid 19-ից վարակվել էր արդեն 4 050 879 մարդ, իսկ 19.09.2020 դրությամբ նոր կորոնավիրուսի հետևանքով վարակվածների թիվը հասել է 30701000 մարդու, մահացածները՝ 956 000 և ավելի:

«Պետությունները պետք է հավասարակշռություն պահպանեն առողջության պահպանման, տնտեսական և սոցիալական հետևանքների նվազեցման և մարդու իրավունքների պաշտպանության միջև»², - գրում էր ԱՀԿ գլխավոր տնօրեն Թեդրոս Ադհանոմ Հեբրեյեսուսը:

Եվ ահա նոր տիպի կորոնավիրուսի համավարակի պայմաններում մարդիկ բախվեցին լուրջ պրոբլեմի հետ, որի մասին գուցե չէին էլ ենթադրում. հատկապես երեխաներին անհնար եղավ պահել տանը:

Նյու Յորքի Սենտ Ջոնս համալսարանի պրոֆեսոր Ս.ՈՒՈլլեսը գտնում է, որ պրոբլեմը անչափահասի մարմնի ֆիզիոլոգիական, հատկապես զանգի զարգացման մեջ է: Մարդու ճակատային մասը վերջնականապես ձևավորվում է մոտ 25 տարեկանում, և հատկապես նա է պատասխանատու իմպուլսների հսկողության համար, որոնցից կախված են զգացմունքները, պլանավորելու, դատելու ընդունակությունը և հեռանկարի տեսանկյունից կոնկրետ իրավիճակին նայելու կարողությունը:

² Մարտ 12.2020 EXCLUSIVE 6 կարևոր դրվագ պանդեմիայի մասին ԱՀԿ գլխավոր տնօրենի ելույթից:

ինչպես նշում է գիտնականը՝ «այդ պատճառով էլ անչափահասներն ուղղակի չեն գիտակցում, թե որչափ մեծ է համաճարակի պայմաններում հիվանդանալու ռիսկը, եթե չպահպանվի ինքնամեկուսացման ռեժիմը»³:

Այս պայմաններում կարևոր ոլորտներից մեկը՝ կրթության ոլորտը, կարող էր հայտնվել կաթվածահար վիճակում՝ դրանից բխող բազմաթիվ բացասական հետևանքներով: Սակայն կրթության պատասխանատու կառույցները կարողացան արագ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում: Ըստ էության՝ ընդհանուր բնակչության մի զգալի հատվածը՝ անչափահասները և ուսանողությունն անցան հեռավար ուսուցման մեթոդին:

Սկզբում ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում: Բնականաբար, բոլորը չէ, որ կարող էին իրենց թույլ տալ օգտվել հեռավար ուսուցման մեթոդից թե՛ գիտելիքների և համակարգչին բավարար տիրապետելու իմաստով, թե՛ համակարգչային ինտերնետ կապի հասանելիության, թե՛ պարզապես համակարգիչ չունենալու պատճառով, ինչը երևան հանեց ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ հատկապես մարզերում տիրող սոցիալական լուրջ խնդիրների առկայությունը:

Ժամանակակից տեխնոլոգիական միջոցները սկսեցին փոխարինել ուսուցման կենդանի շփման մեթոդին՝ դառնալով գերծանրաբեռնված: Արտակարգ իրավիճակում համացանցը սկսեց առաջարկել սկզբում մեկերկու, այնուհետև՝ ավելի շատ համացանցային ծրագրեր, որոնք անմիջապես սկսեցին կիրառվել հեռավար ուսուցման պրոցեսում: Սակայն գաղտնիք չէ, որ, ըստ ԿԳՍՄ նախարարության տվյալների, ՀՀ սովորողների մոտ 20 տոկոսը չունեն համակարգիչ, և անգամ դրա առկայության պայմաններում սոցիալապես ի վիճակի չէր վճարելու համացանցային ծրագրերի համար: Այստեղ է, որ համախմբվեցին ինչպես նախարարության, այնպես էլ այլ կազմակերպությունների ուժերն այդ կարևոր հարցը ինչ-որ կերպ լուծելու ուղղությամբ: Բայց դա հարցի մեկ կողմն էր:

Մեր ավագ սերնդի փորձառու ուսուցիչներից ոմանք բախվեցին համակարգչային նոր ծրագրերի տիրապետման և կիրառման խնդրին: Այստեղ էլ առաջարկվեց լուծում. անմիջապես ԿԳՍՄ նախարարության կողմից կազմակերպվեցին դասընթացներ՝ արագացված ուսուցմամբ խնդիրը լուծելու և այդ բացթողումը լրացնելու նպատակով:

³ **Баландин А.**, «Трудное время»: почему подростки рискуют здоровьем в пандемию. Газета.Ru.

Նոր իրավիճակում անչափահասները գամվեցին համակարգչի էկրանին՝ մասնակցելու հեռավար դասապրոցեսին: Փորձը ցույց տվեց, որ նրանք հաճույքով են մասնակցում այս տեսակի ուսուցմանը, սակայն այս երևույթը, ինչպես և յուրաքանչյուր պրոցես, ուներ նաև իր բացասական կողմը. դեռահասները, ժամերով գամված լինելով համակարգչին, ոչ միայն մասնակցում են դասապրոցեսին, այլև դրանից հետո ժամերով աշխատում են՝ տնային հանձնարարությունները կատարելու, այն ուսուցչին համակարգչով ուղարկելու, ստուգելու, սխալներն ուղղելու, բանավոր հարցման, հարց ու պատասխանի և այլ պրոցեսներին մասնակցելու համար, որն արդեն սովորողից խլում է շատ ավելի ժամանակ: Բնականաբար, սա կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ առողջության վրա, որն անհրաժեշտ է անպայման հաշվի առնել:

Ավելացնենք, որ այս պրոցեսին հաճախ ինքնաբերաբար մասնակցում են նաև անչափահասների ծնողները, ովքեր, համավարակի մեկուսացումով պայմանավորված, գտնվում են տանը և ականա դառնում հեռավար ուսուցման մասնակից:

Սա նույնպես ունի իր և՛ դրական, և՛ բացասական կողմերը:

Գնահատելի է, որ նրանք ավելի շատ ժամանակ են տրամադրում իրենց երեխաներին, շփվում նրանց հետ, հետևում թե՛ հանգստին, թե՛ հեռավար ուսուցման ընթացքին, անգամ դասի ընթացքում նստում են կողքին, տեղեկանում իրենց երեխաների բանավոր և գրավոր ուսուցման առաջադիմությանը, անմիջապես դիմում մանկավարժին որևէ հարցի առկայության դեպքում և այլն: Սակայն երբեմն իրենց պահում են, մեղմ ասած «անզգույշ», քանի որ երբևէ այսչափ տեղյակ չեն եղել իրենց երեխաների իրական գիտելիքների մասին, նրանց պարապելու լրջությանը և ինտենսիվությանը՝ հաճախ գերազնահատելով սեփական երեխայի բնական ընդունակությունների իրական պատկերը: Այստեղ առաջանում է նրանց սպասելիքների և իրականության բախում, որը հաճախ դառնում է ավելորդ, ոչ հարկի գրույց մանկավարժի և ծնողի միջև՝ առանց հաշվի առնելու այսօրվա մանկավարժի գերծանրաբեռնված, գերլարված աշխատանքի ընթացքը: Ցավոք, սա հարցի մի կողմն է:

Կա և հարցի մյուս կողմը: Այսօր ունենք նաև աշխատող ծնողներ, ովքեր անչափահասին թողնում են տանը՝ ակնկալելով, որ նա բարեխղճորեն մասնակցում է հեռավար դասերին: Սակայն անչափահասը,

ձևականորեն միանալով դասին, հաճախ անջատում է իր տեսախցիկը, համացանցում միանում իր դասընկերներից ոմանց և սկսում գրույց վարել՝ դրանով իսկ ոչ միայն դուրս մնալով դասապրոցեսից, այլև խանգարելով դասընկերներին: Սա վերահսկելը ուսուցչի համար դառնում է ավելորդ լարված աշխատանք՝ հաշվի առնելով դասարանում առկա 30-35 աշակերտի ներկայությունը, այն էլ համացանցում: Սա թերևս հեռավար ուսուցման բացասական կողմերից մեկն է, որը, ելնելով անչափահասի տարիքային խմբից և ինքնագիտակցության մակարդակից, հնարավոր չէ լիովին վերահսկել և ստիպել, որ սովորողը ակտիվորեն մասնակցի դասին և անգիտակցաբար չվատնի թանկ ժամանակը՝ ձևացնելով որ պարտաճանաչ մասնակցում է հեռավար դասերին և ստանում համապատասխան գիտելիքներ՝ հաջորդ տարում ուսումը շարունակելու համար:

Ցավոք, այստեղ է, որ որքան էլ խոսենք համացանցի և նորագույն տեխնոլոգիաների տված հնարավորությունների դրական կողմերի մասին, միևնույնն է, դրանք չեն կարող փոխարինել կենդանի շփմամբ անցկացվող դասապրոցեսին, անմիջական ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությանը, դասարանում տիրող ընդհանուր մթնոլորտի, հաճախ հաճույքով տարվող դասապրոցեսի հետ, որին, հմուտ դասավանդողի փորձառության շնորհիվ, մասնակից են դառնում գրեթե բոլոր աշակերտները՝ իրենք էլ երբեմն զարմանալով, թե որչափ հետաքրքիր և ուսանելի կարող է լինել այս կամ այն առարկայի կողմից տրվող գիտելիքը, տեղեկատվությունը, փորձը և այլն: Այստեղ է, որ նորմալ, կենդանի դասի ընթացքը դառնում է առավել ընդունելի, գնահատելի և արդյունավետ:

Նշենք, սակայն, որ այստեղ գոյություն ունի նաև հարցի մեկ այլ, շատ նուրբ պահ, որն առաջին հայացքից մնում է աննկատ, սովերում. հաճախ մանկավարժի առջև, ինչպես հայելու արտացոլանք, բացվում է տվյալ ընտանիքի սոցիալական, տնտեսական, բարոյահոգեբանական պատկերը, այստեղ տիրող ընտանեկան մթնոլորտը, այն միջավայրը, որում մեծանում է տվյալ անչափահասը: Այս դեպքում ուսուցչի համար հեռավար ուսուցման տեսապատկերը յուրաքանչյուր անչափահասի դեպքում դառնում է ակնառու և շատ դեպքերում տալիս անչափահասի վարքագծի, դասին անպատրաստ ներկայանալու, ներփակվածության,

ագրեսիայի, տրամադրության անկման, ընկերների հետ փոխհարաբերման և շատ այլ նուրբ հարցերի պատասխանը:

Լինում են դեպքեր, երբ հեռավար դասի ընթացքում լսվում է ծնողի բարձր ձայնը, հոխորտանքը, երևում է ինչ-որ բանից դժգոհ ծնողի բռնությունը, որից երեխան շփոթված անսպասելի անջատում է տեսապատկերը՝ մոռանալով ձայնի մասին, և երբ նորից է միանում դասի պրոցեսին, այլևս խառնված է, անտրամադիր և դասին «բացակա» հայացքով: Ավելացնենք, որ հաճախ դա լսելի է դառնում նաև դասընկերներին, որը ունենում է դրանից բխող անցանկալի հետևանքներ, այն է՝ օտարացած, իր մեջ ներփակված, բայց ներքին ագրեսիայով և միաժամանակ չարացած անչափահաս, ով ընդունակ է անկանխատեսելի արարքների: Սա հատկապես վտանգավոր է մեր օրերում, երբ առանց այդ էլ բոլորը գտնվում են լարված, անհանգիստ, ինչու՞ ոչ, վախվորած վիճակում, և այս պայմաններում դժվար է գնահատել թե՛ անչափահասի, թե՛ ծնողի վարքագիծը:

Այս փաստը իհարկե կարող է նաև բացատրվել տվյալ իրավիճակի հետևանքով ստեղծված սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական իրողությամբ, ծնողի աշխատագուրկ վիճակով պայմանավորված անելանելի դրությամբ, նաև համավարակով պայմանավորված՝ ընտանիքի վաղվա օրը չտեսնելու ցավալի խնդրի առկայությամբ, սակայն դա չի արդարացնում անչափահասի նկատմամբ ցանկացած բռնության կիրառումը՝ դրանից բխող հետևանքներով: Չմոռանանք, որ ցանկացած բռնություն, ընտանեկան անցանկալի իրավիճակ, սոցիալական ընկճվածություն, թե մեկ այլ երևույթ, ունի իր շղթայական ռեակցիան, որն անկանխատեսելի հետևանքների կարող է հանգեցնել, և այսօրվա անչափահասը վաղը կարող է դառնալ իրավախախտ և անգամ հանցագործ անչափահաս: Այստեղ է, որ պատկան մարմինները պետք է հնարավորինս հետևողական և մանրազնին ուշադրությամբ հետևեն անչափահասների վարքագծի փոփոխություններին և հնարավորության սահմաններում ուշադիր լինեն նրանց կողմից կատարվող որևէ արարքի դրսևորմանը:

Իհարկե, հեռավար դասընթացները խլում են շատ ժամանակ, սակայն անչափահասն ունի նաև հանգստի, խաղի, ընկերների հետ շփվելու բնական պահանջ և իրավունք, որն այսօր արգելված է համավարա-

կով պայմանավորված համատարած սահմանափակումների պատճառով: Այստեղից մեծանում է անչափահասի հոգեկան լարվածությունը, ներքին անբացատրելի անհանգստությունը, նյարդայնացումը, ագրեսիան և այլն:

Նման պայմաններում ծնողները ևս պետք է առավել ուշադիր լինեն իրենց կողմից կիրառվող դաստիարակչական սահմանափակումներին: «Ծնողները պետք է հասկանան, որ տվյալ դեպքում իրենց կողմից կիրառվող ուժին կարող է հակազդել անչափահասի կողմից կիրառվող հակաուժը: Սակայն հրաժարվել ձեր կարծիքից պարտադիր չէ: Փնտրե՛ք այլ ուղիներ: Գուցե կսահմանափակեք երեխայի օնլայն-շփումները՝ զրկելով նրան իր հասակակիցների հետ շփումից, կամ ներխուժելով նրա սենյակ և կիրառելով ձեր օրենքները՝ կսահմանափակեք նրա իրավունքի սահմանները: Գլխավորը, որ չպետք է մոռանան ծնողներն այն է, որ ձեր առջև այլևս երեխա չէ, բայց և ոչ լրիվ հասուն մարդ: Դա ցանկացած հասուն մարդու ամենաբարդ շրջանն է», - պատմել է Ա. Բալանդինը:⁴ Ի վերջո մարդկային, ընկերական շփումը չի կարող փոխարինվել համացանցային շփմամբ, որքան էլ որ թվում էր, թե օնլայն-շփումները վաղուց դարձել են նորմա, ինչպես նշում են շատ հոգեբան գիտնականներ: Միևնույնն է, անչափահասները, իրենց ընկերներից գտնվելով մեկուսի վիճակում, հատկապես ծանր են տանում այդ միայնությունը, և այստեղ է, որ մեր վիճակագրությունը փաստում է որոշակի բռնության, անգամ դանակահարության դեպքեր, որ ստանում ենք ոստիկանության տեղեկատուից:

«RuGenerations» գիտահետազոտական կենտրոնի հոգելինգվիստիկայի գիտությունների դոկտոր Ե.Շամիսը գրում է. «Հարաբերությունների տեսակետից, որոնք տեղի են ունենում տարբեր սերունդների միջև, կարող եմ ասել, որ մարդկությունն ամբողջապես չի անցնի օնլայն-շփմանը: Կորոնակրիզիսը հատկապես ընդգծեց կենդանի շփման կարևորությունը: Եվ դա երևաց ամեն ինչում. մենք այլևս առավել կգնահատենք բարեկամությունը, աշխատանքային շփումները, հարաբերությունները, որոնք ստեղծում ենք: Դա առավելապես կդրսևորվի Z սերնդի նկատմամբ, ով-

⁴ **Баландин А.**, «Трудное время»: почему подростки рискуют здоровьем в пандемию. Газета.Ru.

քեր ծնվել են 2003-ից հետո»,- բացատրել է գիտնականը «Газета.Ru»-ին:⁵

Ի տարբերություն չափահաս մարդու, ով նույնպես դժվար հոգեվիճակում է համավարակի սահմանափակումների հետևանքով, անչափահասի հոգեկերտվածքի յուրօրինակությունն առավել ցայտուն և տեսանելի է դարձնում վերջինիս տարիքային առանձնահատկությունները, որի հետ հաշվի չենտել չենք կարող: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ յուրաքանչյուր ազգ, ունենալով իրեն բնորոշ հոգեկերտվածք, բնավորություն, շփումների անհրաժեշտության մակարդակ և այլն, նույն կերպ չի կարող իրեն դրսևորել նաև այս համավարակի պայմաններում, և այստեղ է, որ հատկապես անչափահասները, ինչու չէ, նաև չափահաս ազգաբնակչությունը, չափազանց դժվար է ենթարկվում նմանօրինակ շփումների սահմանափակումներին, որն էլ իր հերթին հանգեցնում է ավելորդ դեպրեսիվ վիճակների, լարվածության, նյարդային պահվածքի: Սակայն անհրաժեշտ է դրսևորել բարձր գիտակցություն և զգոնություն՝ դիմակայելու նոր կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումներին՝ պահպանելով ոչ միայն մեր, այլև մեր հարազատների, ընկերների և ողջ ազգաբնակչության առողջությունն ու կյանքը:

Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում, Covid-19-ը հեղաշրջել է երեխաների ու ընտանիքների կյանքն ամբողջ աշխարհում: Կարանտինային միջոցառումներն, ինչպես օրինակ, դպրոցների փակումը և տեղաշարժման սահմանափակումները, թեև անհրաժեշտ են, սակայն միաժամանակ խաթարել են երեխաների առօրյան՝ նաև հոգեբանական տառապանքների տեսանկյունից: Միաժամանակ, իրականացվող վերահսկողական միջոցառումները, որ հաշվի չեն առնում գենդերային կարիքները և կանանց ու աղջիկների խոցելիությունը, կարող են ավելացնել սեռական շահագործման, չարաշահումների և անչափահասների ամուսնության հետ կապված ռիսկերը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխաների պաշտպանության հարցերով տնօրեն՝ Կոռնելիուս Ուիլյամսը նշում է. - «Հիվանդությունն անուղղակիորեն հար-

⁵ **Баландин А.**, «Трудное время»: почему подростки рискуют здоровьем в пандемию. Газета.Ru.

վածում է երեխաներին ու ընտանիքներին բազմաթիվ ճանապարհներով՝ առանց վարակելու»⁶:

Կազմակերպությունը հորդորում է կառավարություններին ապահովել երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը՝ վարակի ստեղծած ահազնացող սոցիալ-տնտեսական հետևանքների լույսի ներքո և 2020 թվականի մայիսի 7-ին ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Մարդասիրական գործունեության ընթացքում երեխաների պաշտպանության այլանսը գործընկերների հետ միասին հրապարակել են ուղեցույց՝ արձագանքման գործընթացում ներգրավված պետական կառույցներին ու այլ կազմակերպություններին աջակցելու նպատակով: «Այս ուղեցույցը կառավարությունների ու երեխաների պաշտպանության պատասխանատու մարմինների համար ուրվագծում է գործնական այն միջոցառումները, որ հնարավոր է իրականացնել անորոշության այս ժամանակաշրջանում երեխաներին անվտանգ պահելու համար»⁷, ինչպես նաև ապահովելու նրանց կրթության իրավունքը, որն այս պահին փորձում է իրականացնել մեր կառավարությունը՝ կազմակերպելով արդեն իսկ «հիբրիդային», այսինքն՝ և՛ առկա, և՛ հեռավար ուսուցում, ու անչափահասների առօրյան դարձնել ապահով և իմաստավորված:

ОБЕСПЕЧЕНИЕ ПРАВА НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ НА ОБРАЗОВАНИЕ В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ COVID -19

Саакян Александр Габриелович

Доцент кафедры ОРД и криминалистики

Академии Образовательного комплекса полиции

Республики Армения, полковник полиции

В статье рассказывается о многочисленных ограничениях, явившихся следствием коронавируса **COVID -19** и объявления угрозы мировой пандемии. С профессиональной точки зрения рассматриваются некоторые положительные и негативные стороны такой формы, как онлайн-обучение. Также обсуждаются

⁶ Քանի դեռ աշխարհը փորձում է զսպել ՔՈՎԻԴ-19- ի տարածումը, երեխաները հայտնել են շահագործման ու բռնության դիսկի տակ. ՅՈՒՆԻՍԵՖ: 07 մայիս, 2020 էլ. փոստ՝ zsargsyan@unicef.org:

⁷ <https://factor.am /247931.html>© factor.am.

такие «минусы» онлайн-обучения, как недостаток «живого» общения и создание атмосферы излишней напряженности и агрессии, что требует особого внимания от педагогов и родителей. Сегодня обучение перешло на «гибридную» форму, которая более приемлема и позволяет реализовать право несовершеннолетнего на обучение, а государству – обеспечить безопасность обучающегося.

Ключевые слова: пандемия, образование, учебный процесс, обучение, дистанционный, гибрид, гибридный метод, несовершеннолетний, государство.

ENSURING THE RIGHT OF JUVENILES TO EDUCATION IN TIMES OF PANDEMIC COVID 19

Sahakyan Aleksandr

*Associate professor of the Chair of the
Operative Intelligence Activity and Criminalistics,
Police Colonel*

The article covers the global pandemic declared due to COVID-19 and a number of restrictions. Specifically, some advantages and disadvantages of distance education are presented. Meanwhile, the article presents some problems related to the lack of social interaction, negatively affecting juveniles, extra tension and aggression, that should be taken into consideration by parents and educators. Nowadays the “hybrid” method is privileged, as it ensures both the right of juveniles to education and their security.

Key words: pandemic, education, course, learning, distance education, hybrid method, juvenile, state.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Սարգսյան Արթուր

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
հասարակագիտական առարկաների և հոգեբանության
ամբիոնի դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ*

Յուրաքանչյուր մասնագիտություն ենթադրում է որոշակի գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ինչպես նաև մասնագիտական նշանակություն ունեցող որակների և հատկությունների ամբողջություն: Ոստիկանության աշխատակիցներն այս իմաստով բացառություն չեն կազմում, առավել ևս՝ ոստիկանության մարմինների կողմից իրականացվող խնդիրների սոցիալական նշանակալիությունը, սոցիալական սպասելիքները ներկայացնում են նոր պահանջների համալիր ոստիկանի մասնագիտությունն ընտրած անձին: Արհեստավարժ մասնագետի պատրաստումը այս բնագավառում նախ և առաջ նպատակաուղղվում է այդ պահանջների բավարարմանը: Միևնույն ժամանակ մեր պետության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցած արմատական փոփոխություններով պայմանավորված՝ ոստիկան – մասնագետի պատրաստման ավանդական հոգեբանական+ – +մանկավարժական մեխանիզմները հաճախ արդյունավետ չեն և հեռու են իրական պահանջներից: Պահանջվում են սկզբունքորեն նոր մոտեցումներ և անձի վրա ներգործության նոր ձևեր ոստիկան+ - +մասնագետի պատրաստման (վերապատրաստման) գործընթացներում:

Մասնագետ+ - +պրոֆեսիոնալի պատրաստման հիմնական միջոցը մանկավարժական գործընթացն է, որի ընթացքում լուծվում են աշխատակցի ուսուցման, դաստիարակության և մասնագիտական կայացման խնդիրները: Ընդհանուր և հատուկ գիտելիքների յուրացումը, մասնագիտության համար նշանակալի որակների և հատկությունների ձևավորումն ավելի արդյունավետ է ընթանում, երբ մանկավարժական գործընթացը դիտարկվում է որպես ուսումնադաստիարակչական գործունեու-

թյան բոլոր տարրերի փոխկապակցված և փոխայամանավորված *համակարգ*:

Մասնագիտական կրթության իրականացման համար ինչպես ցանկացած կրթական հաստատությունում, այնպես էլ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում ստեղծված է **մանկավարժական համակարգ**: Դրա տակ հասկացվում է որոշակի փոխկապակցված տարրերի ամբողջություն, որոնք անհրաժեշտ են նպատակաուղղված և կառավարելի մանկավարժական գործընթացի ստեղծման համար, որն էլ իր հերթին կապահովի մասնագիտական որակավորմանը համապատասխան շրջանավարտի անձի և արհեստավարժության ձևավորումը:

Միաժամանակ կարևոր է հաշվի առնել կոնկրետ կրթական հաստատության մասնագիտական պրոֆիլը և դրանից բխող առանձնահատկությունները, որոնք բնականոն կերպով անդրադառնում են մանկավարժական գործընթացի վրա: Առավել ընդհանրացված տեսքով Կրթահամալիրի բոլոր օղակներում /ուսումնական կենտրոն, քոլեջ, ակադեմիա/ իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկությունների շարքում կարելի է նշել՝

- Կոնկրետ որակավորմամբ մասնագետի պատրաստման գործընթացում կրթական և դաստիարակչական խնդիրների ու նպատակների համակցումը:
- Ուսումնառության օբյեկտի յուրահատկությունները /տարիքային, սոցիալական, հոգեբանական, ֆիզիոլոգիական և այլն/:
- Ուսուցման ընդգծված գործնական ուղղվածությունը:
- Ուսումնառության համակցումը ծառայողական գործունեության հետ:
- Սովորողներին առավել մեծ պատասխանատվությունը և ինքնուրույնության տրամադրումը ծրագրային նյութի յուրացման գործում:
- Առաջադիմության ստուգման և գնահատման յուրահատկությունը և այլն:

Ոստիկանության աշխատակիցների մասնագիտական պատրաստման համակարգը այդ առումով ներառում է փոխկապակցված հարցերի բավականին լայն շրջանակ: Նախ և առաջ իմաստավորման կարիք ունի

նուստիկանության մարմինների գործունեության ժամանակակից հայեցակարգը:¹

Դեռևս 1920թ. անգլիացի մասնագետները համոզմունք էին արտահայտում, որ մարդը չի կարող լավ ուստիկան լինել, եթե չի տիրապետում միջինից բարձր ինտելեկտուալ ընդունակությունների, լավ հիշողության և դիտողունակության: Նրանում պետք է համակցվեն բարձր բարոյական, մտածողական և ֆիզիկական որակներ, որոնք պարտադիր չեն այլ մասնագիտության մարդկանց համար: Նա պետք է միշտ գործի չափավոր և խելամիտ, նախաձեռնությամբ հանդես գա չկանխատեսված իրադրություններում: Ուստիկանի վրա դրված է առավել մեծ պատասխանատվություն, քան այլ մասնագիտությունների պաշտոնատար անձանց վրա:²

Արդի փուլում ուստիկանության ծառայության կազմակերպման հիմնական սկզբունքները, պահանջներն ու պայմանները կազմում են հարցերի այն շրջանակը, որը թույլ կտա հասկանալ իրավակարգի պահպանման և հանցավորության դեմ պայքարի ներկայիս առանձնահատկությունները: Մասնավորապես, ուստիկանական մասնագիտական կրթության զարգացման վրա վճռական ազդեցություն ունեցավ XX դարի 70-ական թվականներին տեղի ունեցած ուստիկանության սոցիալական նշանակության փոփոխությունը, որն իր արտահայտությունը գտավ հասարակությանը ծառայելու գաղափարի մեջ՝ սերտորեն համագործակցելով քաղաքացիների հետ: Համարվում է, որ ժամանակակից քաղաքակիրթ հասարակության մեջ ուստիկանությունը արդեն ոչ թե պատժիչ ուժային կառույց է, այլ ամենօրյա, շուրջօրյա սպասարկող /սերվիսային/ ծառայություն՝ սոցիալական ծառայությունների մատուցման լայն շրջանակներով³: Դրա հիման վրա էլ կառուցվում է ուսուցման և դաստիարակության ժամանակակից համակարգը: Համաձայն դրա՝ ուստիկանական մարմինների մասնագիտական պատրաստման ելակետային բնութագրական գծերն ու անձնային հատկություններն են.

¹ Այստեղ խոսքը ապագա ուստիկանի «մոդելի» ճշտգրտման և հստակեցման մասին է: Դեռևս Ա. Ս. Մակարենկոն ասում էր. «Մանկավարժը, դաստիարակելով սովորողին, պետք է կարողանա պրոյեկտել նրա ապագա անձը, մանրամասն պատկերացնել, թե ինչպիսին այն պետք է լինի, ինչ որակներ է պետք նրա մեջ ձևավորել»:

² Сборник переводов ВХИИ СССР. - М., 1968. - № 62. стр 35-36.

³ Юридическая педагогика – Столяренко А. М., Кикоть В. Я., М., 2004, стр. 860.

- Հասարակական կարգի պահպանության գործառույթի առաջնայնության ճանաչում՝ քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ:
- Աշխատանքի արդյունքների գնահատման անհրաժեշտության գիտակցում ոչ թե բացված հանցագործությունների քանակով (ինչը բնութագրական էր ավանդական պատրաստականության համակարգին), այլ ոստիկանական սպասարկման առաջադրված տարածքում հասարակական կարգի փաստացի վիճակով:
- Ազգաբնակչության հետ ամուր կապերի, ինչպես նաև քաղաքացիների նկատմամբ քաղաքավարի վերաբերմունքի առկայություն:
- Ոստիկանության աշխատակցի բարոյահոգեբանական որակների ձևավորման հիման վրա՝ սեր մասնագիտության հանդեպ և կայունություն մասնագիտական դեֆորմացիայի նկատմամբ:
- Պրոֆեսիոնալ գործունեության առանձնահատկություններով պայմանավորված դեֆորմացիոն գործոնների դիմակայելու կարողություն:

Աշխատանքային անհրաժեշտ գծերի և որակների նշված ցանկը, որը պետք է իր արտացոլումը գտնի ոստիկանության աշխատակցի ապագա մոդելում, սպառնիչ չէ, և իհարկե, ունի լրացուցիչ ճշտգրտման կարիք:

Ընդհանուր առմամբ մանկավարժական գործընթացը և դրա առանձին փուլերը ուղղված են այնպիսի անձնավորության ձևավորմանը, որը օժտված կլինի որոշակի մասնագիտական և բարոյահոգեբանական որակների ամբողջությամբ, որը թույլ կտա իրականացնելու հատուկ սոցիալական խնդիրներ հասարակական կարգի պահպանության ուղղությամբ: Մանկավարժական համակարգը նախ և առաջ արտացոլում է հասարակության սոցիալական պատվերը, որը կանխորոշում է ուսուցման և դաստիարակության նպատակներն ու խնդիրները: Այսպես, օրինակ, պրոֆեսոր Ի.Վ. Գորլինսկին սահմանում է մանկավարժական համակարգը՝ որպես փոխկապակցված տարրերի ամբողջություն, որն անհրաժեշտ է կազմակերպված և կառավարվող մանկավարժական գործընթացի ստեղծման համար և ապահովում է առաջադրված որակներով անձի ձևավորումն ու որակավորված մասնագետի պրոֆեսիոնալ պատրաստականությունը: Մանկավարժական համակարգի կառուցվածքում

հեղինակն առանձնացնում է 3 բաղադրատարրեր՝ կառավարչական+ - +կազմակերպչական, գիտական+ - +բովանդակային և տեխնոլոգիական⁴:

Գիտական+ - +բովանդակային բաղադրատարրը իր մեջ ներառում է մասնագիտական կրթության նպատակներն ու խնդիրները, կրթական գործընթացի բովանդակության գիտական ապահովումը, մանկավարժական սկզբունքներն ու կանոնները: Տեխնոլոգիական բաղադրատարրը կենտրոնացած է կրթության գործընթացի կազմակերպման նպատակային ձևերի, ուսուցման և դաստիարակության մեթոդների, դասավանդողների և սովորողների կողմից օգտագործվող միջոցների զինանոցի, ինչպես նաև ուսումնառության արդյունքների և առաջադիմության վերահսկողության վրա: Կազմակերպչական+ - +կառավարչական բաղադրատարրը ներառում է ղեկավար ու տեսչական կազմի գործունեությունը՝ կոչված ապահովելու կրթական գործընթացի պլանավորումը, կազմակերպումը, նորմալ ընթացքը և կատարելագործումը:

Մանկավարժական համակարգի նշված կառուցվածքը գործում է արդյունավետ, եթե դրա բոլոր բաղադրատարրերը գտնվում են չընդհատվող համագործակցության և կատարելագործման վիճակում:

Հասարակական կյանքի մշտական փոփոխությունների պայմաններում մանկավարժական համակարգը որոշում է ուսումնադաստիարակչական գործընթացի դինամիկան, բերում է համաձայնության հասարակության գործող պահանջմունքների և պահանջների հետ: Տարբեր պատմական փուլերում դաստիարակությանն ու ուսուցմանը ներկայացվող պահանջները տարբեր են եղել: Այսպես, օրինակ, ԽՍՀՄ ժամանակաշրջանի մասնագետին և ներկայիս մասնագետին ներկայացվող պահանջներն ունեն զգալի տարբերություններ: Բացի այդ՝ ակներև է նաև այն փաստը, որ նույն դարաշրջանում գոյություն են ունեցել տարբեր մանկավարժական հայեցակարգեր, որոնք, սակայն, ունեցել են ընդհանուր նպատակ: Այն է՝ ձևավորել գործող պայմաններին հարմարեցված, հասարակության մեջ հաջող գործողությունների կատարման համար անհրաժեշտ որակներով օժտված անձնավորություն: Պատմական գործոնից բացի՝ մանկավարժական գործընթացը ենթարկվում է նաև այլ

⁴ Педагогическая система непрерывного профессионального образования в учебных заведениях МВД России и пути ее развития - Горлинский Н. В., М., 1999.

գործոնների ազդեցության, որոնք այս կամ այն չափով որոշում են դրա բովանդակությունը: Նման գործոնների շարքին կարելի է դասել՝

- Հասարակական – տնտեսական հասարակարգի տեսակը
- Տվյալ հասարակության քաղաքակրթության մակարդակը
- Պետության աշխարհագրական – տարածքային տեղորոշումը
- Գերակայող կրոնը (կրոնական գործոն)
- Տվյալ ազգին բնորոշ էթնոհոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Մեր օրերում, կախված ինֆորմացիոն առատ հոսքից, մանկավարժական գործընթացը ձեռք է բերել լրացուցիչ բարդություն և բազմերանգություն: Արագ փոփոխվող ինֆորմացիայի ծավալը սրությամբ առաջ է քաշում մանկավարժական գործընթացի ճկունության հարցը: Խնդիր է առաջանում վերակառուցելու ողջ կրթական համակարգը այնպիսի հաշվարկով, որ մանկավարժական գործունեությանը տրվի լրացուցիչ դինամիկա: Հակառակ դեպքում հնարավոր է մարդու՝ որպես ինֆորմացիոն կրիչի հնեցման սինդրոմը (տվյալ դեպքում մանկավարժի և սովորողի): Այդ դեպքում սովորողն արդեն ուսումնառության ընթացքում ապահովագրված չէ հնացած գիտելիքների ստացումից, ինչը հետագայում նախկին կարծրատիպերի, վարքագծի մոդելների, վերջին հաշվով տվյալ անձնավորության ողջ աշխարհայացքի վերափոխման անհրաժեշտություն է առաջացնում:

Վերը թվարկված գործոնների ազդեցության հետևանքով նաև ուստիկանական մանկավարժական համակարգին ներկայացվում են նորանոր պահանջներ, որոնք առաջ են եկել ողջ ժողովրդական կրթության փոփոխությունների պատճառով: Դրանցից կարևորագույնը հանդիսացավ ուսուցման և դաստիարակության գործում տեղաշարժը ավանդական /վարչահրամայական/ մոտեցումից դեպի անհատապես կողմնորոշված /ուսանողակենտրոն/ մոտեցում, ձգտումը հաղթահարելու որոշակի օտարությունը, որը գոյություն ուներ մանկավարժի և սովորողի միջև: Այսօր ապագա ուստիկանի պատրաստումը իրականացվում է ուսումնադաստիարակչական գործընթացում սուբյեկտային փոխհարաբերությունների դիրքերից՝ ի տարբերություն նախկին «սուբյեկտ – օբյեկտ» փոխհարաբերություններից: Նշված մոտեցումներից առաջինի դեպքում պետական պատվերն է որոշում անհրաժեշտ որակներով օժտված անձի մո-

դելը, ձևավորում է դաստիարակության բովանդակությունն ու հիմնական ուղղությունները: Երկրորդ դեպքում սովորողը դառնում է մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակից և ներագրելով այդ գործընթացի վրա՝ վերակառուցում է դրա բովանդակությունը՝ սեփական պահանջմունքներին, հետաքրքրություններին, ձգտումներին համապատասխան: Այս մոտեցման դիրքերից կարևոր է գնահատել ոչ միայն այն, թե ինչ է տալիս կրթական համակարգը սովորողին, այլև այն, թե ինչն է սովորողը *վերցնում* ներկայացված նյութից: Հետևապես կարևոր է հաշվառել, թե ինչպես է տրված ինֆորմացիան արտացոլվում և մեկնաբանվում սովորողի գիտացության մեջ:

Ամփոփելով վերը ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ էապես փոխվել է ուսուցման և դաստիարակության թե՛ բովանդակությունը և թե՛ մեթոդաբանությունը: Այս դիրքերից անձի՝ լայն իմաստով դաստիարակությունը կարելի է բնութագրել որպես անձի վրա ներգործության համակարգային նպատակաուղղված գործընթաց, որը նպատակ ունի իրագործելու սովորողի անձնային ներուժը, ձևավորելու նրա բնավորությունը, կամքը, դրական սովորույթները, բարոյական սկզբունքները, աշխարհայացքային հիմքերը և այլ անձնային որակները: Նման սահմանումը առաջին հերթին ենթադրում է ուսուցման և դաստիարակության միջոցով ապագա ոստիկանին զինել գիտական ճանաչողությամբ, այդ հիմքի վրա ձևավորել ընդհանուր և հատուկ կարողություններ, իրագործել անձի բնական նախադրյալները, պատվաստել վարքի առողջ սովորույթներ և հաղորդակցման ձևեր:

Այդ գործընթացում նպատակահարմար է նաև արտասահմանյան երկրների ոստիկանության կադրերի պատրաստման փորձի ուսումնասիրումն ու խելամիտ օգտագործումը:

ПРИОРИТЕТЫ ПЕДАГОГИЧЕСКОЙ СИСТЕМЫ ОБРАЗОВАТЕЛЬНОГО КОМПЛЕКСА ПОЛИЦИИ РА

Саргсян Артур Манвелович

*Доцент кафедры обществоведческих дисциплин и
психологии Образовательного комплекса полиции РА,
подполковник полиции*

Динамика изменений общественных отношений на современном этапе развития армянского общества предъявляет к полицейской профессии повышенные требования. В связи с этим определенные изменения претерпевает педагогическая система подготовки будущих кадров полиции, которая осуществляется в Образовательном комплексе полиции РА. На основе анализа современных условий деятельности полиции, а также публикаций зарубежных авторов, в статье представлены некоторые специфические особенности и приоритетные направления совершенствования педагогического процесса.

Ключевые слова: педагогическая система, профессиональная подготовка, полиция.

PRIORITY DIRECTIONS OF PEDAGOGICAL SYSTEM IMPROVEMENT OF POLICE EDUCATION COMPLEX OF RA

Sargsyan Artur

*Associate Professor at the Chair of Social Sciences and
Psychology of Police Educational Complex of RA
Police Colonel*

The dynamics of change in social relations in the present stage of the Armenian society development increases the demand for the profession of “police officer”. In this regard, the pedagogical system of preparing future police officers accepted by Police Educational Complex of RA becomes subject to an appropriate adjustment. The article covers some particularities and priority directions of pedagogical system improvement based on the analysis of today’s conditions of police activity and the examination of foreign literature.

Key words: pedagogical system, professional preparation, police.

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Տոնոյան Անժելա

*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի
տեխնիկական առարկաների ամբիոնի դասախոս,
ոստիկանության մայոր*

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Սահմանադրության 57-րդ հոդվածը երաշխավորում է ՀՀ-ում աշխատանքի ազատ ընտրության իրավունքը: Այս դրույթը տարածվում է ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրացիների վրա, հետևաբար ՀՀ-ն՝ որպես իրավական և սոցիալական պետություն, պարտավոր է միջոցներ ձեռնարկել ապահովելու սահմանադրական նորմերի ազատ կիրառումը: Սահմանադրության վերը նշված հոդվածի տրամաբանական շարունակությունն է կազմում ՀՀ աշխատանքային օրենսգրքի 15-րդ հոդվածը, որով նախատեսվում է, որ օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում ունեն այնպիսի աշխատանքային իրավունակություն, ինչպիսին ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ միջազգային իրավունքի նորմերով և ՀՀ-ի քաղաքական վիճակով պայմանավորված՝ ՀՀ-ն պետական մակարդակով կազմակերպված փորձում է իրականացնել օտարերկրացիներին ՀՀ քաղաքացիներին հավասար կերպով աշխատանքի ներգրավելը՝ առաջնություն տալով երկրի տնտեսական պայմանների և սեփական քաղաքացիների կարիքների բավարարմանը: Վերջին տարիներին ՀՀ-ում, օտարերկրացիների թվաքանակի աճով պայմանավորված, օտարերկրացիների աշխատանքային իրավահարաբերությունների պատշաճ կանոնակարգման խնդիրը ձեռք է բերել պետական կարևորություն և ստացել որոշակի իրավական կարգավորում և լուծումներ:

Յուրաքանչյուր պետություն ինքն է պարտավոր սահմանել և կազմակերպել օտարերկրացիներին իր երկրում աշխատանքով ապահովելու

սահմաններն ու մեխանիզմները՝ չսահմանափակելով մարդու հիմնարար իրավունքները, ազատությունները, շահերը:

ՀՀ-ում օտարերկրացիների աշխատանքի կարգավորման վերաբերյալ իրավական առաջին մեխանիզմները սահմանվել են 2006թ. դեկտեմբերին ընդունված և 2007թ. փետրվարից ուժի մեջ մտած «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի՝ օտարերկրացին ՀՀ-ում աշխատելու համար (բացառությամբ օրենքով հստակ սահմանված որոշակի դեպքերի) պետք է ունենա աշխատանքի թույլտվություն, և օտարերկրացու համար այդպիսի թույլտվություն ստանալու համար պետք է համապատասխան լիազոր մարմնին դիմում ներկայացնի գործատուն: Փաստորեն օտարերկրացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին աշխատանքի թույլտվության ապահովման մեխանիզմը պետությունն ի սկզբանե տվել է գործատուին համարելով, որ առավել հեշտ կլինի համակարգն այդ կերպ վերահսկել:

Օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն ստանալու հարաբերությունները մանրամասն կարգավորվեցին ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 12-ի N 486-Ն և N 493-Ն «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրյա աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին» որոշումներով, որոնք ուժի մեջ մտան 2016թ. հունիսի 4-ին: Կառավարության համապատասխան որոշումներն արդեն սկսեցին ներխուժել իրավակիրառ պրակտիկա, սակայն պրակտիկան առաջ բերեց մի շարք խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակումը ստիպեց կասեցնել օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն ունենալու օրենսդրական պահանջի գործարկումը: Այսպիսով՝ 2016 թվականի օգոստոսի 18-ը տրված աշխատանքի թույլտվությունները պահպանում են իրենց իրավական ուժը և կասեցված

որոշումների գործողության վերսկսումից հետո ևս՝ մինչև աշխատանքի թույլտվության մեջ նշված ժամկետի լրանալը, շարունակելու են գործել:

Ինչպես օրենսդրական ցանկացած նորարարություն իրավակիրառ պրակտիկայում, նոր ընդունված որոշումները ևս զերծ չեղան որոշակի «տարօրինակ» պահանջներից: Օրինակ՝ հայաստանյան ապագա գործատուի կողմից օտարերկրացու անձնագրի ներկայացումը օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին, այն է՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այստեղ դժվար է պատկերացնել իրավիճակ, երբ Իտալիայի քաղաքացու՝ իր անձնագիրը ժամանակավորապես վերցնելու և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնելու խնդրանքով դիմելու գործընթացը կազմակերպելը, հատկապես այն դեպքում, երբ օտարերկրացու համար մինչև աշխատանքի թույլտվությունը ստանալը չի կարելի կնքել աշխատանքային պայմանագիր վերջինիս հետ:

Ոլորտի իրավական կարգավորման հարցում հաջորդ և էական քայլը եղավ այն, որ օտարերկրացի աշխատողի համար ՀՀ-ում աշխատանքի թույլտվություն ունենալու պահանջին առնչվող իրավական կարգավորումների գործողությունը կասեցվեց մինչև 2018 թվականի հունվարի 1-ը: Այս հանգամանքն ամբողջովին արդարացված էր՝ գործողության մեջ դրված օրենքի ու կառավարության որոշումների ոչ ամբողջական հստակ լինելու արդյունքում: Ստացվում է, որ մինչ այդ պահը օտարերկրացիները ՀՀ-ում աշխատանքային հարաբերություններում կարող էին գտնվել առանց իրավասու մարմնից թույլտվության:

Հարկ է նշել, որ 2019 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք

տվող մասնագիտությունների ցանկերը սահմանելու մասին» 2016 թվականի մայիսի 12-ի թիվ 493-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում):

Վերոգրյալ կարգավորումներից ակնհայտ է, որ օտարերկրացիների համար աշխատելու թույլտվություն տրամադրելու համար նախատեսված է հատուկ ընթացակարգ: Պայմանականորեն օտարերկրացի աշխատակցի համար թույլտվություն ստանալու ընթացակարգը կարելի է բաժանել 2 փուլի՝

1. թափուր աշխատատեղի ուսումնասիրություն և դիտարկում,
2. օտարերկրացուն կոնկրետ աշխատանքի համար թույլտվության դիտարկում և տրամադրում:

Առաջին փուլում գործատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է (այսուհետ՝ Նախարարություն) ներկայացնում թափուր հաստիքի նկարագիր՝ համաձայն որոշման հավելվածով ներկայացրած պահանջների: Այստեղ ներկայացվում են այն պայմանները, որոնցով հետագայում աշխատանքային պայմանագիր է կնքվելու օտարերկրացու հետ: Նախարարությունն այդ նկարագիրն ուսումնասիրում է և փորձում գտնել համապատասխան աշխատակից իրենց կողմից կազմված գործազուրկների ցուցակներից: Եթե ի հայտ են գալիս համապատասխան մասնագետներ, ապա նրանք ուղղորդվում են թափուր աշխատատեղի նկարագիր ներկայացրած գործատուի մոտ՝ հարցազրույցի: Եթե չի համապատասխանում գործատուի կողմից ներկայացված չափանիշներին, ապա գործատուն տեղեկացնում է նախարարությանն այդ մասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացի հարցազրույցից՝ այլ պարտադիր պահանջներ, վերահսկողական լծակներ չկան՝ գործատուի կողմից տվյալ հաստիքին ՀՀ քաղաքացու թեկնածություն դիտարկելու համար, և, որպես կանոն, գործատուները տարբեր պատճառներով մերժում են նախարարության կողմից ուղարկված անձանց թեկնածությունը՝ նախապատվությունը տալով այն օտարերկրացուն, ում համար դիմել են աշխատանքի թույլտվություն ստանալու համար:

Որոշման Հավելված N 3-ի համաձայն՝ օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվություն ստանալու նպատակով գործատուն Նախարարություն է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- դիմում՝ օտարերկրացու համար աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին՝ համաձայն ձևի (դիմումը կարող է լրացվել տեղում կամ նախապես),

- օտարերկրացու անձնագիր (պարտադիր նոտարական վավերցմամբ հաստատված հայերեն թարգմանությամբ),

- օտարերկրացու ստացած մասնագիտական կրթության, որակավորման մասին փաստաթղթերը՝ հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով հաստատված (Ամփոփելով տարբեր երկրների փորձը՝ կարելի է առանձնացնել մասնագիտական կրթության մասին վկայականների ճանաչման երկու տարածված մոդելներին՝ նույնականացման հաստատմանը և ճանաչմանը: Նույնականացման հաստատման դեպքում շեշտադրումն արվում է ըստ բոլոր չափանիշների՝ առարկաների նույնություն, դասավանդման տևողության նույնականացում և այլն, սակայն այս մոտեցումը այժմ համարվում է հնացած, քանի որ նույնականացման դեպքում դժվարություններ առաջանում են անգամ նույն բուհի կողմից տրված երկու դիպլոմների նույնության հաստատման մեջ, եթե օրինակ ուսանողներից մեկը գերազանց է սովորել, մյուսը բավարար: Ճանաչման դեպքում խնդիրն ավելի հեշտ է, իրավասու մարմինն ընդամենը որոշում է, թե որքանով է արտասահմանում ստացած կրթության մասին վկայականը հնարավոր կիրառել տվյալ երկրում: Ներկայացնելով ՀՀ կրթության մասին փաստաթղթերի ճանաչման իրավական կարգավորումը՝ հեղինակն անդրադարձել է Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթության մասին որակավորումների ճանաչման մասին 1997թ. ընդունված Լիսաբոնի համաձայնագրին (այսուհետ՝ Լիսաբոնի համաձայնագիր), որին անդամակցել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Այս համաձայնագրի 4-րդ բաժնի 1-ին հոդվածը սահմանում է անդամ պետությունների պարտականությունը ճանաչել մյուս կողմի տարածքում տրված և ընդհանուր կրթական չափորոշիչներին համապատասխանող բարձրագույն որակավորման մասին վկայականները, բացառությամբ այն դեպքերի, երբ ապացուցված են էական տարբերությունները կրթության մասին վկայական տված պետության և ճանաչող պետության կրթական համակարգերի միջև) ¹

¹ Տե՛ս Մանե Կարապետյանի «Աշխատող միգրանտների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը թեմայով ատենախոսությունը» (2013):

- օտարերկրացու 3x4 չափի մեկ գունավոր լուսանկար
- պետական տուրքի վճարման անդորրագիր

Նախարարությունն աշխատանքի թույլտվություն տրամադրելու կամ մերժելու մասին որոշումը ընդունում է գործատուի կողմից վերը նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար սահմանված փաստաթղթերն ամբողջական չներկայացնելու և (կամ) դրանք թերություններով ներկայացնելու դեպքերում Նախարարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է գործատուին:

Աշխատանքի թույլտվությունը կամ աշխատանքի թույլտվության մերժման մասին գրավոր ծանուցումը գործատուին տրամադրվում է որոշումն ընդունելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Գործատուն աշխատանքի թույլտվություն տրամադրելու մասին տեղեկատվությունն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղեկացնում է օտարերկրացուն:

Գործատուն աշխատանքային պայմանագրի օրինակը, ինչպես նաև դրանից բխող ցանկացած փոփոխություն կամ համաձայնագիր, ուղարկում են Նախարարություն, որպեսզի պետությունը կարողանա հսկողություն իրականացնել ՀՀ գործատուի և օտարերկրացի աշխատողի միջև ստեղծված աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ:

Փորձը ցույց է տալիս, որ երբեմն կարող են ներկայացվել ակնհայտ անիմաստ և ոչ տրամաբանական պահանջներ, կապված օտարերկրացու կողմից ոչ վստահելի լինելու հարցում, մինչդեռ ՀՀ գործատուի համար իր աշխատանքների կազմակերպման հարցում այդ անձն ունի էական նշանակություն:

Հաշվի առնելով այն հանգանմանքը, որ ժամանակակից աշխարհում, ազատ տնտեսական հարաբերություններում շատ են լինում միջազգային փոխանակման աշխատանքները և համագործակցությունները, ինչպես նաև կարևորելով բիզնեսի ընդլայնման համար բարենպաստ դաշտի ստեղծումը, «Օտարերկացիների մասին» ՀՀ օրենքում կան նաև բացառություններ՝ օտարերկրացու հետ աշխատանքային հարաբերու-

թյուն սկսելու համար: Մասնավորապես առանց աշխատանքային թույլտվության ՀՀ-ում կարող են աշխատել՝

- ՀՀ մշտական և հատուկ կացության կարգավիճակ ունեցողները, օրենքով սահմանված դեպքերում նաև ՀՀ ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.
- ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, միջազգային կազմակերպությունների և դրանց ներկայացուցչությունների աշխատակիցների ընտանիքի անդամները՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա.
- մերձսահմանային շրջանների աշխատողները, ինչպես նաև կարճ ժամկետով ժամանող մշակութային և սպորտային մասնագիտություն ունեցող անձինք.
- օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հիմնադիրները, տնօրենները կամ լիազորված ներկայացուցիչները.
- օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունների աշխատակիցները՝ ՀՀ-ում տեղակայված այդ կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատելու նպատակով.
- օտարերկրյա առևտրային կազմակերպության կողմից իր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն առաքվող կամ օտարերկրյա առևտրային կազմակերպություններից գնված մեքենաները, սարքավորումները, հաստոցները տեղադրելու, վերանորոգելու և դրանք շահագործելու համար աշխատողներին որակավորելու նպատակով 6 ամսից ոչ ավել ժամկետով ժամանող օտարերկրյա մասնագետները.
- ՀՀ միջազգային պայմանագրերի հիման վրա ժամանող մասնագետները կամ այլ անձինք.
- ՀՀ ուսումնական հաստատություններում դասախոսություններ կարդալու նպատակով հրավիրված օտարերկրյա ուսումնական հաստատությունների դասախոսները.
- լրատվական գործունեություն իրականացնող օտարերկրյա կազմակերպությունների հավատարմագրված ներկայացուցիչները.

- փախստականի կարգավիճակ ունեցող, ՀՀ-ում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով.
- համապատասխան միջազգային պայմանագրերի հիման վրա արձակուրդների ժամանակ աշխատանքային փոխանակումների շրջանակներում աշխատանք կատարող ուսանողները:

Եթե անձը կարող է օգտվել այս բացառություններից, ապա պետք է գործատուին ներկայացնի համապատասխան հանգամանքը հիմնավորող փաստաթուղթը, որը գործատուն հանգամանքը կասկածի տակ դնելու կամ ընկերությունում անցկացվող ստուգումների շրջանակում կներկայացնի իրավասու պետական մարմին:

Հաշվի առնել օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի անկատարությունն ու բարդությունները, միջազգային փորձը պարբերաբար անհրաժեշտություն է առաջանում վերանայելու ընթացակարգը, դաշտում իրականացնել բարեփոխումներ, ուստի հաճախ է օրենսդիր մարմինը ներկայացնում փոփոխությունների նախագծեր, որոնց կարիքն առաջանում է ոլորտի կատարելագործման նպատակով:

Օրենքից բխող, բայց պրակտիկայում բարդություն ներկայացնող հարթություն է առաջանում նաև, երբ օտարերկրացի դատապարտյալների կամ կալանավորված անձանց պարագայում ազատ տեղաշարժման իրավունքը սահմանափակված է: Ստացվում է, որ անձը քրեակատարողական հիմնարկից դուրս գալիս անմիջապես չի կարող օգտնվել իր՝ Սահմանադրությամբ նախատեսված աշխատանքի ազատ ընտրության իրավունքից, քանի դեռ չի անցել աշխատանքի թույլվություն ստանալու ամբողջ ընթացակարգը: Այս պայմաններում որոշակի անհարմարություններ են առաջանում օտարերկրացի դատապարտյալների կամ կալանավորված անձանց համար: Ուստի նոր նախագծով նախատեսվում է հնարավորություն ընձեռել օտարերկրացի դատապարտյալներին կամ կալանավորված անձանց, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիներին աշխատանքով ապահովել առանց լրացուցիչ ընթացակարգերի: Այս համատեքստում հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիների, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիների համար աշխա-

տանքով ապահովելու հնարավորության ստեղծման անհրաժեշտություն է առաջանում²:

Քաղաքացիաիրավական հարաբերություններում օտարերկրացիների հետ աշխատանքներ կատարման, ծառայությունների մատուցման հարաբերություններն անթերի չեն: Մասնավորապես «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը նույնացնում է օտարերկրացու հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը քաղաքացիաիրավական պայմանագրի տեսակ համարվող ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի հետ: Ստացվում է, որ անկախ նրանից, որ ՀՀ օրենսդրությամբ առանձնացվում են աշխատանքային իրավահարաբերությունները, օտարերկրացիների վրա դա չի տարածվում, ուստի, անկախ պայմանագրի տեսակից, օտարերկրացու համար, յուրաքանչյուր դեպքում, պետք է ստանալ աշխատանքի թույլտվություն, իհարկե, բացառությամբ վերը նշված բացառությունների:

Աշխատանքային միգրացիայի խնդիրն այսօր միջազգային մասնավոր իրավունքի ամենաթերի կարգավորված ինստիտուտներից է, այն դեպքում, երբ աշխատանքային միգրացիայի ծավալները օրեցօր աճում են ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում՝ համապատասխանաբար բարձրացնելով վերջինիս ուսումնասիրության հրատապությունը և իրավական կարգավորման հնարավորինս ունիվերսալ լուծումների որոնումը: Առանձին գիտնականներ, կարևորելով աշխատանքային միգրացիայի իրավական կարգավորման խնդիրը, նույնիսկ առաջարկում են ընդունել միգրացիոն օրենսգիրք³:

Օտարերկրացիների հետ աշխատաքային հարաբերությունների կարգավորումը ոչ միայն ներպետական, այլև միջազգային իրավունքի և միջազգային հարաբերությունների համատեքստում տարածված հիմնախնդիրներից է: Հարցին կարելի է նաև անդրադառնալ միգրացիայի տեսակետից.

1. Միգրացիոն հոսքերը հանգեցնում են ընդունող երկրում գործազրկության աճի, աշխատավարձերի իջեցմանը և կյանքի պայման-

² Տե՛ս «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի անհրաժեշտության հիմնավորումը. <https://www.e-draft.am/projects/1630/justification>:

³ Տե՛ս **Трыканова С. А.**, Актуальные направления формирования новой модели политики РФ//Журнал Миграционное право. 2008. №4, էջ 20–22:

ների վատթարացմանը, քանի որ միգրանտները պատրաստ են աշխատել քիչ վարձատրությամբ:

2. Աշխատուժի միգրացիան թույլ է տալիս ընդունող պետությանը առանց ծախսերի կատարման օգտվել որակյալ, էժան և բարդություններ չառաջացնող աշխատուժից:
3. Միգրանտների հետ աշխատանքային հարաբերությունների ձևակերպման գործընթացը տարբերվում է քաղաքացիների հետ աշխատանքային հարաբերությունների կանոնակարգումից, առանձին դեպքերում օտարերկրյա աշխատուժի օգտագործումը ձեռնտու է գործատուներին, քանի որ այս դեպքում նրանք խուսափում են մի շարք բարդություններից՝ կապված աշխատանքի ընդունման և ազատման, աշխատանքային պայմանների ապահովման, աշխատանքային վեճերի լուծման և աշխատանքային այլ հարաբերությունների հետ:
4. Աշխատանքային միգրացիան իր ազդեցությունն է թողնում նաև միգրանտի քաղաքացիության երկրի տնտեսական իրավիճակի վրա: ՄԱԿ-ի 2013թ. տվյալների համաձայն՝ միգրանտների կողմից իրենց ընտանիքներին ուղարկվող գումարները տարեկան կտրվածքով կազմում են 100 միլիարդ դոլար⁴:

Գլոբալացման ժամանակաշրջանում աշխատանքային միգրացիան վերածվեց ամենալայն տարածում ունեցող երևույթներից մեկի, որի արդյունքում միջազգային հանրության՝ միջազգային կազմակերպությունների առաջնահերթ խնդիրներից մեկը դարձավ ոլորտի իրավական կարգավորումը: Այս տեսանկյունից հանդիսանալով այնպիսի միջազգային կազմակերպությունների անդամ, ինչպիսիք են Եվրոխորհուրդը, Միավորված ազգերի կազմակերպությունը (այսուհետ՝ ՄԱԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (այսուհետ՝ ԱՄԿ), Հայաստանի Հանրապետությունը միացավ միգրանտների աշխատանքը կարգավորող մի շարք միջազգային պայմանագրերի՝ դրանով իսկ պետական մակարդակով կարևորելով աշխատանքային միգրացիայի խնդիրը: Մասնավորապես՝ Զբաղվածության համար միգրացիայի մասին 1949թ. ընդունված ԱՄԿ թիվ 97 կոնվենցիան (այսուհետ՝ նաև ԱՄԿ թիվ 97 կոնվենցիա)

⁴ Տե՛ս Մանե Կարապետյանի «Աշխատող միգրանտների աշխատանքային իրավունքների պաշտպանությունը թեմայով ատենախոսությունը» (2013):

Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել միայն 2007թ-ին, կամ միայն 2010թ-ին է Հայաստանի Հանրապետությունը ստորագրել Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ աշխատող միգրանտների և նրանց ընտանիքի անդամների իրավական կարգավիճակի մասին համաձայնագիրը և այլն:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի գալ այն եզրակացության, որ աշխարհում օրեցօր կատարելագործվող աշխատանքային հարաբերություններով պայմանավորված, ՀՀ օրենսդիր և ոլորտի իրավակիրառ մարմինները ևս պետք է, նախապատվություն տալով ՀՀ քաղաքացիների գործազրկության տոկոսի կրճատմանը, հնարավորինս դյուրացնեն նաև օտարերկրացիների՝ ՀՀ-ում աշխատանքի թույլտվության կարգը, որն էական նշանակություն կունենա ՀՀ-ում աշխարհի ձևաչափով զարգացող աշխատանքային հարաբերությունների վրա:

ЮРИДИЧЕСКИЕ РЕГУЛИРОВАНИЕ ТРУДОВЫХ ОТНОШЕНИЙ ИНОСТРАНЦЕВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Тоноян Анжела Наириевна

преподаватель кафедры технических дисциплин

Колледжа Образовательного комплекса полиции РА, майор полиции

В последние годы, в связи с увеличением числа иностранцев в Армении, вопрос надлежащего регулирования трудовых отношений с иностранными государствами приобрел государственное значение, получил определенное правовое регулирование и решения.

Правовые механизмы урегулирования труда иностранцев в РА были определены Законом РА об иностранцах, принятом в декабре 2006 г и вошедшим в силу с февраля 2007 г., согласно которому для предоставления иностранцам разрешения на работу предусмотрена специальная процедура. Условно процедуру получения разрешения для иностранного работника можно разделить на два этапа:

1. Исследование вакансий и наблюдение
2. Наблюдение и предоставление разрешения иностранцу на конкретную работу.

Ключевые слова: *иностранец, работодатель, работник, работа, Трудовой кодекс, разрешение, миграция.*

LEGAL REGULATION OF LABOUR RELATIONS OF FOREIGNERS IN THE REPUBLIC OF ARMENIA

Tonoyan Anjela

Lecturer of the Chair of Technical disciplines

*of the Educational Complex of Police of the Republic of Armenia,
police major*

In recent years, due to the increase in the number of foreigners in Armenia, the issue of proper regulation of foreign labor relations has gained state importance, received some legal regulation and solutions.

The legal mechanisms for regulating the work of foreigners in the Republic of Armenia were established in 2006. Adopted in December 2007 The special law "On Foreigners", provides for a special procedure for issuing work permits to foreigners.

Conventionally, the procedure for obtaining a permit for a foreign employee can be divided into two stages:

1. vacancy research and observation,
2. observing and providing permission for a foreigner for a specific job.

Key words: *Foreigner, Employer, Employee, Job, Employment, Permission, Migration.*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 2021

Սրբագրիչներ՝ Ա. Հայրապետյան
Ռ. Մուսաեյան
Գ. Ռուսակովա
Համ. ձևավորող՝ Կ. Չալաբյան

Տպագրված է «ՎԱՌՄ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Տիգրան Մեծի 48, բն. 43